

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ■
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՀՏԴ 323:396:316.346.2
ԳՄԴ 66.74+60.54
Շ 212

Հեղինակներ՝
Գոհար Շահնազարյան
Զարուհի Ազնաուրյան
Լուսինե Սաղումյան
Խմբագիր՝ Մերի Հովհաննիսյան

**Քաղաքական կուսակցություններում և քաղաքական
նախաձեռնություններում կանանց ներկայացվածությունն ու
Շ 212 մասնակցությունը (գենդերային վերլուծություն)**
**Գ. Շահնազարյան.-Եր.։ «Կանանց ռեսուրսային կենտրոն»
ՀԿ, 2016. -192 էջ։**

Գրքում անդրադարձ է կատարվում քաղաքական կուսակցություններում և նախաձեռնություններում կանանց ներգրավվածությանն ու մասնակցությանը, Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությանն ուղղված մարտահրավերներին։ Հետազոտությունն իրականացվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կողմից։ Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի պարզելու քաղաքական կուսակցությունների և նախաձեռնությունների ներկայացված քաղաքականության և իրադրության գենդերային պատկերը, կանանց առաջխաղացմանը նպաստող հնարավորություններն ու դրանց վրա ազդող գործոնները։ Ներկա աշխատությունը հետաքրքիր իրողություններով ու փաստերով հարստացնելու համար իրականացվել է նաև դեպքի ուսումնասիրություն, որի քննության թիրախ է ընտրվել «Շամիրամ» կանանց քաղաքական կուսակցության կարճաժամկետ գործունեությունը։

ՀՏԴ 323:396:316.346.2
ԳՄԴ 66.74+60.54

**ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ
ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Հեղինակներ՝
Գոհար Շահնազարյան
Զարուհի Ազնաուրյան
Լուսինե Սաղումյան
Խմբագիր՝
Մերի Հովհաննիսյան
Զնավորումը՝
Լուսինե Թալալյանի
Թարգմանիչ՝
Հասմիկ Խալափյան
Հարցազրուցավարներ՝
Քնարիկ Մկրտչյան
Գայանե Հակոբյան



Սույն հետազոտությունն իրականացվել է «Կովկասի ակադեմիական շվեյցարական ցանցի» (ԿԱՇՑ) աջակցությամբ: ԿԱՇՑ-ը ծրագիր է, որի նպատակն է աջակցել Հարավային Կովկասում, մասնավորապես Վրաստանում և Հայաստանում, սոցիալական և հումանիտար գիտությունների զարգացմանը: Ծրագրի բազմաթույթ գործունեությունը նպաստում է երիտասարդ սերնդի տաղանդավոր գիտնականների ի հայտ բերելուն: Խոստովաբանությունը երիտասարդ հետազոտողները աջակցություն են ստանում հետազոտական ծրագրերի, կարողությունների զարգացման դասընթացների և կրթաթոշակների միջոցով: Ծրագիրը կարևորում է այն անհատների առաջնահայացումը, որոնք ԿԱՇՑ-ի աջակցությամբ ձեռք բերված փորձի շնորհիվ ավելի ակտիվ կերպով են ներգրավվում միջազգային տարբեր գիտական ցանցերում: ԿԱՇՑ ծրագիրը համակարգում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի միջֆակուլտետային ինստիտուտը (Interfaculty Institute for Central and Eastern Europe, IICEE), որը գործում է Ֆրիբուրգի համալսարանում (Շվեյցարիա): Այն ստեղծվել և աջակցություն է ստացել «Գեբերտ Ռուֆ Շտիֆտունգ» հիմնադրամի (Gebert Rüf Stiftung) կողմից:

Նյութում ներկայացված են հեղինակների կարծիքները և դատողությունները, որոնք կարող են չհամընկնել «Գեբերտ Ռուֆ Շտիֆտունգ» հիմնադրամի կամ Ֆրիբուրգի համալսարանի գաղափարներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	9
ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ	
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳԻՏԱԾՅՈՒՂ _____	17
ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՆԱՆՑ ՑԱԾՐ ՆԵՐԿԱՅԱՑԿԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ՈՐՈՇ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____	37
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ _____	55
ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ _____	69
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ _____	101
5.1. Հետազոտության մեթոդաբանությունը և հիմնավորումը _____	103

5.2. Քաղաքական կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների գեներային բնութագիրը _____	109
5.3. Գեներային դերերի մասին պատկերացումներն ու առաջնորդության գեներային ուղղվածությունը _____	114
5.4. Քաղաքական մասնակցության և քաղաքական ակտիվության գեներային բնութագիրը _____	127
5.5. Սոցիալական կապերը քաղաքական կառույցների ներսում _____	142
5.6. Քաղաքական մասնակցության և որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց հանդիպող մարտահրավերներն ու խոչընդոտները _____	149
5.7. Քաղաքական նպատակների գեներային առանձնահատկությունները _____	162
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ. «ՇԱՄԻՐԱՄ» ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԴԵՊԵԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ) _____	171
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ _____	181
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	186

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական կուսակցություններում ու քաղաքական նախա-
ծեռնություններում կանանց մասնակցության թեման արդիական է
որչ աշխարհում: Նշված իրողությունը կարևորվում է կանանց և տղա-
մարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների տե-
սանկյունից և պայմանավորված է համաշխարհային իրականության
մեջ պատերազմական մշակույթի փոփոխության անհրաժեշտությամբ:
Համոզմունք կա, որ որոշումների կայացման գործում կանանց ներ-
գրավվածությունը հնարավորություն է տալիս նպաստելու խաղաղա-
սիրական մշակույթի զարգացմանն ու ծավալմանը, ինչպես նաև սո-
ցիալական արդարության կայացման գործընթացին:

Հայաստանն անմասն չի մտում համաշխարհային խոսույթից,
ավելին՝ չի առանձնանում կանանց քաղաքական և հասարակական
խիստ ակտիվությամբ, ընդհակառակը, դասվում է այն երկրների շար-
քին, որտեղ հայրիշխանական առնական մշակույթը և ավտորիտար քա-
ղաքական ռեժիմը գրեթե բացառում են կանանց քաղաքական ակտիվ
մասնակցությունը: Հայաստանը, գտնվելով աշխարհաքաղաքական հե-
տաքրքիր տարածաշրջանում և քաղաքակրթական բախումների կիզա-
կետում, մշտապես կրում է գերտերությունների ազդեցությունները: Այս
տեսանկյունից գենդերային հիմնախնդիրները ևս որոշ առումով պայ-
մանավորված են ինչպես արտաքին, այնպես էլ ներերկրային մշակու-
թային առանձնահատկությունների բախումներով ու համադրումների
ազդեցություններով:

Արևմուտքի ազդեցության ներքո Հայաստանը մի շարք բարե-
փոխումներ է իրականացրել իրավական հարթության վրա՝ վավերաց-
նելով միջազգային և տարածաշրջանային մի շարք համաձայնագրեր,
որոնք նպաստավոր միջավայր են ստեղծում կանանց և տղամարդկանց

իրավունքների ու հնարավորությունների հավասարության համար: Միաժամանակ իրավական փաստաթղթերի պահանջների կիրարկումը թերի է, ինչն էլ երկրում այնպիսի իրավիճակի առաջացման նախադրյալ է դառնում, երբ կանանց մոտ նկատվում է երկրի քաղաքական և այլ ոլորտներում գործունեություն ծավալելու ցանկության բացակայություն (դեմոտիվացիա):

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի «Գեներային ճեղքվածքի գլոբալ զեկույցի» 2015 թվականի տվյալների՝ 145 երկրների շարքում քաղաքական տեսանկյունից Հայաստանը գտնվում է 125-րդ տեղում: Հայաստանի ներկայիս խորհրդարանում կա 13 կին պատգամավոր, գործադիր մարմնում՝ 3 նախարար, ոչ մի մարզպետ և քաղաքապետ ու միայն 18 գյուղապետ: Այս ցուցանիշները ակնհայտորեն արտացոլում են կանանց քաղաքական ներգրավվածության պատկերը՝ ահագանգելով ինդրի մասին:

Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության մասին տեղական և միջազգային հետազոտությունները բազմիցս առաջ են քաշել այն արգելքներն ու մարտահրավերները, որոնք խոչընդոտում են կանանց քաղաքական ներգրավվածությանը: Դրանք արմատավորված են և՛ մշակութային առանձնահատկությունների (գեներային կարծրատիպեր և հստակորեն սահմանված գեներային դերեր), մասնավորապես քաղաքական մշակույթի առանձնահատկությունների (կաշառակերություն, ոչ ֆորմալ հարաբերությունների գերակայություն, ոչ արդար և իրավական մեթոդների կիրառում), և՛ կանանց սոցիալ-հոգեբանական կարգավիճակի (ցածր ինքնագնահատական) մեջ:

Կատարված հետազոտությունները անդրադարձել են նաև ընտրական համակարգի առանձնահատկություններին՝ դիտարկելով դրանք գեներային տեսանկյունից (գեներային քվոտայի գործառնում, ինքնաբացարկների գեներային պատկեր և այլն):

Հետազոտությունների այս բազմազանության մեջ, սակայն, ավելի քիչ անդրադարձ է կատարվել քաղաքական կառույցներում կանանց

ներգրավվածությանը: Այնուամենայնիվ, հղում կատարելով միջազգային գիտական թեմատիկ քննարկումներին՝ քաղաքական կուսակցությունների և նախաձեռնությունների դերը բազմիցս է բարձրաձայնվել և՛ որպես կանանց քաղաքական մասնակցությունը խթանող, և՛ ընդհակառակը, կանանց առաջ հավելյալ արգելքներ առաջացնող գործոն:

Կարևորելով Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության և ներգրավվածության բազմակողմանի համապարփակ ուսումնասիրությունը, ինչպես նաև նպատակ ունենալով լրացնել թեմայի ուսումնասիրության շրջանակներում առկա հետազոտական բացթողումները՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության հետազոտական խումբն իր ուսումնասիրության թիրախն է դարձրել քաղաքական կուսակցություններում և նախաձեռնություններում կանանց ներգրավվածությունն ու մասնակցությունը:

Ամփոփելով թեմայի շուրջ կատարված ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև ներկայացնելով ներկա իրավիճակը՝ հետազոտությունը նպատակ ուներ պարզելու քաղաքական կուսակցությունների և նախաձեռնությունների ներկառույցային քաղաքականության և իրադրության գեներային պատկերը, կանանց առաջխաղացմանը նպաստող հնարավորություններն ու դրանց վրա ազդող գործոնները: Հետազոտությունը, հիմնվելով թեմային առնչվող տեղական և տարածաշրջանային ուսումնասիրությունների արդյունքների վրա, առաջ է քաշել մի շարք ենթադրություններ, որոնք էլ հիմք են հանդիսացել մեթոդաբանության և համապատասխան գործիքների ընտրության համար:

Գիրքը կազմված է հետևյալ տրամաբանությամբ. առաջին գլխում անդրադարձ է կատարվում թեմային առնչվող տեսություններին՝ ֆեմինիստական տեսանկյան առանձնահատուկ շեշտադրմամբ: Այնուհետև ներկայացվում են հետկոմունիստական երկրների, հաջորդաբար նաև Հայաստանի պատմական զարգացումները կանանց քա-

ղաքական մասնակցության համատեքստում, ինչն էլ երկրորդական փաստաթղթերի վերլուծության արդյունք է:

Չաջորդ գլխում ներկայացվում է հետազոտական մասը: Չետազոտական աշխատանքի գերակշռող մասը անդրադառնում է Չայաստանում գործունեություն ծավալող քաղաքական մի շարք կուսակցությունների և նախաձեռնությունների ներկառույցային իրադրությանը՝ փորձելով բացահայտել գենդերային առանձնահատկություններ: Նշված վերլուծությունները հիմնվում են քաղաքական կառույցների կին և տղամարդ ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցների արդյունքների վրա, որոնք հետաքրքիր բացահայտումների և նախկին հետազոտությունների արդյունքների վերահաստատման համադրություն են:

Ներկա աշխատությունը հետաքրքիր իրողություններով ու փաստերով հարստացնելու համար իրականացվել է նաև դեպքի ուսումնասիրություն, որի քննության թիրախ է ընտրվել «Շամիրամ» կանանց քաղաքական կուսակցության կարճաժամկետ գործունեությունը: Չնայած նշված կուսակցությունն այլևս քաղաքական թատերաբեմում չէ, այնուամենայնիվ հետաքրքիր նախադեպ է Չայաստանի Չանրապետության պատմության մեջ՝ որպես կանանց քաղաքական կուսակցություն, որի անցած ուղին ամփոփ ձևով ներկայացնում է այն խոչընդոտները, որոնց հանդիպել են և՛ քաղաքականապես ակտիվ կանայք, և՛ քաղաքական միավոր հանդիսացող կուսակցությունը: Նշված դեպքը արժեքավոր է նաև նրանով, որ համադրելով այն այժմյան իրականության հետ՝ հնարավոր է կանխատեսուհներ անել կանանց քաղաքական այլ կուսակցությունների ձևավորման պարագայում նրանց ճակատագրի մասին:

Չետազոտությունն իր բովանդակությամբ արժեքավոր ու համեստ ներդրում է Չայաստանում գենդերային ուսումնասիրությունների գիտական շտեմարանի համալրման գործում: Առաջ քաշելով նոր ու-

շագրավ բացահայտումներ՝ այն կարող է տեղեկատվական հետաքրքիր նյութ լինել հետսովետական ու հետկոմունիստական երկրների ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների համար՝ հիմք դառնալով նաև հետագա ուսումնասիրությունների համար:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ
ԳԻՏԱՃՅՈՒՂ**

Մինչև Նախորդ դարի 60-ական թվականները ֆեմինիզմը քաղաքական տեսություններում չէր քննարկվում: Սակայն արմատական ֆեմինիզմի զարգացմանը զուգընթաց քաղաքական տեսությունը ստիպված էր վերանայել Նան գենդերային հարցերը, ինչպես Նան քաղաքականության մեջ կանանց դերին առնչվող մոտեցումները: Ըստ հայտնի քաղաքագետ և հետազոտող Վիրջինիա Սապիրոյի՝ «Իսկ կանայք» հայտնի հարցը վերջապես բարձրացվեց քաղաքական վարքագծում և քաղաքական տեսության շրջանակներում¹: Քաղաքական վարքագծում նշված հարցը հանգեցրեց քաղաքական գործողությունների գենդերային հայեցակետերի խոր քննությանը և քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության մեխանիզմի որոնմանը²: Իսկ քաղաքական տեսության համար կանանց ներկայացվածության հարցը հետևյալն էր. «Չայտնի քաղաքական փիլիսոփաներ Արիստոտելը, Պլատոնը, Յոբսը, Լոբը, Ռուսոն, Միլը և Մարքսը ի՞նչ են ասել և ի՞նչ չեն ասել կանանց մասին»³:

Նախորդ դարի 70-80-ական թվականներին զարգացում ապրող ֆեմինիստական քաղաքական տեսությունը և քաղաքական տեսության ֆեմինիստ քննադատները ուսումնասիրում են սոցիալական և քաղաքական ինստիտուտներում գենդերային դերերի և հարաբերությունների ընդգրկման հարցերը, մյուս կողմից՝ քաղաքական հաստատությունների՝ հասարակության մեջ գենդերային դերերի բաշխման վրա ունեցած ազդեցությունները:

Ֆեմինիստական քաղաքական տեսությունը կրում է քաղաքական տեսությունների և ֆեմինիզմի տարբեր ճյուղերի (լիբերալ, արմատական, սոցիալիստական, հետմոդեռնիստական) փոխազդեցությունները: Ֆեմինիստական քաղաքական տեսությունը համակցում է գիտելիքներ տարբեր՝ քաղաքագիտության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության, գենդերային ուսումնասիրությունների և մարդաբանության բնագավառներից: Ֆեմինիստ քննադատները կամ

1. Phillips A. (1998), *Feminism and Politics*. Oxford University Press, p. 67.

2. Նույն տեղում:

3. Նույն տեղում:

վերագնահատում են դասական քաղաքական տեսությունների հասկացությունները՝ գեղեցիկացնելով ուսումնասիրությունների արդյունքները համեմատելով այդ տեսությունների հետ, կամ վերակառուցում են դասական տեսությունները ֆեմինիստական տեսանկյունից: Ինչպես իր հետազոտություններում ցույց է տալիս Վ. Սապիրոն, կանանց ուսումնասիրությունները բացահայտել են թերություններ և բացթողումներ հիմնարարական քաղաքական տեսությունների և հասկացությունների ոլորտներում⁴: Ըստ Վ. Սապիրոյի՝ «կանանց վերաբերյալ հետազոտությունները թույլ են տալիս ժողովրդավարական տեսություններում և ուսումնասիրություններում բացահայտել լուրջ խնդիրներ, որոնք անմիջականորեն առնչվում են ներկայացվածության բարձրացման հարցին»⁵: Չարկ է նշել նաև, որ քաղաքագիտության ֆեմինիստական քննադատությունը հետազոտությունների նոր լեզվի և առհասարակ նոր խոսույթի (դիսկուրսի) հիմք է դրել:

Ֆեմինիստ տեսաբանները վիճարկեցին արդարության և բարոյականության ըմբռնումները, քաղաքական ինքնության բնույթը, ինչպես նաև իշխանության հարցերը քաղաքական գիտելիքների ստեղծման գործում⁶: Ըստ քաղաքական տեսության ֆեմինիստ քննադատների պնդման՝ սոցիալական կյանքի մասնավոր ոլորտում արդարադատության հասկացությունները պետք է կիրառվեն հավասար հիմունքներով, ճիշտ այնպես, ինչպես դրանք կիրառվում են հանրային ոլորտում և քաղաքացիական հասարակության շրջանակներում⁷:

Քաղաքական տեսության ֆեմինիստական քննադատությունը նաև ընդգծում է այն փաստը, որ տղամարդկանց իշխանությունը կանանց դուրս է թողնում քաղաքականությունից, «քանի որ կանայք չունեն հանրային իշխանություն, չեն պատկանում քաղաքական էլիտաներին և կառավարական հաստատություններում չունեն ազդեցիկ դիրքեր»⁸: Մինևույն ժամանակ քաղաքական տեսության ֆեմինիստական

տական քննադատությունը ոչ միայն վերանայում կամ քննադատում է քաղաքական տեսության հիմնարար հասկացությունները, այլև առաջարկում է իր իսկ մոտեցումը: Չաշվի առնելով այն ենթադրությունը, որ քաղաքագիտության մեջ տղամարդիկ դիտարկվում են իբրև հանրային, այսինքն՝ քաղաքական գործիչներ, իսկ կանայք՝ իբրև մասնավոր, ասել է թե՛ ոչ քաղաքական գործիչներ, գիտական ճյուղը գեղեցիկ իբրև հիմնահարց չի դիտարկել մինչ այն պահը, երբ «կանանց թիվը գիտական բնագավառում սկսել է աճել, և բնագավառից դուրս տեղի ունեցող իրադարձությունները ստիպել են վերաքննել այն ենթադրությունը, ըստ որի՝ կանայք «քաղաքական» չեն»⁹:

Մասնավորապես ֆեմինիստական քննադատության արդյունքում մշակվել է բարոյագիտության նոր տեսություն¹⁰:

Երիկա Թաքերը տարբերակում է ֆեմինիստական քաղաքական տեսության մեթոդաբանական հետևյալ կետերը¹¹:

1. ուժային, այդ թվում՝ գեղեցիկացնել, ռասայական, դասակարգային, մշակութային հարաբերությունների առնչությունները սոցիալական այլ ինստիտուտներին,
2. քաղաքական փիլիսոփայության և նրա նորմերի ու տեսությունների պատմության քննադատությունը,
3. էսենցիալիզմի, ինչպես նաև սոցիալական հասկացությունների անփոփոխելի լինելու գաղափարի մերժումը,
4. անհատական փորձի վրա ուշադրություն դարձնելը կամ այն քննադատաբար ընկալելը:

Թեև քաղաքական տեսության ֆեմինիստական քննադատությունը որպես գիտական ճյուղ առաջացել է 1960-ական թվականներին, այնուամենայնիվ առաջին լիբերալ ֆեմինիստների աշխատանքներում կարելի է գտնել քննադատության վաղ փորձեր դեռևս 17-րդ դարի վերջին: Արևմուտքի առաջին հայտնի ֆեմինիստ Մերի Աստելլը (1666-1731) առաջիններից մեկն էր, ով քննադատեց այն գաղափարը, ըստ

4. Phillips A. (1998), *Feminism and Politics*. Oxford University Press, p. 67.

5. Նույն տեղում, էջ 185:

6. Ritter G., Mellow N. (2000), *The State of Gender Studies in Political Science*. The AN NALS of the American Academy of Political and Social Science, Vol. 571, # 1.

7. Նույն տեղում:

8. Squires J. (2013), *Gender in Political Theory*. Wiley, Polity Press.

9. Tolleson-Rinehart S., Carrol S. J. (2006), *Far from Ideal. The Gender Politics of Political Science*, Vol. 100, N 4.

10. Նույն տեղում:

11. Tucker E. (2014), *Feminist Political Theory*. The Encyclopedia of Political Thought (published online on 15 SEP 2014).

որի՝ բանականությունը բնորոշ է միայն տղամարդկանց¹²: Մ. Աստելի կարծիքով՝ կանայք և տղամարդիկ ունեն միևնույն ունակություններն ու բանականությունը, ուստի պետք է ունենան նաև հավասար կրթության իրավունքներ:

Հարկ է նշել, որ 18-րդ դարում կանանց քաղաքական իրավունքների պաշտպանների շարքերում կային նաև տղամարդիկ: Օրինակ՝ ֆրանսիացի փիլիսոփա Կոնդորսյեն պնդում էր, որ կանայք պետք է ունենան տղամարդկանց հավասար կրթության և քաղաքական իրավունքներ, և անհեթեթություն է կանանց մուտքը քաղաքականություն բացառել այն պատճառաբանությամբ, որ նրանք ունեն դաշտանային ցիկլ կամ հղի են: Նման մտքեր արտահայտել է նաև գերմանացի գրող և մտավորական Թեոդոր Ֆոն Հիփփելը: Վերջինիս պնդմամբ՝ կրթված տղամարդիկ պետք է դառնան կանանց ազատագրման և քաղաքական իրավունքների պաշտպաններ:

Ավանդական քաղաքական տեսության ամենահայտնի և ազդեցիկ քննադատներն են Հաննա Արենդտը, Նենսի Հարթսոքը, Նենսի Ջ. Հիրչմանը և Զարոլ Գիլիգանը:

Հ. Արենդտն առաջարկել է կիրառել նոր մոտեցումներ այնպիսի հասկացությունների դեպքում, ինչպիսիք են ժողովրդավարական որոշումների կայացումը, ինքնության քաղաքականությունը և քաղաքական դատողությունը¹³: Ըստ Ն. Հարթսոքի տեսության և նրա կողմից մշակված տեսակետի՝ անհավասար իշխանությունը միշտ կստեղծի տարբեր գիտելիքներ տղամարդկանց և կանանց մասին¹⁴:

Ըստ Ն.Հիրչմանի՝ լիբերալիզմն անտեսում է ֆեմինիստական տեսակետը¹⁵: Նրա հիմնական փաստարկն այն է, որ լիբերալ քաղաքական միտքը անձին դիտարկում է գերազանցապես տղամարդու տեսանկյունից¹⁶: Լիբերալիզմը գրավում է տղամարդկանց, քանի որ այն,

բացառելով կնոջ տեսակետը, արտացոլում է միայն տղամարդկանց տեսակետը: Ն. Հիրչմանի հիմնական պնդումն այն է, որ լիբերալիզմի ներքո զարգացած ինքնության և տղամարդու ինքնության միջև գոյություն ունի որոշակի հարաբերակցություն:

Սոցիալական հոգեբան Զ. Գիլիգանը լայնորեն քննադատել է հոգեբանության ոլորտում տարածված բարոյագիտական տեսությունները, որոնք «ապացուցում են», որ տղամարդիկ ավելի բարոյական են, քան կանայք: Իր հետազոտությունների շնորհիվ Զ. Գիլիգանը բացահայտել է, որ կանայք և տղամարդիկ ունեն բարոյագիտական տարբեր ընկալումներ, ընդ որում՝ կանանց բարոյական նորմերն առավելապես առնչվում են *խնամքին*, միջոցառումներին և *արդարությանը*¹⁷:

Գենդերային դերերը, գաղափարախոսությունը և քաղաքական հանձնառությունը սոցիալական և քաղաքական գիտությունների ֆեմինիստական քննադատության զարգացմանը զուգընթաց դառնում են հետաքրքրության առարկա: Ըստ ֆեմինիստ սոցիոլոգների՝ բոլոր ինստիտուտները գենդերականացված բնույթ են կրում: Ֆեմինիստ քաղաքագետները պնդում են, որ «քաղաքականության ոչ մի ոլորտ հնարավոր չէ հասկանալ՝ առանց ըմբռնելու այն ուղիները, որոնցով գենդերն ազդում է հիմքում ընկած ենթադրությունների և դիսամիկայի վրա»¹⁸:

Ըստ սոցիոլոգ Ջոան Աբերի՝ գենդերը գործընթացների, պրակտիկայի, պատկերների, գաղափարախոսությունների և դրանց մեջ իշխանության բաշխման անխուսափելի մաս է կազմում¹⁹: Զաղաքագիտությունը մշտապես արտացոլել է ընդհանուր քաղաքական մշակույթը՝ ազդեցություն ունենալով կանանց և տղամարդկանց դերերի նկատմամբ հասարակական վերաբերմունքի և ընկալումների վրա: Ինչպես նշել են Սյու Թոլլեսոն-Ռայնհարթը և Սյուզան Զարոլը, «քաղաքական գիտությունն իր գլխավոր հասկացությունները, մասնավորապես «իշխանությունը» և «պետությունը», կառուցել է հանրային շուրջ

12. Bryson V. (2003), Feminist Political Theory: and Introduction. Palgrave Macmillan.
13. Ritter G., Mellow N.(2000), The State of Gender Studies in Political Science. The AN NALS of the American Academy of Political and Social Science, Vol. 571, # 1.
14. Նույն տեղում:
15. Hirschmann N. (1989), Freedom, Recognition, and Obligation: A Feminist Approach to Political Theory. American Political Science Review, Vol. 83, Issue 04.
16. Sinoply R. C., Hirschmann N. J. (1991), Feminism and Liberal Theory. American Political Science Review, Vol. 85. Issue 01.

17. Ritter G., Mellow N. (2000), The State of Gender Studies in Political Science. The AN NALS of the American Academy of Political and Social Science, Vol. 571, # 1.
18. Tolleson-Rinehart S., Carrol S.J. (2006), Far from Ideal. The Gender Politics of Political Science, Vol. 100, N 4.
19. Նույն տեղում:

ընկալումներում և հասարակության հետ մեկտեղ սահմանել է «կին» և «տղամարդ» հասկացությունների նշանակությունները մասնավոր և հանրային ոլորտներում»²⁰:

Ինչպես նշվեց, թեև քաղաքական տեսության ֆեմինիստական վաղ քննադատության կարելի է հանդիպել դեռևս 17-րդ դարում: Յիմ-նարար քաղաքական տեսության շրջանակներում ֆեմինիստական գործերի թիվը մեծ է: Զննարկվել են այնպիսի հարցեր, որոնց թվում են՝ հայրիշխանությունը, տղամարդկանց գերիշխանությունը ղեկավար դերերում և լեզվի կառավարությունը: Յարկ է նկատել, որ քաղաքական տեսաբանները իշխանության և կառավարության հարցերը ավելի քան երկու հազարամյակ քննարկման են արժանացրել, ընդ որում՝ հիմնականում հարուստ-աղքատ, տեր-ծառա, կառավարություն-քաղաքացի, Էլիտա-զանգված համատեքստերում՝ երբևէ չանդրադառնալով կանանց և տղամարդկանց միջև իշխանության հարցին²¹:

Փաստորեն՝ ֆեմինիստական տեսությունը կասկածի տակ է դրել հանրային-մասնավոր երկակիությունը, որը դարեր շարունակ ձևավորել է իշխանական հարաբերությունները, իսկ ֆեմինիստական տեսությունը՝ ապակառուցել իշխանության պատկերացումները «սեռի», «սեռականության», «սեռական ինքնության», «գենդերային կարծրատիպերի», «գենդերային սիմվոլիկայի» և գենդերային տեսության մի շարք այլ հասկացություններում²²:

Ըստ Զարոլ Փաթմանի՝ քաղաքական տեսությունը երբեք չի ճանաչել գենդերային իշխանությունը որպես քաղաքական իշխանություն և լրջորեն չի վերաբերվել ֆեմինիստական այն տեսություններին, որոնք վիճարկում են հայրիշխանության սկզբունքների վրա հիմնված կառավարության օրինականությունը: Ավելին՝ Զ. Փաթմանի կարծիքով՝ կանայք, կանացիությունը և կանանց մարմինները ներկայացնում են այն ամենը, ինչը կապված է մասնավոր կյանքի, այլ ոչ թե հանրա-

յինի հետ: Այս պատճառաբանությամբ կանայք չեն կարող զարգացնել քաղաքական բարոյագիտություն՝ ի տարբերություն տղամարդկանց, որոնք ունեն քաղաքացի լինելու համար անհրաժեշտ բոլոր կարողությունները: Մասնավոր-հանրայինի այս երկակիությունը առանցքային նշանակություն ունի հատկապես ֆեմինիստական շարժման համար²³: Ըստ Զ. Փաթմանի, «թեև որոշ ֆեմինիստներ երկակիությանը վերաբերվում են իբրև համամարդկային, տրանսպատմական և տրանսմալուսային առանձնահատկության, ֆեմինիստական քննադատությունը առաջին հերթին ուղղված է լիբերալ տեսություններում և պրակտիկայում հանրային ու մասնավոր ոլորտների բաժանմանը և դրանց՝ իբրև հակադրված ոլորտների ներկայացմանը»²⁴:

Ժողովրդավարական հասարակություն ստեղծելու համար անհրաժեշտ է ապակառուցել «առնականություն» և «կանացիություն» հասկացությունները: Ինչպես նշում է Զ. Փաթմանը, կանանց և տղամարդկանց ինքնությունները «այժմ կանգնած են դեմ առ դեմ և բանականություն-ցանկություն հայրիշխանական երկատման բազմակողմանի արտահայտության մաս են կազմում»²⁵: Սակայն, ըստ Նրա, քաղաքական տեսության ամենակարևոր և դժվարագույն խնդիրները դեռևս մնում են առնական և կանացի ինքնությունների հավասարաչափ ներգրավումները քաղաքական ոլորտ, քաղաքական կյանքում սեռերի երկակիության հաղթահարումը և մեկը մյուսին հակադրումը:

Արիստոտելից սկսած՝ քաղաքական փիլիսոփայությունն ընդհանուր առմամբ մշտապես կենտրոնացել է հանրային ոլորտի վրա՝ բացառելով մասնավոր ոլորտը, որտեղ կանայք գերիշխում են: Սակայն մասնավոր ոլորտը հայրիշխանության ներքո է ձևավորվել, և կենցաղում ևս կանայք ունեն երկրորդային և հնազանդվողի դեր: Ինչպես հետագայում բացահայտեցին ֆեմինիստական շարժումները, մասնավոր կյանքում մշտապես տիրել է իշխանության անհավասար բաժանում, կանանց վերահսկում և նրանց հանդեպ բռնություն: Զաղաքական տե-

20. Tolleson-Rinehart S., Carrol S. J. (2006), Far from Ideal. The Gender Politics of Political Science, Vol. 100, N 4.

21. Pateman C. (1980), The Disorder of Women. Stanford University Press.

22. Hawkesworth M. (2010), From Constitutive Outside to the Political of Extinction: Critical Race Theory, Feminist Theory, and Political Theory. Political Research Quarterly, 63 (3).

23. Pateman C. (1980), The Disorder of Women. Stanford University Press, p. 119.

24. Նույն տեղում:

25. Նույն տեղում:

սուբյեկտիվության ֆեմինիստական քննադատությունը պնդում է, որ հայրիշխանական համակարգում մասնավորը միշտ հիմնված կլինի *քաղաքական* անհավասարությունների վրա²⁶. «Հանրային ոլորտում, որտեղ կանայք տեղ չունեն, տղամարդիկ են սահմանում իրենց հանրային և մասնավոր իշխանության պայմանները: Կանայք բռնի կերպով և իրավական առումով դուրս են թողնվել հանրային ոլորտից: Նրանք չեն կարողացել քվեարկել, ընդունվել բարձրագույն կրթական մի շարք հաստատություններ կամ ծառայել ռազմական հաստատություններում: Կանայք դուրս են մնացել քաղաքական մասնակցությունից այն օրենքներով, որոնց մշակմանը չեն մասնակցել, կամ որոնց համար նրանք չեն քվեարկել, սակայն նշված օրենքներն ամրապնդել են նրանց անհավասարությունը քվեարկության, ամուսնալուծության և սեփականության իրավունքի հարցերում»²⁷:

Ը. Փաթմանը նաև քննադատության է ենթարկում *սոցիալական պայմանագրի* տեսությունը՝ այն դիտարկելով իբրև բացառապես եղբայրական համաձայնություն և առնականության հասարակարգ: Սոցիալական պայմանագրի տեսության հիմնական դասակարգումները, ինչպես օրինակ՝ «անհատ», «հասարակություն», «քաղաքացիական հասարակություն» հասկացությունները, սահմանվել են՝ ելնելով քաղաքացիական հասարակության և սոցիալական պայմանագրի հայրիշխանական ընկալումներից: Ուստի Ը. Փաթմանը պնդում է, որ քանի դեռ սոցիալական պայմանագիրը հայրիշխանական ակտ է, այն կբացառի կանանց մուտքն այդ գործընթաց և հետևաբար թույլ չի տա նրանց տեղ զբաղեցնել քաղաքացիական հասարակության մեջ:

Ըստ Ը. Փաթմանի՝ «սոցիալական պայմանագրի խնդիրներից մեկն այն է, թե ով է կազմում այդ պայմանագիրը...: Կանայք որևէ մասնակցություն չունեն այդ գործընթացին, և իբրև բնական սուբյեկտներ՝ նրանք չեն տիրապետում անհրաժեշտ կարողություններին: Այս պատմության մեջ «անհատները» տղամարդիկ են»²⁸:

26. **Tucker E.** (2014), *Feminist Political Theory*. The Encyclopedia of Political Thought (published online on 15 SEP 2014).

27. Նույն տեղում:

28. **Pateman C.** (1980), *The Disorder of Women*. Stanford University Press, p. 119.

Ալնհայտ է, որ ֆեմինիզմի խնդիրը և քաղաքական տեսությունը խիստ փոխկապակցված են քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացներում: Ինչպես նշում է Ը. Փաթմանը, «քաղաքացիական հասարակությունը նոր պայմանագրով ստեղծելու պատմության մեջ կանայք ներկայանում են սոցիալական նոր հասարակարգում իբրև մասնավոր ոլորտի բնակիչներ: Չնայած վերջինս քաղաքացիական հասարակության մաս է, այնուամենայնիվ տարանջատված է ազատության, հավասարության, իրավունքների, պայմանագրի, շահերի և քաղաքացիության հանրային աշխարհից: Այլ կերպ ասած՝ կանայք, ի տարբերություն տղամարդկանց, ներգրավվում են քաղաքացիական կարգ այլ կերպ»²⁹: Կանանց մասնավորի և տղամարդկանց հանրայինի հետ զուգակցումն ու ընկալումները բխում են դասական սոցիալական պայմանագրի տեսություններից, որոնցում միայն տղամարդիկ են ընկալվում իբրև ազատ և հավասար էակներ: Ըստ Ը. Փաթմանի՝ սոցիալական պայմանագրերը սեռերի միջև տարբերությունները որակել են որպես քաղաքական տարբերություններ. տղամարդկանց դիտարկել են իբրև բնությամբ ազատ էակներ, իսկ կանանց՝ իբրև բնությամբ հնազանդվողներ: Այսպիսով՝ երկար ժամանակ սոցիալական պայմանագիրն իր բնույթով «առնական էր» ու բացառող, և միայն ֆեմինիստական քննադատությունների շնորհիվ հնարավոր դարձավ վերաշարադրել սոցիալական պայմանագրի տեսությունը՝ այն ավելի ընդգրկուն և անկողմնակալ դարձնելու համար:

Ջուդիթ Սքուայրսն իր «Գենդերը քաղաքական տեսության մեջ» գրքում գրում է, որ քաղաքական տեսության մեջ գենդերային մոտեցումներն ունենում են նշանակություն պարզապես գենդերականացնել այն հասկացությունները, որոնք երկար ժամանակ ունեցել են գենդերային չեզոքություն, այլ նաև բացահայտել հիմնարար քաղաքական տեսության խիստ գենդերականացված բնույթը³⁰:

Ջ. Սքուայրսը բարձրացնում է կարևոր մի հարց՝ նշելով, որ քաղաքականությունը «ոչ միայն տիրապետող ձևով ընդդիմացել է կա-

29. **Pateman C.** (1980), *The Disorder of Women*. Stanford University Press, p. 119.

30. **Squires J.** (2013), *Gender in Political Theory*. Wiley.

նանց, նրանց շահերի ու տեսակետների ներգրավմանը», այլ նաև կանանց գործունեությանը քաղաքական որակում չի տվել: Ըստ Ջ. Սքուայրսի՝ քաղաքական տեսության ֆեմինիստական վերանայումը և քննադատությունը ոչ միայն կանանց ինքնության տեսականացման նոր հորիզոններ բացեցին, այլ նաև ապակառուցեցին տղամարդկանց սուբյեկտիվությունն ու ինքնությունը քաղաքական ոլորտում:

Գենդեր-քաղաքականություն կապը բնութագրելու համար հեղինակը տարբերակում է երեք մոտեցում՝ *ներառում*, *հակադրում* և *տեղահանում*: «Ներառում» մոտեցման հիմնական առանցքն այն է, որ կանայք դուրս են թողնվել քաղաքական ոլորտից, և միջոցներ պետք է ձեռնարկվեն նրանց քաղաքականության մեջ ներգրավելու համար: Այս դիրքորոշմանը մեծ մասամբ կողմ են լիբերալ ֆեմինիստները: Նրանք, ովքեր քարոզում են «հակադրում» ռազմավարությունը, պնդում են, որ «քաղաքական» եզրույթը պետք է լինի առավել բաց կանանց դիրքորոշումների և տեսակետների նկատմամբ: Այս դիրքորոշմանն էլ հիմնականում կողմ են արմատական ֆեմինիստները: Իսկ «տեղահանում» մոտեցումը ձգտում է «ապակայունացնել ներառման և հակադրման ռազմավարությունների միջև ակնհայտ տարածայնությունները»³¹:

Լիբերալիզմի և վաղ քաղաքական տեսության իր քննադատության մեջ Զ. Փաթմանը նշում է, որ «բանականություն» և «բանական մարդ» հասկացությունների զարգացմանը զուգընթաց «կանանց սկսեցին ընկալել իբրև խառնաշփոթի աղբյուր, որովհետև նրանց էությունը կամ բնույթն այնպիսին է, որ անխուսափելիորեն նրանց դրդում է ունենալ խանգարող ազդեցություն սոցիալական ու քաղաքական կյանքում: Անկանոնությունը հենց կանանց մեջ է, նրանց բարոյականության մեջ, ինչը կարող է հանգեցնել պետության ոչնչացմանը: Ավելին՝ կանանց այս սպառնալիքը էլ ավելի խնդրահարույց է դառնում՝ հաշվի առնելով այն տեղը կամ սոցիալական ոլորտը, որի համար նրանք առավել հարմար են իրենց բնույթով, էությամբ՝ ընտանիքը»³²:

Սյուզան Բուրբեն ու Ջին Գրոսսհոլցը տարբերակում են քաղա-

31. **Squires J.** (2013), *Gender in Political Theory*. Wiley:

32. **Pateman C.** (1980), *The Disorder of Women*. Stanford University Press, p. 119.

քականության մեջ կանանց մասնակցության աղավաղման չորս կատեգորիա³³: Առաջին կատեգորիան ներառում է կանանց քաղաքական հատկանիշների, վերաբերմունքի և վարքի խեղաթյուրումները գրականության մեջ: Երկրորդ կատեգորիան վերաբերում է տղամարդկանց գերիշխանությանը և այն ենթադրությանը, ըստ որի՝ տղամարդիկ պետք է զբաղեցնեն գերիշխող քաղաքական դերեր՝ վերահսկելով քաղաքական որոշումները: Երրորդ կատեգորիան փոխկապակցված է երկրորդին և վերաբերում է առնականությանը վերագրվող բնութագրին, ինչպես օրինակ՝ ագրեսիվության, մրցակցային լինելու և ինքնավստահության՝ իբրև քաղաքական վարքի նորմ ընդունելուն:

Ինչպես նշում են Ս. Բուրբեն ու Ջ. Գրոսսհոլցը, «ռացիոնալ քաղաքական վարքագիծը սահմանվում է տղամարդկանց օրինակով: Այն սահմանվում է տղամարդկանց արժեքների արտահայտությամբ, մինչդեռ անտրամաբանությունը սահմանվում է կանացի արժեքների արտահայտությամբ»: Իսկ աղավաղումների չորրորդ կատեգորիան կազմում են այն ենթադրությունները, որոնց համաձայն՝ քաղաքական կյանքում կանանց ոչ լիարժեք ներկայացվածությունը եական է հասարակության «նորմալ» գործունեության համար³⁴:

Մեր հետազոտության նպատակներից էլնելով՝ կարևոր ենք համարում անդրադառնալ քաղաքական տեսության ճյուղերից մեկին՝ *ասերիկյան քաղաքականությանը*: Քաղաքական տեսության այս ճյուղն ուսումնասիրում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ գենդերը և քվեարկության վարքը, սոցիալական քաղաքականությունը և գենդերը, թեկնածու ընտրելու գործընթացները և օրենսդիր մարմնի քաղաքականությունը: 1960-ական թվականներից ի վեր այս ճյուղը հիմնականում կենտրոնացած է եղել քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց ոճի, վարքագծի ու կարողությունների ուսումնասիրության վրա³⁵: Ամերիկյան քաղաքականության ֆեմինիստ գիտնականների հիմնական հարցը հետևյալն է՝ *ինչպես, երբ և ինչու* են կանայք ու տղա-

33. **Phillips A.** (1998), *Feminism and Politics*. Oxford University Press.

34. Նույն տեղում:

35. **Ritter G., Mellow N.** (2000), *The State of Gender Studies in Political Science*. The ANALS of the American Academy of Political and Social Science, Vol. 571, # 1.

մարդիկ տարբերվում միմյանցից իրենց քաղաքական մոտեցումներով և վարքով:

Գենդերային ուսումնասիրությունների ժամանակակից տեսություններից մեկը՝ *գարգացման տեսությունը*, առաջարկում է քաղաքականության մեջ գենդերային ճեղքվածքների վերաբերյալ իր մեկնաբանությունները: Չարգացման տեսության հիմնական գաղափարն այն ենթադրությունն է, ըստ որի՝ ժամանակակից հասարակության մեջ գենդերային դերերի բաժանումը չի ստեղծում բարենպաստ պայմաններ, որպեսզի կանայք մուտք գործեն քաղաքականություն³⁶: Ռոնալդ Ինգլեհարթն ու Փիլպա Նորրիսը (2000) տարբերակում են գարգացման տեսության երեք հիմնական կետեր, որոնք թույլ կտան բացատրել կանանց և տղամարդկանց քաղաքական վարքի և վերաբերմունքի գենդերային տարբերությունները.

1. հասարակությունների միջև տարբերությունները կախված են քաղաքական և տնտեսական զարգացվածության մակարդակից,

2. հասարակությունների միջև կան սերնդակցային տարբերություններ,

3. հասարակությունների միջև առկա են կառուցվածքային և մշակութային գործոններից կախված տարբերություններ³⁷:

Ի տարբերություն այլ հեղինակների՝ Ռ. Ինգլեհարթն ու Փ. Նորրիսը նշում են, որ քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության մեջ փոփոխությունը որոշվում է հետմատերիալիստական արժեքների առաջացմամբ և ֆեմինիստական շարժման ծագմամբ, ինչն էլ նշանակություն ունեցավ ֆեմինիստական ինքնության և գիտակցության զարգացման գործում³⁸:

Չնայած ֆեմինիստ բննադատների և գենդերային վերլուծաբանների լայնածավալ աշխատանքին՝ քաղաքական տեսությունը դեռևս հայրիշխանական և պահպանողական գիտական ճյուղ է: Գրեթե չեն Ռիթթերը և Նիթոլ Մելլոն իրենց «Գենդերային հետազոտությունները

քաղաքագիտության մեջ» հոդվածում գրում են, որ «չնայած գենդերային հարցերի ուղղությամբ բարձր որակի աշխատանք է արվում քաղաքագիտության մեջ, այդ աշխատանքի ազդեցությունը գիտական ճյուղի վրա փոքրածավալ է: Պատճառներից մեկը կարող է լինել այն, որ գենդերը դժվարությամբ է ընդունվում որպես վերլուծության հիմնավոր առարկա»³⁹:

Գենդերային ուսումնասիրությունները պատշաճ ձևով չեն ներկայացված քաղաքական տեսություններում: Հիմնական պատճառները, ըստ Գ. Ռիթթերի ու Ն. Մելլոյի, երկուսն են.

1. քաղաքական տեսությունների դիմադրությունը գենդերը որպես վերլուծության հիմնավոր առարկա ներկայացնելու հարցում,

2. քաղաքական տեսության կառուցվածքը և նրա ստորաբաժանումները այնպիսի ենթաճյուղերով ներկայացնելը, որոնք շատ հաճախ անտեսում են միմյանց աշխատանքները⁴⁰:

Քաղաքագիտության մեջ կանանց ներկայացվածության առումով փոփոխություն տեղի ունեցավ 1960-ականներից մինչև 1980-ական թվականները: «1967-1968 թվականներին կանանց դոկտորական աստիճանի շնորհումը վերջ դրեց այն գործընթացին, որը սկսվել էր 1950-ական թվականներին, և քաղաքագիտություն մեջ դոկտորական աստիճան ունեցող կանանց թիվը մոտեցավ գիտական այլ ճյուղերում այդ աստիճանը ստացած կանանց թվին»⁴¹: Կանանց և քաղաքականության վերաբերյալ հետազոտություններն ու գիտական աշխատանքներն ուշադրություն բևեռեցին կանանց քաղաքական կարիերայի վրա և «ուղղեցին քաղաքագիտական գրականության մեջ տեղ գտած կանանց աղավաղված պատկերը»⁴²:

Կանանց և քաղաքականության հարցը սերտորեն փոխկապակցված է կանանց սոցիալական և քաղաքական ներկայացվածության հայեցակարգին: Այստեղ հիմնական հարցը հետևյալն է՝ ինչ է նշանա-

36. Inglehart R., Norris P. (2000), The Developmental Theory of the Gender Gap: Women's and Men's Voting Behavior in Global Perspective. International Political Science Review, Vol. 21, #4.

37. Նույն տեղում:

38. Նույն տեղում:

39. Ritter G., Mellow N. (2000), The State of Gender Studies in Political Science. The AN NALS of the American Academy of Political and Social Science, Vol. 571, # 1.

40. Նույն տեղում:

41. Tolleson-Rinehart S., Carrol S. J. (2006), Far from Ideal. The Gender Politics of Political Science, Vol. 100, N 4.

42. Նույն տեղում:

կում «կանանց ներկայացուցչություն»: Ինչ է նշանակում լինել ներկայացված: Ո՞ր դեպքերում են կանանց շահերը ներկայացվում⁴³:

Ինչպես նշում է Վ. Սապիրոն, պատմության ողջ ընթացքում քաղաքական կյանքի բոլոր մակարդակներում կանանց մասնակցության նկատմամբ հիմնական ընդդիմությունը պատճառաբանվել է այն փաստով, որ տղամարդը տան գլուխն է, ուստի նրան պետք է շնորհվի ընտանեկան շահերը հրապարակավ ներկայացնելու իրավունք⁴⁴:

Ըստ Վ. Սապիրոյի՝ կանանց շահերը ներկայացնելու համար հարկ է առաջին հերթին հասկանալ, թե քաղաքական որոշ համակարգերում կանայք ինչ հանգամանքներից ելնելով են ներկայացվել: Այս հարցի պատասխանը պահանջում է քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ այնպիսի ուսումնասիրություններ կատարել, որոնք «կընդունեն գենդերային տարբերակման ու շերտավորման մեծագույն ազդեցությունը մարդկային կյանքի ձևավորման գործում»: Այս առումով չորս հիմնական գործոն է կարևորվում⁴⁵:

- *Քաղաքական տնտեսությունը*, այդ թվում՝ տնտեսական կարիքները, միջազգային քաղաքականությունը, ֆեդերալիզմը և միջազգային կազմակերպությունները: Հանրային քաղաքականության մեջ կանանց կարիքների ներկայացվածության համար մի այլ խոչընդոտ է միջխմբային լարվածությունը: Ըստ Վ. Սապիրոյի՝ կանանց վրա ազդեցությունը գործող քաղաքականությունը պետք է դիտարկվի բախվող քաղաքական պահանջների և խնդիրների համատեքստում:

- *Գաղափարախոսությունը*՝ գերիշխող քաղաքական համակարգի ու արժեքների իմաստով: Տարբեր գաղափարախոսությունների համեմատական վերլուծության մեջ Վ. Սապիրոն ցույց է տալիս, որ, ըստ էության, քիչ տարբերություն կա լիբերալ, սոցիալ-ժողովրդավարական և մարքսիստական համակարգերի միջև: Գաղափարախոսության մի այլ կողմ, որն էական դեր է խաղում կանանց քաղաքական ներկայացվածության գործում, կրոնական/աշխարհիկ լինելն է և տվյալ

երկրի կրոնական արմատականության աստիճանը:

- *Ֆեմինիստական շարժումները և շահագրգիռ կազմակերպությունները*: Վ. Սապիրոն տարբերակում է կանանց կազմակերպություններն ամբողջ աշխարհում գործի դնող ութ ռազմավարություն կամ միջոց: Դրանց նպատակը հայրիշխանական համակարգերում համապատասխան լծակների ու լեգիտիմության ձեռքբերումն է: **Առաջին** միջոցների շարքում ավանդական ճնշման մեթոդներ են, օրինակ՝ իրավական գործողությունները, օրենսդիր և պետական մարմինների վրա տարբեր ճնշումների գործադրումը (լոբբինգը), ընտրական մասնակցությունը, փոխգործակցությունը պաշտոնյաների և մամուլի հետ: Միջոցների **երկրորդ** խումբը ներառում է ոչ ավանդական ճնշման մեթոդները, ինչպես օրինակ՝ բողոքի ակցիաներ, ցույցեր, հրապարակային գործողություններ և այլն: **Երրորդ** ռազմավարությունը գիտակցության բարձրացումն է: Այլընտրանքային հաստատությունների ստեղծումը (կանանց իրավական, հոգեբանական, սոցիալական, առողջապահական և այլ օգնությունների տրամադրումը) **չորրորդ** ռազմավարությունն է: **Հինգերորդ** ռազմավարությունը անջատողականությունն է կամ այնպիսի խմբերի ու հաստատությունների ստեղծումը, որոնց նպատակն է ապահովել անկախ ծառայություններ՝ դիմակայելու տղամարդկանց կողմից գերիշխող հաստատություններին կամ ոչ ֆեմինիստական գաղափարախոսությանը: **Վեցերորդ** ռազմավարությունը, ըստ Վ. Սապիրոյի, տարբեր խմբերի՝ մասնագիտական, կրթական կամ քաղաքական կազմակերպությունների և ինստիտուտների ներքո կանանց խմբավորումների ստեղծումն է: Կանանց կազմակերպությունների համար **յոթերորդ** հայտնի ռազմավարությունը ընդհանուր նպատակներ և արժեքներ ունեցող կազմակերպությունների միջև կոալիցիայի կառուցումն է: **Վերջին** ռազմավարությունը միջազգային կազմակերպություններում ներգրավվածությունն է: Բացի կանանց կազմակերպությունների ռազմավարությունների վերլուծությունից՝ կանանց քաղաքական ներկայացվածության հարցը լիարժեքորեն ըմբռնելու համար Վ. Սապիրոն առաջարկում է ուսումնասիրել կառավարական խմբերի արձագանքը: Ամենատարածված արձագանքը, սակայն, ընդունումը

43. Phillips A. (1998), *Feminism and Politics*. Oxford University Press.

44. Նույն տեղում:

45. Նույն տեղում:

կամ մերժումը չէ, այլ ավելի հաճախ խորհրդանշական շահարկումը և հարցը ոչ քաղաքական ենթատեքստով ներկայացնելու միտումը: Ըստ Վ. Սապիրոյի՝ «ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը հարցադրում է, թե ինչ ազդեցություն կունենա կանանց կարգավիճակի նոր քաղաքականությունը հասարակության հիմնական միավորի՝ ընտանիքի վրա, խնդրո առարկա է դառնում հանրային-մասնավոր տարբերակումը»⁴⁶:

• *Կանայք իբրև ներկայացուցիչներ*: Վ. Սապիրոն բարձրացնում է կանանց ներկայացվածության երկու հիմնական հարց.

1. արդյո՞ք ընտրվելիս կանայք նոր գործելակերպ են առաջ քաշում,
2. արդյո՞ք ազդեցիկ դիրքերում կանանց թվի աճը կարևոր է կանանց ներկայացվածության համար:

Տարիների հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ Վ. Սապիրոն տարբերակում է կանանց քաղաքական ներկայացվածության վրա շարունակ ազդեցություն ունեցող հետևյալ գործոնները.

1. քաղաքականության մեջ ներգրավված կանայք փոխում են կանանց շահերին առնչվող հարցերի նկատմամբ կառավարության արձագանքը,
2. քաղաքականության մեջ կանանց ներկայությունը նպաստում է իշխանության հավասար բաշխմանը, հավասար մասնակցությանը և որոշումների կայացմանը,
3. քաղաքականության մեջ աճող կանանց թիվն իր խորհրդանշական ազդեցությունն է ունենում իշխանության վրա առհասարակ՝ տեղ բացելով բնակչության թերներկայացված այլ խմբերի համար⁴⁷:

Շարունակելով կանանց քաղաքական ներկայացվածության բննարկումը՝ Էն Ֆիլլիպսն առաջարկում է երկու հիմնական փաստարկ, թե ինչու կանայք պետք է հավասարապես ներկայացված լինեն քաղաքական ոլորտում:

Առաջին փաստարկը վերաբերում է արդարությանը: Է. Ֆիլլիպսն իր «Ժողովրդավարություն և ներկայացվածություն» վերնագրով հող-

վածում գրում է. «...Ակնհայտորեն անարդար է, որ տղամարդիկ մենաշնորհել են ներկայացվածությունը: Եթե չլինեին մարդկային որոշ խմբերին քաղաքական կյանքից դուրս թողելու համար գործող խոչընդոտներ, ապա քաղաքական ազդեցիկ պաշտոնները կամայականորեն բաշխված կլինեին հասարակության երկու սեռի անդամների և էթնիկ բոլոր խմբերի միջև»⁴⁸:

Է. Ֆիլլիպսի երկրորդ փաստարկը վերաբերում է կանանց շահերի ներկայացվածությանը: Նշված փաստարկը հիմնված է քաղաքական ռեալիզմի հիմնական հասկացությունների վրա, ինչպես օրինակ՝ հասարակության բոլոր խմբերն իրենց շահերը ներկայացնելու համար հավասար հնարավորություններ պետք է ունենան:

46. Phillips A. (1998), *Feminism and Politics*. Oxford University Press.

47. Նույն տեղում:

48. Phillips A. (1998), *Feminism and Politics*. Oxford University Press.

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՖՈՐՄԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԶ
ԿԱՆԱՆՑ
ՑԱԾԻ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐԶ
ՈՐՈՇ
ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանանց և քաղաքականության վերաբերյալ գրականության մեջ ներկայացվում են տարբեր գործոններ, որոնք կամ խթանում, կամ խոչընդոտում են կանանց քաղաքական առաջխաղացումը: Հաճախ այս գործոններն ունեն տարբեր անվանումներ, բայց դրանց իմաստն ու բացատրությունը մտում են նույնը: Դրանք բոլորն էլ տեղեկություն են պարունակում ինստիտուցիոնալ, կառուցվածքային և սոցիալ-մշակութային փոփոխականների մասին:

Պամելա Պաքստոնը և Շերի Կունովիչը տարբերակում են 1) առաջարկի, 2) պահանջարկի, 3) մշակութային գործոններ և 4) միջազգային դերակատարներ ու ինստիտուցիոնալ կանոնակարգեր¹:

«Կանանց քաղաքական մասնակցությունը և ներկայացվածությունը Ասիայում. խոչընդոտներ ու մարտահրավերներ» խորագրով իր գրքում Կագուկի Իվանագան առաջ է քաշում «Ֆասիլիտատոր» հասկացությունը: Այն կարող է խթանել կանանց առաջընթացը քաղաքականության մեջ: Ֆասիլիտատորի երեք տեսակ է առաջարկվում՝

- 1) ինստիտուցիոնալ,
- 2) համատեքստային,
- 3) անհատական:

Քանի որ տարբեր տեսություններում տարբերակող գործոնները կարող են համընկնել, ստորև ներկայացնում ենք տեսական տարբեր մոտեցումներից վերցված գործոնների համադրությունը:

1. Առաջարկի մոտեցումը ակնում է, որ կանանց քաղաքական ակտիվիզմի և մասնակցության առաջարկը որոշվում է գենդերային սոցիալականացմամբ, ինչը շատ հաճախ սահմանափակում է քաղաքական կյանքում կանանց հնարավորություններն ու ընտրությունները: Պ. Պաքսոնը, Շ. Կունովիչն ու Մ. Հյունս իրենց «Գենդերը և քաղաքականությունը» հոդվածում գրում են, որ «թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում տղամարդիկ ավելի շատ են հետաքրքրված քաղաքականությամբ և տիրապետում են քաղաքական ավելի շատ գիտելիքների,

1. Paxton P., Kunovich Sh., Hughes M. (2007), Gender in Politics. The Annual Review of Sociology, Fall (8).

քան կանայք...: Միևնույն ժամանակ, անկախ ռասայական պատկանելիությունից, բոլոր երեխաների և դեռահասների շրջանում գենդերային այս տարբերությունը կամ չկա, կամ նույնիսկ հոգուտ իզական սեռի է»²: Բացի այդ՝ կանայք քաղաքականությանը մասնակից դառնալու համար չունեն այնպիսի անհրաժեշտ ռեսուրսներ, ինչպիսիք են ժամանակն ու դրամը: Առաջարկի մոտեցումը մեր ուշադրությունը հրավիրում է այնպիսի կարևոր գործոնի վրա, ինչպիսին է կանանց զբաղվածությունը: Կանանց տնտեսական մասնակցության և քաղաքական ակտիվիզմի տվյալների հարաբերակցությունից պարզ է դառնում, որ կանանց համար ավելի լայն հնարավորություններ ստեղծող աշխատանքի որոշ տեսակներ ոչ միայն բարձրացնում են կանանց ֆինանսական և սոցիալական կարգավիճակը՝ զարգացնելով սոցիալական կապիտալը, այլ նաև նրանց ընձեռնում են քաղաքականության շուրջ գրուցելու և բանավիճելու հնարավորություն³: Նույն ձևով կանանց ներգրավվածությունը քաղաքացիական հասարակության և հասարակական աշխատանքի ոլորտներ ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում նրանց քաղաքական ակտիվության համար³:

2. Պահանջարկի մոտեցումն ընդգծում է իշխանության հարցը և, այսպես կոչված, քաղաքական խաղի կանոնները: Այս մոտեցման կողմնակիցների հիմնական հարցն այն է, թե արդյոք կանայք կարող են ձեռք բերել քաղաքական իշխանություն, և եթե այո, ապա ինչպես⁴: Զաղաքականության ոլորտում կանանց պահանջարկը կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք են, օրինակ, ժողովրդավարությունը, ընտրական համակարգը, գենդերային քվոտաների առկայությունը, քաղաքական կուսակցության և իշխանության կառուցվածքը և ընտրողների վարքագիծը⁵: Չնայած վերոնշյալ բոլոր գործոնները կարևոր նշանակություն ունեն կանանց մասնակցության գործում, չկան այնպիսի տվյալներ, որոնք ցույց կտային, թե որ գործոնը կամ գործոնների համադրությունն է առավել նշանակալի դեր խաղում քաղաքականության

2. Paxton P., Kunovich Sh., Hughes M. (2007), Gender in Politics. The Annual Review of Sociology, Fall (8).
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:

մեջ կանանց առաջնադասման համար: Յետաքրքրական է, որ տվյալները ցույց են տալիս, որ ժողովրդավարական ռեժիմները միշտ չէ, որ նպաստավոր են կանանց համար: Ավելին՝ կանայք նույնիսկ ավելի քիչ են ներկայացված ժողովրդավարական համակարգերում և հատկապես ավտորիտարից ժողովրդավարականի անցումային ռեժիմներում⁶: Ինչ վերաբերում է ընտրական համակարգերին, կանայք ավելի շատ ընտրվում են այն երկրներում, որոնք ունեն և՛ համամասնական, և՛ մեծամասնական համակարգեր⁷:

Գենդերային, այդ թվում՝ սահմանադրական, ընտրական, քաղաքական կուսակցությունների քվոտաները, թերևս կանանց քաղաքական մասնակցությունը խթանող ամենավիճահարույց գործոններից են: Զվոտաների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերային քվոտան նույն կերպ չի գործում բոլոր երկրներում: Ամեն ինչ կախված է քվոտաների ընդունման ողջ գործընթացից (ընդունվել է ինքնակամ, թե՛ միջազգային հանրության ճնշման հետևանքով) և քաղաքական իշխանության տեսակից (տղամարդկանց գերիշխանությոն, թե՛ գենդերային համաչափություն): Այնուամենայնիվ, կան ապացույցներ, որ գենդերային քվոտաները կարող են դրական ազդեցություն ունենալ քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության մակարդակի վրա⁸: Ըստ էության՝ «քվոտաները համարվում են թե՛ ընտրովի և թե՛ նշանակովի հանրային պաշտոններում կանանց մասնակցությունն ու ներկայացվածությունը մեծացնելու ամենաարդյունավետ և արագ միջոցներից մեկը»⁹: Ավելի քան 40 երկրներ կիրառում են գենդերային քվոտաներ:

Քվոտաների համակարգը քաղաքականության մեջ առաջին անգամ ներդրվել է 1970-ական թվականների վերջին: Դա մի մեխանիզմ է, որը թույլ է տալիս կառավարությանը, քաղաքական կուսակցություններին և նախաձեռնություններին անդրադառնալ գենդերային թերություններին կանանց թիվը կառավարության մեջ կամ ընդհանրա-

6. Paxton P., Kunovich Sh., Hughes M. (2007), Gender in Politics. The Annual Review of Sociology, Fall (8).
7. Նույն տեղում:
8. Iwanaga K. (ed.) (2008), Women's Political Participation and Representation in Asia: Obstacles and Challenges. Nordic Institute of Asian Studies.
9. Նույն տեղում:

պես քաղաքական ոլորտում մեծացնելու միջոցով: Կանանց քվոտան պահանջում է, որ կանայք ունենան որոշակի թիվ կամ տոկոսային հարաբերություն ընդհանուր անդամների թվաքանակում: Խոսքը կարող է վերաբերել նախընտրական ցուցակներին, խորհրդարանական վեժաժողովին, կոմիտեներին կամ կառավարությանը¹⁰: Կան գենդերային քվոտաների մի քանի տեսակներ:

*Իրավական քվոտայի համակարգը*¹¹ կարող է ամրագրված լինել սահմանադրությամբ, մասնավորապես ընտրական կամ քաղաքական կուսակցությունների սահմանադրություններով, որոնք ապահովում են անվերապահ իրականացում: Իրավական քվոտաները ստիպում են բոլոր կուսակցություններին և քաղաքական մարմիններին անալոգիաներն առաջադրել որոշակի թվով կին թեկնածուներ:

*Կուսակցական կամավոր քվոտան*¹² կարող է օգտագործվել քաղաքական կուսակցությունների կողմից կամավոր որոշմամբ՝ առանց օրենսդրական կամ սահմանադրական պարտավորության: Շատ երկրներում Նշված համակարգն ավելի հաճախ օգտագործվում է ձախական կուսակցությունների կողմից, մինչդեռ լիբերալ և պահպանողական կուսակցությունները դեմ են այս համակարգին: Նշված տեսակի քվոտաները կարելի է որակել որպես թեկնածուական քվոտաներ¹³:

*Ամրագրված տեղերի կամ սեռերի քվոտայի համակարգը*¹⁴ սահմանում է «կրիտիկական արժեք», և եթե կառավարության կամ քաղաքական այլ մարմիններում կանանց թիվն այդ արժեքից ցածր է, ապա արձանագրվում է գենդերային անհավասարության դեպք, և պահանջվում են վերընտրություններ: Այս համակարգի օրինակներից է կանանց ներկայացվածությունն օրենսդրական մարմիններում 20 %-ով և քաղաքական գործիչների շրջանում 50 %-ով:

Որոշ երկրներում, որտեղ կանայք պատմականորեն դուրս են

10. **Mark J. P.** (1998), Gender Quotas, Electoral Laws, and the Election of Women: Lessons from the Argentine Provinces". *Comparative Political Studies*, 31 (1).

11. *Women in Parliament: Beyond Numbers* (2005). The International Institute for Democracy and Electoral Assistance (International IDEA), Sweden, pp. 142-144.

12. Նույն տեղում:

13. *United Nations Children's Fund. The State of the World's Children 2004.*

14. *Women in Parliament: Beyond Numbers* (2005). The International Institute for Democracy and Electoral Assistance (International IDEA), pp. 142-144.

թողնվել քաղաքական կյանքից, քվոտաների ընդունումը դառնում է տվյալ երկրի քաղաքական կյանքում կին ներկայացուցիչներ արագորեն ներգրավելու տարբերակ:

Գենդերային քվոտաների համակարգերի ներդրմանը դեմ գիտնականները հիմնականում առաջ են քաշում հետևյալ փաստարկները¹⁵.

ա) քանի որ քվոտաների շնորհիվ կանայք ստանում են նախապատվություն, քվոտայի համակարգը դիտվում է հավասար հնարավորությունների սկզբունքին հակառակ,

բ) քվոտայի համակարգում ընտրությունը սոցիալական կատեգորիաների միջև է, ինչպես օրինակ՝ սեռի, միջնդեռ քաղաքական ներկայացվածությունը պետք է լինի ըստ գաղափարների և կուսակցական պլատֆորմների,

գ) քվոտաները ենթադրում են, որ քվեարկողները քաղաքական գործիչ համար քվեարկում են՝ գենդերը հիմք ընդունելով, մինչդեռ ընտրությունը պետք է կատարվի քաղաքական գործիչների պատրաստվածությունից ելնելով, և արդյունքում պետք է ընտրվեն ավելի պատրաստված թեկնածուները,

դ) կանայք իրենք են դեմ քվոտաներին, քանի որ չեն ուզում, որ սեռը իրենց առաջադրման գործում որոշիչ դեր ունենա,

ե) հավանական է, որ եթե կանանց քվոտաները լայնորեն կիրառվեն, կպահանջվի քվոտաներ ունենալ նաև այլ փոքրամասնությունների համար: Այդ դեպքում ընտրությունը կվերածվի զուտ խմբային շահերի ներկայացվածության¹⁶:

Կա նաև գենդերային քվոտաների պաշտպանների խումբ, որի մասնակիցները նշում են հետևյալ առավելությունները¹⁷.

ա) քվոտաները փոխհատուցում են այն խոչընդոտների համար, որոնք, ըստ էության, կանխարգելում են կանանց մուտքը քաղաքական պաշտոններ,

15. *Women in Parliament: Beyond Numbers* (2005). The International Institute for Democracy and Electoral Assistance (International IDEA), pp. 142-144.

16. **Pande R., Ford D.** (2001), *Gender Quotas and Female Leadership: A Review*. Harvard University.

17. *Women in Parliament: Beyond Numbers* (2005). The International Institute for Democracy and Electoral Assistance (International IDEA), Sweden, pp. 142-144.

բ) քվտաններն ապահովում են միանգամից մի քանի կանանց ներկայացվածությունը քաղաքականության ոլորտ՝ դրանով նվազեցնելով նյարդային այն լարումը, որը հաճախ լինում է միայնակ ընտրվելու դեպքում (իբրև քաղաքացիներ՝ կանայք ունեն հավասար ներկայացվածության իրավունք),

դ) քաղաքական կյանքը կանանց կյանքի փորձառության կարելի է կազմում,

ե) տղամարդիկ չեն կարող ներկայացնել կանանց շահերը, և միայն մեծ թվով կանայք կարող են ներկայացնել կանանց բազմակարծությունը,

զ) չնայած կանանց քաղաքական հմտությունները թերագնահատվում և նվազեցվում են տղամարդու կողմից գերիշխող քաղաքական համակարգում, կանայք նույնքան պատրաստված են, որքան տղամարդիկ,

է) հակառակ այն կարծիքին, որ քվտանները խտրական վերաբերմունք են դրսևորում տղամարդու հանդեպ, իրականում սահմանափակում են քաղաքական կուսակցությունների՝ միայն տղամարդկանց առաջադրելու միտումը: Հետևաբար ընտրողներին հնարավորություն է տրվում ավելի քան նաև կին թեկնածուների օգտին,

ը) երբեմն հնարավոր չէ արդարացում գտնել այն փաստի համար, որ աշխարհում տղամարդիկ զբաղեցնում են խորհրդարանական տեղերի 80%-ը¹⁸:

Տարբեր երկրներում կան գենդերային քվտանների համակարգի ներմուծման և գործադրման լավ օրինակներ, որոնց շնորհիվ կանանց քաղաքական մասնակցությունը զգալիորեն ավելացել է:

3. Համատեքստային գործոնները վերաբերում են մշակութային, սոցիալական և տնտեսական համատեքստերին, որոնց էլ մասնակից են դառնում կանայք: Կ. Իվանսոնի առանձնացնում է համատեքստային երեք խթան՝ մշակութային, միջազգային և սոցիալ-տնտեսական: Կան շատ ուսումնասիրություններ այն մասին, որ մշակութային արժեքները և ավանդույթները կարող են խոչընդոտել կանանց քաղաքա-

կան մասնակցությունը, մասնավորապես կանանց առաջնորդության նկատմամբ վերաբերմունքը, գենդերային դերերի բաժանումը, հասարակության անկեղծությունը տղամարդկանցից և կանանցից: Թերևս բոլոր հասարակություններում գոյություն ունի այն ընկալումը, որ կանայք տղամարդկանցից ավելի թույլ են և նվազ ունակ: Նույնիսկ այնպիսի երկրներում, որտեղ կանանց մասնակցությունը կրթության ոլորտում և աշխատաշուկայում զգալի առաջընթաց է ապրել վերջին տասնամյակների ընթացքում, քաղաքական պաշտոններ ձեռք բերելիս կանայք դեռևս մշակութային արգելքների են բախվում: Կան նաև ուսումնասիրություններ, որոնք ցույց են տալիս կրոնի դերը կանանց քաղաքական ներկայացվածության գործում: Այսպիսով՝ բողոքականների մեծամասնություն ունեցող երկրներն ավելի շատ են աջակցում կին քաղաքական առաջնորդներին, քան այն երկրները, որտեղ կաթոլիկները, ուղղափառ քրիստոնյաները և մահմեդականները մեծամասնություն են կազմում¹⁹: Գենդերային և քաղաքական հարցեր ուսումնասիրողները աստիճանաբար առավել մեծ նշանակություն են տալիս մշակութային այս գործոնին, քանի որ այն կարող է վստահելի կանխատեսող միջոց լինել քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության համար²⁰:

Մշակութային գործունեության կարևորությունն իրենց ուսումնասիրություններում ընդգծել են Ռ. Իգլեհարթն ու Փ. Նորրիսը²¹: Վերջիններիս կողմից անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ կա ուժեղ հարաբերակցություն կանանց առաջնորդության նկատմամբ վերաբերմունքի և քաղաքականության մեջ կանանց թվի միջև²²: Եգալիտար քաղաքական մշակույթներ ունեցող հասարակությունների խորհրդարաններում ևս ավելի մեծ թիվ են կազմում կանայք²³:

Կ. Իվանսոնի հետաքրքիր դիտարկում է կատարել քաղաքակա-

18. Women in Parliament: Beyond Numbers (2005). The International Institute for Democracy and Electoral Assistance (International IDEA), Sweden, pp. 142-144.

19. Pande R., Ford D. (2001), Gender Quotas and Female Leadership: A Review. Harvard University.

20. Inglehart R., Norris P. (2000), The Developmental Theory of the Gender Gap: Women's and Men's Voting Behavior in Global Perspective. International Political Science Review, Vol. 21, #4.

21. Նույն տեղում:

22. Նույն տեղում:

23. Նույն տեղում:

նության մեջ կանանց ներկայացվածության վրա մշակութային գործոնների ազդեցության վերաբերյալ: Նա պնդում է, որ հասարակությունների մեծ մասում կանայք համարվում են անմեղության և բարոյական գերազանցության խորհրդանիշներ և նույնիսկ հաճախ ընկալվում են որպես ավելի բարոյական էակներ, քան տղամարդիկ, հետևաբար տեղ չունեն քաղաքականության «կեղտոտ» աշխարհում²⁴: Միևնույն ժամանակ կանանց ավելի զգացմունքային ու զգայուն լինելը նրանց դարձնում է քաղաքական «կոշտ» գործելակերպին առավել չհարմարվող: Ըստ Կ. Իվանգայի՝ հենց այս կարծրատիպերն են նպաստել քաղաքականության մեջ կանանց մարզինալացմանը և քաղաքականության՝ իբրև կանանց համար անհամապատասխան ոլորտի ընկալմանը: Կանանց և քաղաքականության այս հակադրումը հզոր ազդեցություն ունի մարդկանց վերաբերմունքի վրա, ինչպես նաև հենց կանանց վրա իրենց թեկնածությունը առաջադրելու հարցում²⁵: Կ. Իվանգան իր հետազոտությունների արդյունքում նաև բացահայտել է կրոնի և կանանց քաղաքական առաջնորդության միջև հարաբերակցությունը: Օրինակ՝ «Համաշխարհային արժեքների հետազոտության» (1995-2001) տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ իսլամը խոչընդոտ է կանանց քաղաքական մասնակցության համար: Պատահական չէ, որ քաղաքական դաշտում կանանց մասնակցությունը ընդհանուր առմամբ ավելի բարձր է քրիստոնեական երկրներում²⁶: Նաև ապացուցվել է, որ ընտրված կանայք սակավաթիվ են այն հասարակություններում, որտեղ գերիշխող կրոնը թշնամաբար է տրամադրված կանանց առաջնադասման ու գենդերային հավասարության նկատմամբ²⁷:

Համատեքստային գործոնների շարքում առավելապես կարևորվում են *սոցիալ-տնտեսական* գործոնները: Տարբեր հարցումների արդյունքում բացահայտվել է քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության և աշխատաշուկայում նրանց ներգրավվածության միջև հարաբերակցությունը: Ինչպես նշում է Կ. Իվանգան, կանայք հաճախ

24. Women's Political Participation and Representation in Asia Obstacles and Challenges. Edited by K. Iwanaga. Nordic Institute of Asian Studies 2008.

25. Նույն տեղում:

26. Նույն տեղում:

27. Նույն տեղում:

ունեն սոցիալ-տնտեսական ավելի ցածր կարգավիճակ, քան տղամարդիկ, ուստի կանանց մասնագիտական փորձը, ի տարբերություն տղամարդկանց, շատ հաճախ այնքան էլ հարմար չէ քաղաքական գործունեության համար:

Ռեյնոլդսի կողմից 180 երկրներում իրականացրած համեմատական հետազոտությունը ցույց է տալիս, որ կանանց սոցիալ-տնտեսական զարգացումը դրականորեն փոխկապակցված է կին խորհրդարանականների թվին²⁸: Միևնույն ժամանակ կանանց քաղաքական ներկայացվածության և աշխատաշուկայում ներգրավվածության տվյալների հարաբերակցությունը կարող է լինել խնդրահարույց, երբ համեմատում ենք զարգացած և զարգացող երկրները: Մասնավորապես պարզվում է, որ միևնույն փոփոխականները, ինչպես օրինակ՝ ընտրական համակարգը, կանանց մասնակցությունն աշխատաշուկայում, հասարակության վերաբերմունքը կանանց առաջնորդության նկատմամբ և այլն, վիճակագրորեն ունեն զգալի կերպով հաստատուն ազդեցություն կանանց քաղաքական ներկայացվածության վրա զարգացող երկրներում, մինչդեռ չունեն որևէ ազդեցություն զարգացած երկրներում²⁹:

4. Միջազգային կոնվենցիաներին և կանոնադրություններին մասնակից **միջազգային դերակատարները** և տեղական կառավարությունների պարտավորությունները նույնպես էական ազդեցություն ունեն քաղաքականության մեջ կանանց առաջնադասման հարցում: Ինչպես ցույց է տալիս կանանց քաղաքական ներկայացվածության վերաբերյալ գրականության համեմատական ուսումնասիրությունը, քաղաքական հաստատություններում համեմատաբար ավելի մեծ թվով կանայք կան այն երկրներում, որոնք ունեն միջազգային պարտավորություններ ու հանձնառություններ, ինչպես նաև վավերացրել են միջազգային համաձայնագրեր³⁰:

5. Ինստիտուցիոնալ ֆասիլիտատորները վերաբերում են քաղաքական կառուցվածքին, քաղաքական և ընտրական համակարգին,

28. Women's Political Participation and Representation in Asia Obstacles and Challenges. Edited by K. Iwanaga. Nordic Institute of Asian Studies 2008.

29. Նույն տեղում:

30. Squires J. (2013), Gender in Political Theory, Wiley.

իրավական համակարգի բնույթին, պետության դերին և կուսակցությունների միջև մրցակցության մակարդակին: Ի թիվս այլ գործոնների՝ Կ. Իվանազան Նշում է պաշտոնյաների, պաշտոնավարողների փոփոխությունների և քաղաքական քարոզարշավների ֆինանսավորումը: Ինստիտուցիոնալ ֆախիլիտատորները բաժանվում են *իրավական, ընտրական և քաղաքական խմբերի*:

Իրավական գործոնները վերաբերում են կանանց՝ քաղաքականության մեջ ներկայացվածության ֆորմալ և իրավաբանական իրավասությանը: Ընտրական գործոնները ներառում են ընտրական համակարգի տեսակը և դրա կանոնները: Հարցումները ցույց են տալիս, որ ընտրական համակարգը, ըստ էության, ազդեցություն ունի քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության վրա: Ապացուցվել է, որ շատ ավելի հավանական է, որ կանայք ընտրվեն համամասնական, քան մեծամասնական ընտրակարգերով: Իսկ բավտաները՝ իբրև քաղաքական գործոններին ուղղված գործիք, արդեն քննարկել ենք ավելի վաղ:

«Դռնապահների» դերը

Մեր ուսումնասիրության նպատակների համար խիստ կարևոր են քաղաքական կուսակցությունները և կուսակցությունների առաջնորդները: Վերջին 20-30 տարիների ընթացքում կանանց քաղաքական առաջխաղացման գործում քաղաքական կուսակցությունների ազդեցությունը պարզող հարցումները ցույց են տալիս, որ կուսակցության բնույթը նշանակալի է կանանց համար:

Տարբեր հետազոտություններից երևում է, որ աշխարհում գրեթե ամենուր քաղաքական էլիտայի շրջանակում կանանց ընկալումը ձևավորվել է գենդերային կարծրատիպերով, և այդ կարծրատիպերը կարևոր դեր են խաղում խմբի կողմից թեկնածուների հավաքագրման և առաջադրման հարցում³¹: Ավելին՝ կին թեկնածուներին բավականին հաճախ վերագրվում են «կանանց դերեր», և կանայք որակվում են նախ

31. Phillips A. (1998), *Feminism and Politics*. Oxford University Press.

և առաջ իբրև կին, այլ ոչ թե քաղաքական գործիչ³²: Հետաքրքիր է, որ միևնույն ժամանակ կին թեկնածուները, ինչպես ցույց են տալիս հարցումները, առավել հակված են չխոսելու «կանանց հարցերի» շուրջ և/կամ շեշտադրելու իրենց դերը ընտանեկան և մասնավոր ոլորտում իբրև կին, մայր և այլն: Իրականում ընտրական արշավում կանանց հարցերն անընդհատ շեշտելը կարող է տպավորություն ստեղծել, որ թեկնածուն «չափազանց նեղ մտահոգություններ ունի և չի կարող պատշաճ ձևով ներկայացնել բոլոր մարդկանց»³³:

Մ. Կոնվոյի կարծիքով՝ «դռնապահների» դերն այն որոշման հարցում, թե ով կարող է առաջադրվել հասարակական պաշտոնի համար, շատ ավելի կարևոր է քաղաքականության մեջ կանանց առաջխաղացման համար³⁴: Միևնույն ժամանակ նա նշում է, որ այս բնագավառում հետազոտությունների մեծ մասն անտեսում է պաշտոնում ընտրվելուն (նշանակվելուն) նախորդող փուլը, որը շատ կարևոր է³⁵: Ինչպես գրում է Մ. Կոնվոյը, «իննց այդ նախնական ընտրության գործընթացում շատ կին հավանական թեկնածուներ կարող են հուսալքվել և նույնիսկ չմտնել առաջադրման առաջնային ընտրական մրցույթ: Չնայած քաղաքական կուսակցության թեկնածուների՝ առաջնային ընտրություններում առաջադրվելու համար «դռնապահների» ազդեցությունը նվազել է անցյալի համեմատ, նրանք դեռևս ունեն զգալի ազդեցություն ընտրության առաջնային փուլի հաջող ամփոփման գործում»³⁶:

Իր «Բացակայող մեծամասնություն. կանանց ներգրավումը որպես պետական օրենսդիր թեկնածուներ» (1998) գրքում Դեյվիդ Նիվենը պնդում է, որ կանայք գրեթե բացակայում են քաղաքական էլիտաներում ոչ թե անիրաժեշտ գիտելիքների և հմտությունների պակասի, սոցիալական կարևոր ցանցեր չունենալու, այլ այն պատճառով, որ քաղաքական կուսակցությունների առաջնորդները, որոնց մեծամասնությունը տղամարդիկ են, նախընտրում են իրենց նման թեկնածուներին՝

32. Phillips A. (1998), *Feminism and Politics*. Oxford University Press.

33. Նույն տեղում:

34. Conway M. (2001), *Women and Political Participation*. *Political Science and Politics*, Vol./Issue 02.

35. Նույն տեղում:

36. Նույն տեղում:

դուրս թողնելով նրանց, ովքեր նման չեն իրենց: Դ. Նիվենն իր փաստարկն ապացուցում է կին քաղաքական գործիչների և քաղաքական կուսակցությունների առաջնորդների շրջանում անցկացրած հարցումների հիման վրա: Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ հարցազրույցին մասնակցած կանանց մեծամասնությունը առնչվել է տղամարդկանց կանխակալության դեպքերի: Նույնիսկ քաղաքական առաջնորդներն ընդունել են, որ հավաքագրման գործընթացում կա գենդերային կողմնակալություն: Մասնավորապես տղամարդ քաղաքական առաջնորդները հակված են հավատալու, որ արական սեռի թեկնածուներն ունեն հաղթանակի ավելի մեծ հավանականություն, քան կանայք³⁷: Տղամարդ կուսակցական առաջնորդները նաև ավելի բարձր գնահատական են տալիս առնականությանը վերագրվող բնութագրին:

Ըստ Դ. Նիվենի՝ ընդհանուր առմամբ կուսակցության առաջնորդները չունեն բավարար տեղեկատվություն կին թեկնածուների կարողությունների մասին, ինչի պատճառով նրանց մտածելակերպն ու վարքը չափազանց կարծրատիպային են և կողմնակալ³⁸: Դ. Նիվենի առաջադրած վարկածներից մեկը շատ օգտակար է հայկական քաղաքական հաստատությունների ուսումնասիրության համար, և մենք այն փորձարկել ենք մեր հետազոտության շրջանակներում: Այդ վարկածը հետևյալն է. «...Տարիքով ավելի մեծ առաջնորդները, որոնք ավելի երկար են զբաղեցրել պաշտոններ, ունեն մեծ իշխանություն իրենց կուսակցական շրջանում և ավելի հակված են կին թեկնածուներին համարելու իրենցից տարբեր, հետևաբար ավելի քիչ հարմար՝ ընտրական պաշտոնների համար: Երբ այս առաջնորդները թոշակի են անցնում կամ հեռանում պաշտոններից, փոխարինվում են կրտսեր սերնդի ներկայացուցիչներով, որոնք ավելի քիչ են հանդես գալիս կուսակցության միակ հզոր առաջնորդի դերում: Այս դեպքում կին թեկնածուների նկատմամբ կողմնակալությունը նվազում է»³⁹:

Ամփոփելով տարբեր հարցումների արդյունքները՝ Պամելա Փաթտոնը, Շերի Կունովիչն ու Մելանի Հագսը ցույց են տալիս, որ

37. Niven D. (2000), The Missing Majority: The Recruitment of Women as State Legislative Candidates. Praeger Publishers, Westport.

38. Նույն տեղում:

39. Նույն տեղում:

ձախակողմյան կուսակցությունները համեմատաբար ավելի հակված են պաշտոններում առաջադրելու կանանց: Բացի այդ՝ կանանց ներկայացվածությունը կուսակցական ղեկավարության մեջ մեծացնում է նաև նրանց ներկայացվածությունը քաղաքականության մեջ: Ավելի հավանական է, որ «կուսակցության էլիտաներում կանայք փորձեն աջակցել կին թեկնածուներին ընտրական ցուցակի մեջ ներգրավվելու հարցում: Կուսակցության ղեկավար պաշտոններ կամ նույնիսկ միջին օղակի դիրքեր զբաղեցնող կանայք կարող են էլ ավելի ազդել կանանց թվի մեծացման վրա՝ փոխելով կուսակցության կանոնները թեկնածու կանանց որոշակի թիվ ապահովելու համար...: Բացի այդ, երբ կուսակցությունները ընդդիմանում են փոփոխությանը, այդ դեպքում ավելի հավանական է, որ կանայք իրենց սեփական կուսակցությունները ձևավորելու համար կլքեն կուսակցական կառույցը»⁴⁰:

Ամփոփելով՝ Նշենք, որ քաղաքականության բնագավառում կանանց հետազոտությունների առաջնահերթությունների վերաբերյալ գրականությունը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ միտումները.

- մշակել Նոր տեսություններ ոչ արևմտյան և զարգացող երկրների ու տարածաշրջանների համար,
- մշակել կանանց քաղաքական մասնակցության պատճառահետևանքային կապի ավելի ճշգրիտ չափման ձևեր,
- հավաքել երկարատև հետազոտության տվյալներ կանանց քաղաքական մասնակցության, ներկայացվածության և ազդեցության վերաբերյալ,
- հավաքել կանանց մասնակցության և ներկայացվածության մասին պետական տվյալներ, ինչպես նաև կուսակցություններում ներգրավված կանանց մասին ավելի ծավալուն տեղեկություններ,
- հասկանալ, թե ինչպես են կանանց քաղաքական ուժը և ազդեցությունը կախված ավանդական և ոչ ավանդական քաղաքական կառույցներում նրանց գործելակերպից,
- հասկանալ, թե ինչպես են ա) առանձին կանանց գործելակերպը, բ) կանանց շարժումը տվյալ երկրում և գ) պետական գենդերային

40. Phillips A. (1998), Feminism and Politics. Oxford University Press.

ապարատը իրանում քաղաքականության մեջ կանանց մասնակցությունը,

- անցկացնել խաչածև մշակութային հարցումներ կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՆԱՆՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՏԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Պատմական ակնարկ. կանանց քաղաքական մասնակցությունը կոմունիզմի տարիներին

Պատմության և գրականության մեջ կոմունիստական քաղաքական համակարգը հաճախ դիտարկվում է որպես գեղեցիկ հավասարության գաղափարախոսությունը խթանող իրողություն: Նշված ժամանակաշրջանում կոմունիստական պետություններն ընդունեցին կանանց և տղամարդկանց հավասարության քաղաքականություն՝ ներմուծելով մեխանիզմներ այդ գաղափարախոսությունը օրենսդրության մեջ հիմնավորելու համար: Շատ կանայք զբաղվում էին հասարակական կյանքով և աշխատանքով: Ստեղծվեցին բազմաթիվ աջակցող կառույցներ՝ մանկապարտեզներ, երեխաների ցերեկային խնամքի հաստատություններ, որպեսզի կանանց ընձեռվելի հավասար հնարավորություններ: Միևնույն ժամանակ քաղաքական կյանքում նույնպես բարեփոխումներ իրականացվեցին: Կանայք իշխանությունն իր ձեռքն առած կոմունիստական կուսակցությունում ունեին լավ ներկայացվածություն, չնայած նրանցից քչերն էին զբաղեցնում առաջատար պաշտոններ:

1970-ական թվականներին կոմունիստական շատ երկրներում քվտայի համակարգ ներդրվեց: Որոշ երկրների խորհրդարանական նախընտրական ցուցակներում կանանց ներկայացվածությունը հասավ 30 %-ի: Հետևաբար աճեց նաև կանանց թիվը խորհրդարաններում: 1980 թվականին Լիտվան և Լատվիան ունեին մեծ թվով կին ներկայացուցիչներ (համապատասխանաբար 36 % և 35 %), մինչդեռ Կենտրոնական Եվրոպայի երկրները ամենաքիչ կին ներկայացուցիչներն ունեին (Լեհաստան (23 %, 1980 թ.), Բուլղարիա (22 %, 1981 թ.), Էստոնիա (21 %, 1985 թ.):)։ Այս ցուցանիշներից հետ էին մնում անգամ Արևմտյան Եվրոպայի ժողովրդավարական երկրներն իրենց ֆեմինիզմի հարուստ պատմությամբ հանդերձ: Չնայած կոմունիստական համակարգի հաղթանակին՝ դրական փոփոխությունները բավականին արհեստական բնույթ էին կրում, ինչն ավելի ակնհայտ դարձավ այս

պետությունների անկախությունից և նրանց առաջին ընտրությունների արդյունքներից հետո:

Կոմունիզմի համակարգին բնորոշ գեղեցիկ հավասարության այն գաղափարախոսությունը, որը գեղեցիկ քվոտաների համակարգի միջոցով կանանց ազատագրում պարտադրեց, Մագդոլնա Կոսա-Կովաչի կողմից¹ ստացավ «պետական ֆեմինիզմ» անվանումը: Այս համակարգը բավականին արհեստական էր, քանի որ որոշումների կայացման իշխանությունը մասց տղամարդկանց ձեռքում, իսկ կանանց մասնակցությունը խորհրդարաններում ապահովվում էր քվոտային համակարգի շնորհիվ: Դա վերևից պարտադրված մասնակցություն էր, որը մշակութային-վարքագծային որևէ փոփոխություն չէր առաջացնում: Չետևաբար կոմունիստական համակարգի փլուզումից հետո կանայք հազվադեպ էին երևում որոշումների կայացման գործընթացներում:

Թեև կանանց սոցիալական և քաղաքական ոլորտներում ներգրավվելու հնարավորություն էր տրվել, նրանք դեռևս տառապում էին կրկնակի բեռից, քանի որ կենցաղային պարտականությունները հավասարապես չէին կիսվում ընտանիքի անդամների միջև: Չետևաբար պետությունների կողմից անկախության հռչակումներից հետո կանայք լքեցին տղամարդկանց կողմից գերիշխվող ոլորտները, մասնավորապես քաղաքականությունը՝ փոխարենը կենտրոնանալով ընտանեկան կյանքի վրա: Նրանք այլևս դրդապատճառ չունեին մրցասպարեզ դուրս գալու «կեղտոտ» քաղաքականության ոլորտում, որտեղ բարձր պաշտոնների համար նրանց տղամարդ թեկնածուներին հավասար չէին արժևորում:

Կտրուկ անկում.

կանանց քաղաքական ներգրավվածությունը հետկոմունիստական երկրներում

Կոմունիստական «վերևից ներքև» քաղաքականությունը ոչ մի փոփոխություն չէր մտցրել քաղաքական մշակույթի մեջ: Այդ իսկ պատճառով կանայք քաղաքական ոլորտից անմիջապես դուրս մղվեցին համակարգի փլուզումից հետո: Բացի այդ, քանի որ կոմունիստական գաղափարախոսությունը չէր հանդուրժում ֆեմինիզմը, հետևաբար այն որպես գաղափարախոսություն չընդունվեց հետկոմունիստական երկրների կողմից²: Ֆեմինիզմը դատապարտելի էր որպես արևմտյան արժեք, որը քայքայում էր խորհրդային ընտանիքները: Ֆեմինիզմի այս բացասական ընկալումը շարունակում է բուռն քննարկման թեմա մալ հետկոմունիստական բազմաթիվ երկրներում:

Չետկոմունիստական Նոր դիրքորոշումը թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցություն ունեցավ կանանց վրա: Նոր իրականությունը ամրապնդեց տղամարդկանց իշխանությունը սոցիալական-տնտեսական և քաղաքական կյանքում, ինչը նպաստեց առնական մշակույթի ծաղկմանը³: Կանանց վերագրված արտոնություններն անհետացել էին՝ կանանց թողնելով Նոր իրականությանը դեմ հանդիման: Որոշ երկրներում պատերազմը ստեղծեց Նոր իրադրություն, ինչն էլ մեծացրեց կանանց խոցելիությունը տղամարդկանց կողմից բռնության նկատմամբ⁴:

Ինչևէ, Նոր իրականությունը նպաստեց կանանց սոցիալական շարժումների ձևավորմանը: Չետկոմունիստական երկրները ֆեմինիստական շարժումների զարգացման տեսանկյունից շատ հեռու էին Արևմտյան Եվրոպայի երկրներից: Նոր իրականությունը ստիպեց կանանց վերափնաստավորել իրենց կարգավիճակը և գիտակցել հասա-

1. **Ko'sa'-Kova'cs M.** (2004), The Situation of Women in the Countries of Post-Communism Transition. Report, Council of Europe, Parliamentary Assembly.

2. **Sloat A.** (2005), Fixing an Old Divide: The Political Participation of Women in an Enlarged Europe.

3. **Ko'sa'-Kova'cs M.** (2004), The Situation of Women in the Countries of Post-Communism Transition. Report, Council of Europe, Parliamentary Assembly.

4. **Nikolić-Ristanović V.** (2004), "Post-Communism: Women's Lives in Transition" (special issue of Feminist Review 76).

րակության մեջ իրենց դիրքերը վերականգնելու պայքարի կարևորությունը:

Կոմունիստական համակարգի անկմանը զուգընթաց կանանց ներկայացվածությունը քաղաքականության մեջ զգալիորեն նվազեց: Ընտրական նոր համակարգի և օրենսդրական փոփոխությունների շնորհիվ կանանց ներկայությունը հետկոմունիստական երկրների խորհրդարաններում նվազեց մինչև 10 %⁵: Հունգարիայում առաջին անկախ ընտրությունների արդյունքում կանանց թիվը նվազեց մինչև 7 %, մինչդեռ 1980 թ.-ին այն 30 % էր, իսկ Լատվիայում 34.8 %-ից (1985 թ.) նվազեց մինչև 5.5 % (1990 թ.)⁶: Պատկերը հիմնականում նույնն էր հետկոմունիստական բոլոր երկրներում:

Քվոտաների համակարգի վերացումը խիստ ազդեցություն ունեցավ կանանց ներկայացվածության ցուցանիշի անկման վրա: Կանանց թիվը նվազեց, մինչդեռ քաղաքական ինստիտուտները վերահաստատեցին իրենց իշխանությունը, և կանանց փոխարինեցին իրենց տղամարդ գործընկերները:

Բացի քաղաքական համակարգում կանանց ներկայությունն ապահովող օրենսդրական մեխանիզմների բացակայությունից՝ կային նաև մի քանի այլ գործոններ՝ հիմնականում սոցիալ-մշակութային, որոնք կանխում էին կանանց քաղաքական գործունեությունը:

Կոմունիստական դարաշրջանում քաղաքականությունն ընկալվում էր որպես «կեղտոտ խաղ», և կանայք մասնակցում էին այդ խաղին միայն այն դեպքում, երբ դա պահանջվում էր համակարգի կողմից: Նոր համակարգն ընդամենը նպաստեց կանանց այդ խաղից դուրս գալու որոշմանը: Մինևույն ժամանակ քաղաքական կուսակցությունները կանանց ներգրավելու քայլեր չձեռնարկեցին: Նրանք կանանց առաջնորդությանը նպաստելու որևէ հետաքրքրություն կամ քաղաքական կամք չցուցաբերեցին:

Ավելին՝ կանանց շրջանում ակնհայտորեն բացակայում էր միաս-

5. Ko'sa'-Kova'cs M. (2004), The Situation of Women in the Countries of Post-Communism Transition. Report, Council of Europe, Parliamentary Assembly.

6. Sloat A. (2005), Fixing an Old Divide: the Political Participation of Women in an Enlarged Europe.

նությունը և հաջողության հասնելու համար միմյանց օգնելու ցանկությունը: Դեկավար պաշտոններ զբաղեցնող կանայք չէին տարբերվում իրենց տղամարդ գործընկերներից և մասնակցում էին տղամարդկանց կողմից իշխվող օրակարգին:

Կանանց ցածր քաղաքական համախմբման այլ գործոններ էլ կան: Նշենք դրանցից մի քանիսը:

- **Մշակութային-կրոնական պատճառներ.** կնոջ ավանդական դերը դիտարկվում է տանը՝ ընտանիքում՝ լիովին նվիրված ապագա սերնդի կրթությանը, ինչպես նաև կրոնական ու մշակութային ավանդույթներին հետևելուն: Զաղաքականության մեջ ակտիվ կանայք դիտվում են որպես բացառություններ կամ բացասաբար են ընկալվում հասարակության կողմից, ինչը նրանց մարգինալացնում է:

- **Ընտանեկան պարտականություններ.** կանայք պարտավորություններ ունեն ընտանիքի հանդեպ. նախապատվությունը պետք է տրվի ընտանիքին՝ հետաքրքրությունների և աշխատանքային գործունեության հաշվին: Քանի որ ընտանիքի ողջ բեռն ընկած է կանանց ուսերին, նրանք հազիվ թե կարողանան ժամանակ հատկացնել քաղաքական առաջխաղացմանը:

- **Դժվար մրցակցություն.** տղամարդու կողմից իշխվող հասարակարգում, որտեղ կինը չունի անհրաժեշտ օժանդակություն ու սոցիալական կապիտալ, կանայք ավելի խոցելի են դառնում ընտրություններում և ավելի քիչ հնարավորություն ունեն հաղթանակ տանելու թե՛ մրցակցություններում:

- **Ֆեմինիստական թույլ շարժում և քաղաքացիական հասարակության օժանդակություն.** անցումային հասարակություններում, որտեղ սոցիալական շարժումներն աստիճանաբար են զարգանում, և կանանց շարժումներն այնքան էլ հզոր չեն, որքան Արևմուտքում, կինը աջակցություն չի ստանում կանանց շարժումներից: Կանանց միջև համերաշխությունը օրակարգային թեմա չէ:

Վերջին տասնամյակների ընթացքում նկատվում է քաղաքական կառույցներում ավելի շատ կանանց ներգրավման միտում: Զաղաքականության մեջ կանանց նկատմամբ վերաբերմունքը փոխվել է. մեծ

թվով կանայք են ներգրավվում քաղաքականության մեջ: 1990-ական թվականների վերջին և 2000-ական թվականներին քաղաքական կառույցներում արձանագրվել է կանանց թվի զգալի փոփոխություն: Կանայք ձգտում են զբաղեցնել տղամարդկանց կողմից այնպիսի պաշտոններ, որոնք տղամարդկանց մենաշնորհն են, ինչպես օրինակ՝ վարչապետի (Բուլղարիա), արտաքին գործերի (Լատվիա) և արդարադատության նախարարների (Չեխիա, Հունգարիա, Ռումինիա, Հայաստան) պաշտոնները⁷: Նման օրինակ փոփոխությունները պայմանավորված են միջազգային ասպարեզում զարգացող քաղաքական նոր իրողություններով:

Անկախացած պետությունների քաղաքական օրակարգի վերափոխումը դրական ազդեցություն ունեցավ կանանց քաղաքական ներգրավվածության վրա: Այս առումով հետկոմունիստական երկրների մեծ մասում Եվրոպական Միության (ԵՄ) ընդլայնման քաղաքականությունը զգալիորեն նպաստեց գենդերային հավասարության քաղաքականությանը: ԵՄ-ի կողմից բոլոր ոլորտներում, այդ թվում՝ քաղաքականության մեջ կարևորվող գենդերային հավասարության հայեցակարգը նույնպես ընդգծվում էր ԵՄ ընդլայնման քաղաքականության մեջ: Հետևաբար ԵՄ անդամակցության ձգտող բոլոր պետությունները պարտավոր էին հետևել այս սկզբունքներին:

Որպես առաջին քայլ՝ օրենսդրություն ընդունվեց ըստ միջազգային համաձայնագրերի, որոնցում կային խտրականությունը բացառող և հավասարությունը սահմանող հոդվածներ⁸: Օրինակ՝ հետկոմունիստական բոլոր երկրները վավերացրին ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան» (CEDAW)⁹, որը կանանց հարցերին նվիրված հիմնարար հռչակագրերից մեկն է: Հետագա զարգացումները ցույց տվեցին կանանց քաղաքական մասնակցության աճի դրական միտում:

Ներկայումս Արևմտյան Եվրոպայի հետ աշխարհագրական ընդ-

7. Sloat A. (2005), Fixing an Old Divide: the Political Participation of Women in an Enlarged Europe.

8. Նույն տեղում:

9. Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (1979).

հանուր սահման ունեցող հետկոմունիստական երկրներում ավելի շատ կին քաղաքական գործիչներ կան արևմտյան քաղաքական մշակույթի հետ ավելի սերտ քաղաքական կապերի շնորհիվ: Օրինակ՝ մերձբալթյան երկրներում, որոնք ավելի մոտ են սկանդինավյան երկրներին, կանայք ավելի վաղ են սկսել ներկուսակցական քվոտային համակարգի լոբբինգը, քան հետկոմունիստական մյուս երկրներում ապրող կանայք¹⁰:

Արևմտյան գիտնականներն առանձնացնում են քաղաքականության մեջ կանանց ներգրավվածության մի քանի գործոններ: Մասնավորապես նրանք նշում են, որ.

1) բարձրագույն կրթության մեջ և աշխատաշուկայում ներգրավված կանանց թիվը դրական հարաբերակցություն ունի կանանց քաղաքական մասնակցությանը,

2) մշակութային առանձնահատկություններով է պայմանավորված քաղաքականության մեջ կանանց ներգրավվածության աստիճանը,

3) համամասնական ընտրակարգերն ապահովում են կանանց քաղաքական մասնակցության ավելի լավ պայմաններ, քան այլ ընտրակարգերը¹¹:

Ձևն Իշխմամայի¹² և Ռիչարդ Մաթլանդի¹³ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե արևմտյան ժողովրդավարական համակարգերում վերոնշյալ գործոնները բնութագրում են կանանց քաղաքական մասնակցությունը, ապա հետկոմունիստական երկրներում իրադրությունն այլ է:

Չնայած այն հանգամանքին, որ բարձրագույն կրթական ոլորտում և աշխատաշուկայում ներգրավված կանանց թիվը զգալի մեծ է հետկոմունիստական շրջանում, քաղաքականության մեջ ներգրավվածությունը խիստ ցածր է: Այդուհանդերձ, «կանայք պետք է ավելի շատ

10. Matland R., Montgomery K. (2003), Women's Access to Political Power in Post-Communist Europe. Oxford Scholarship Online.

11. Նույն տեղում:

12. Նույն տեղում:

13. Նույն տեղում:

կրթություն ստանան, ավելի շատ աշխատեն կուսակցություններում կամ հասարակության մեջ զբաղեցնեն շատ կարևոր դիրքեր, որպեսզի ավելի գրավիչ թեկնածուներ համարվեն...: Մի խոսքով, տղամարդուն հավասար համարվելու համար կինը պետք է ոչ թե սոսկ տղամարդուն հավասար, այլ ավելին լինի»¹⁴:

Արևելա-կենտրոնական Եվրոպայի երկրներում (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Ռումինիա և Բուլղարիա) բարձրագույն կրթությամբ կանայք ավելի շատ են հետաքրքրվում քաղաքականությամբ, քան բալթյան և ԱՊՅ երկրներում ապրող կանայք¹⁵:

Ավելին, ըստ Ռ. Մաթլանդի¹⁶, չնայած ընտրական համակարգերն ունեն որոշիչ ազդեցություն արդյունաբերական հասարակարգերում կանանց քաղաքական մասնակցության վրա, դրանք չունեն որևէ ազդեցություն հետկոմունիստական զարգացող երկրներում:

Հակառակ տարածված այն կարծիքի, որ մշակութային առանձնահատկություններով է բացատրվում կանանց քաղաքական մասնակցությունը, Ջ. Իշիյաման ցույց է տալիս, որ հետկոմունիստական երկրներում այս երկու փոփոխականները չունեն էական հարաբերակցություն¹⁷:

Կանայք և քաղաքական կուսակցությունները հետկոմունիստական երկրներում

Կոմունիստական քաղաքական գաղափարախոսությունը խթանում էր կանանց ներգրավվածությունը քաղաքական կուսակցություններում: Միակ իշխող կուսակցության անդամ աշխատավոր կանանց թիվը տարեցտարի աճում էր: Այս բարեփոխումները կարող էին դրա-

14. Matland R., Montgomery K. (2003), Women's Access to Political Power in Post-Communist Europe. Oxford Scholarship Online.

15. Ko'sa'-Kova'cs M. (2004), The Situation of Women in the Countries of Post-Communism Transition. Report, Council of Europe, Parliamentary Assembly.

16. Matland R., Montgomery K. (2003), Women's Access to Political Power in Post-Communist Europe. Oxford Scholarship Online.

17. Ishiyama J. T. (2003), Women's Parties in Post-Communist Politics. East European Politics and Societies and Cultures, Vol. 17 N 2.

կան ազդեցություն ունենալ հետագա քաղաքական մշակույթի վրա, եթե նրանք չպարտադրվեին ռեժիմի կողմից առանց մշակութային առանձնահատկությունների որևէ նկատառման: Հետևաբար պատահական չէ, որ ժողովրդավարության անցման ընթացքում նորաստեղծ քաղաքական կուսակցություններում, ինչպես նաև քաղաքական կյանքում առհասարակ կանանց թիվը կտրուկ նվազեց: Այնուամենայնիվ, քաղաքական նոր մթնոլորտը հնարավորություններ ստեղծեց կանանց կուսակցություններին՝ գործունեություն ծավալելու համար:

Հերբերտ Կիթշելը¹⁸ հետկոմունիստական երկրների կուսակցությունները նկարագրելիս տարբերակում է դրանց երեք իդեալական տեսակ՝

1. *խարիզմատիկ կուսակցություններ*, որոնք կառուցվում են մեկ անհատ առաջնորդի շուրջ նրա հանդեպ հավատարմության զգացումով,

2. *հաճախորդային կուսակցություններ*, որոնք հիմնված են հավատարիմ անդամներին հովանավորելու խոստման վրա,

3. *ծրագրային կուսակցություններ*, որոնք հիմնված են լավ գործառող հասարակության գաղափարախոսության վրա:

Հետկոմունիստական երկրներում կուսակցություններն առավել հակված են լինելու հաճախորդային: Այդպիսի կուսակցություններում առաջնորդը հիմնական որոշում կայացնողն է: Կուսակցության մեջ կանանց մասնակցությունը կախված է նրանց կամքից: Ընդհանուր առմամբ կանայք հազվադեպ են անդամակցում այս կուսակցություններին: Զլինելով դեկավարության ներքին շրջանակից՝ նրանք չեն համարվում նախընտրելի թեկնածուներ: Նման կուսակցություններն անտեսում են կանանց ներկայացվածության համար իրականացվող բարոգարչափեսքը՝ ազդեցություն չկրելով դրանցից:

Ի տարբերություն հաճախորդային կուսակցությունների՝ գաղափարախոսությամբ առաջնորդվող ծրագրային կուսակցությունները մտահոգված են կուսակցություններում կանանց ներգրավվածությամբ:

18. Kitschelt H. (1995), Party Politics, Vol. 1 N 4.

Սրանք ավելի նման են կուսակցությունների արևմտյան տեսակին և լիովին վայելում են վերջիններիս աջակցությունը: Կուսակցությունների այս տեսակը գործում է բալթյան երկրներում, որոնք աշխարհագրական առումով մոտ են գտնվում սկանդինավյան երկրներին ու բուռն համագործակցություն են ծավալում նրանց հետ:

Կանանց կուսակցությունները հետկոմունիստական քաղաքականության մեջ

1990-ական թվականներից ի վեր կանանց կուսակցություններ են ձևավորվել հետկոմունիստական մի քանի երկրներում: Այդ կուսակցություններից մի քանիսը հաջողություններ են ունեցել իրենց գործունեության վաղ փուլում, սակայն հետագայում չեն կարողացել գոյատևել: Կանանց կուսակցությունները գործունեության սկզբնական փուլում գաղափարախոսության առումով հիմնվում էին մայրության և ընտանեկան արժեքների վրա: Նրանք իրենց դերը տեսնում էին ընտանիքին և սոցիալական ապահովությանն առնչվող խնդիրների բարձրացման շրջանակներում: Կինը և նրա իրավունքները հազվադեպ էին քննարկվում վերոնշյալ կուսակցությունների կողմից: Օրինակ՝ «Ռուսաստանի կանայք» կուսակցությանը հաջողվեց դրական հասարակական կարծիք ձևավորել, քանի որ կուսակցության գաղափարախոսությունը հիմնված էր այն համոզմունքի վրա, որ Ռուսաստանի մայրերը կարող են փրկել երկիրը¹⁹:

Արևմտյան ֆեմինիստական գաղափարախոսությունն անընդունելի էր նրանց համար: Օրինակ՝ Յայաստանի «Շամիրամ» կանանց քաղաքական կուսակցության մի ներկայացուցիչ հարցազրույցի ժամանակ ասել է. «Շատերը մեզ ֆեմինիստ էին անվանում, սակայն մենք միշտ քարոզել ենք ուժեղ տղամարդու կերպարը»²⁰:

Կանանց կազմակերպությունների մեծ մասը կազմավորվել էր

կոմունիստական ժամանակաշրջանի կառույցների և կազմակերպությունների հիման վրա: Նրանք կամ ամբողջովին վայելում էին տղամարդկանց կողմից ղեկավարվող քաղաքական կուսակցությունների աջակցությունը, կամ իրենց շարքերում հարուստ փորձով աչքի ընկնող հզոր առաջնորդներ ունեին: Ցավոք, կանանց կուսակցություններից ոչ մեկին չհաջողվեց տարիների ընթացքում իրենց ակտիվության կայունությունն ապահովել: Նրանց գործունեության անկայունությունը բացատրվում է մի քանի գործոններով: Քաղաքական ուժերի կողմից աջակցություն ունեցող կուսակցություններն անկարող էին անկախ գործել այն դեպքում, երբ նրանց հովանավոր կուսակցությունները զրկվեցին իշխանությունից: Անկախ գործունեություն նախընտրող կուսակցություններն քաղաքական այլ կուսակցությունների հետ չէին համագործակցում, ուստի մրցակցության մեջ մենակ էին և չկարողացան գոյատևել: Իսկ նշանավոր կանանց կողմից ղեկավարվող կուսակցությունները կորցրին իրենց դիրքն ու իշխանությունը. կամ կուսակցության ղեկավարը լքեց կուսակցությունը, կամ այդ կանայք հեղինակագրկվեցին:

19. Ishiyama J. T. (2003), Women's Parties in Post-Communist Politics. East European Politics and Societies and Cultures, Vol. 17, N 2.

20. «Աժ ընտրություններ՝ v1.0-v4.0»՝ 1995 թվականի ընտրությունները:

ՀՈՐՀՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՈԶՆԴՈՏՆԵՐԸ

Կանանց քաղաքական մասնակցությունը. զարգացման ընթացքը

Հայաստանում կանանց իրավունքների հարցը արմատացած է եղել դեռևս 6-րդ և 7-րդ դարերի պատմության մեջ, երբ այդ ժամանակաշրջանի օրենքների և կանոնների համաձայն՝ կանայք ու տղամարդիկ սեփականության, ամուսնալուծության ու կրկնակի ամուսնության հավասար իրավունքներ և հնարավորություններ ունեին: Սեռերի միջև հավասարության մասին հղում կարելի է գտնել անգամ հայկական ազգային էպոսում «Սասնա ծռերում», մասնավորապես «Առյուծն առյուծ է, լինի էգ, թե ործ» բնորոշման մեջ:

Հին Հունաստանի նշանավոր փիլիսոփա Զսենոֆոնը նշել է, որ հայ կանայք հավասար իրավունքներ և արտոնություններ են ունեցել, այդ թվում՝ տղամարդկանց հետ փողոցում ազատ խոսելու և համայնքային կյանքին մասնակցելու իրավունքներ:

Գենդերային հավասարության և կանանց իրավունքների վերաբերյալ ընկալումները հայ ժողովրդի պատմության ընթացքում զգալիորեն փոփոխվել են՝ ազդեցություն կրելով բաբելոնյան, հելլենիստական և բյուզանդական կայսրություններից, ինչպես նաև արաբական, թուրքական և ռուսական քաղաքակրթություններից: Արդյունքում արևմուտյան և արևելյան մշակույթների ազդեցությունները տեսանելի են ոչ միայն հայկական պոեզիայում, արվեստում, երաժշտության և ճարտարապետության մեջ, այլ նաև հայ հասարակության մեջ կնոջ դերի ընկալումներում:

Տղամարդկանց և կանանց հավասարությանն ուղղված մեծ քայլ էր Մխիթար Գոշի՝ 12-րդ դարում գրված «Դատաստանագիրքը», ըստ որի՝ կանայք և տղամարդիկ ունեին հավասար իրավունքներ և կարող էին ժառանգել ու ունենալ սեփականություն:

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ընկալումները, ըստ երևույթին, հայ հասարակության մեջ համեմատաբար ուժեղ են եղել մինչև ուշ միջնադար: Վարդան Հացունին իր «Հայ կինը պատ-

մության առաջ» գրքում գրում է. «Հայ կանայք կորցրին իրենց իրավունքներն ու ազատությունները այլ ազգերի հետ ձուլվելու մշտական վախի պատճառով»¹:

Պետք է նշել, որ պատմության ընթացքում միջնադարում և այնուհետև 19-րդ և 20-րդ դարերում, կանայք ունեին տղամարդկանց աջակցությունն իրենց իրավունքներն առաջ տանելու և քաղաքական կյանքով զբաղվելու հարցերում: Առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.) կանայք ստացան ընտրելու և ընտրվելու իրավունք: Արդյունքում ընտրվեց երեք կին պատգամավոր²:

Համաշխարհային կանանց շարժմանը զուգահեռ հայ կանայք նույնպես սկսեցին պաշտպանել իրենց իրավունքները 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: 18-րդ դարի հայտնի հայ հասարակական գործիչ, գրող և փիլիսոփա Շահամիր Շահամիրյանը 1773 թվականին պաշտոնական մի փաստաթղթում գրում է. «Յուրաքանչյուր անհատ, հայ կամ այլ ազգության կին թե տղամարդ՝ ծնված Հայաստանում կամ Հայաստան տեղափոխված այլ երկրներից, պետք է ապրի հավասար և ազատ լինի բոլոր գործերում: Ոչ ոք իրավունք չունի կարգադրելու մեկ այլ անձի, իսկ նրա աշխատանքը պետք է վարձատրվի, ինչպես ցանկացած այլ աշխատանք՝ ըստ Հայաստանի օրենքի»³: Շահամիրյանի այս փաստաթղթում, որը շատերը համարում էին ապագա հայկական սահմանադրության նախագիծ, նաև նշվում էր, որ «յուրաքանչյուր տղամարդ պետք է հարգի և մեծարի կանանց», ինչպես նաև «կանայք և աղջիկները չպետք է ծածկեն իրենց գլուխները հանրության մեջ»⁴:

Հայ կանայք ընտրելու իրավունք ստացել են 1918 թվականին: Նույնիսկ մինչ այդ, Օսմանյան կայսրությունում հայկական համայնքի՝ 1863 թվականին ընդունած Ազգային սահմանադրության համաձայն, սոցիալական և քաղաքական կյանքով հետաքրքրված կանայք հնարա-

1. Գենդերային հետազոտություններ, խմբ. Ջ. Հասրաթյան, «Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիա», (N2), Երևան, 2001:
2. Participation of Women in Public and Political Life in the Republic of Armenia (2013). Yerevan School of Political Studies of the Council of Europe, Yerevan, "Press Club Ararat".
3. Aslanyan S., Women's Rights in Armenia. Social Watch (published online).
4. **Նիկողոսյան Ա.**, Գենդերային հետազոտություններ, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Երևան, 2005:

վորություն ունեին մասնակցելու Ազգային ժողովի նիստերին⁵: Կանայք Ազգային ժողովում նաև համակարգում էին մշակութային առումով ընդունելի խնդիրներ, ինչպես օրինակ՝ երեխաների կրթությունը, բարեգործության հարցերը և հիվանդանոցների հետ կապված աշխատանքներ: Փաստորեն՝ 19-րդ դարի երկրորդ կեսին կանանց իրավունքների բարձրաձայնումը արդի մշակութային համակարգում տնտեսական խոսույթի դեմ հիմնական փաստարկներից մեկը դարձավ⁶: Ազգայնական խմբերն օգտագործում էին «կանանց հարցը» հայ ժողովրդի արևմտականացման (վեստերնիզացիա) դեմ իրենց հռետորական հակաբարոզչությունում: Ի հակադրություն նրանց՝ հայկական ժողովրդի առաջադիմական մասը, մասնավորապես Օսմանյան կայսրությունում, բարձրացնում էր կանանց քաղաքական և տնտեսական հզորացման հարցը՝ այն համարելով ազգային ինքնության և զարգացման հիմնական միջոցներից մեկը: Հետաքրքրական է, որ, ի տարբերություն մեր ժամանակների, 19-րդ դարում կանանց իրավունքների պաշտպանների թվում այնպիսի հայտնի մտավորականներ էին, ինչպիսիք են՝ Գրիգոր Արծրունին, Միքայել Նալբանդյանը, Մաթեոս Մամուրյանը և ուրիշներ⁷:

Օրինակ՝ Պետրոս Սիմոնյանը՝ 19-րդ դարի վերջին Թիֆլիսում տպագրվող «Մեղու» հանդեսի գլխավոր խմբագիրը, ամսագրում զգալի տեղ էր հատկացնում կանանց հիմնախնդիրներին⁸: Գ. Արծրունին պաշտպանում էր տղաների և աղջիկների համար խառը դպրոցների ստեղծման գաղափարը⁹:

20-րդ դարասկզբին կանանց հիմնախնդիրներին նվիրված մի քանի ամսագրեր էին տպագրվում նաև Արևմտյան Հայաստանում: Դրանց թվում էին հայտնի «Ծաղիկ», «Արտեմիս» և «Հայ կին» հանդեսները:

19-րդ դարասկզբին հայտնի կին գրողներ Սրբուհի Տյուսաբը և

5. **Նիկողոսյան Ա.**, Գենդերային հետազոտություններ, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Երևան, 2005:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:

Չապել Ասատուրը կազմեցին «Կանանց իրավունքների հռչակագիր»՝ բարձրացնելով կանանց և տղամարդկանց հավասարության, կնոջ կողմից մասնագիտություն ընտրելու և հանրային կյանքին մասնակցելու իրավունքի և այլ հարցեր¹⁰:

Ս. Տյուսաբի կարծիքով՝ հասարակությունն անբարոյական է, եթե այնտեղ կանայք ճնշված են, նրանց իրավունքներն ու արժանապատվությունը՝ ոտնահարված: Իր վեպերում Ս. Տյուսաբը բարձրացնում էր բռնի ամուսնությունների հարցը՝ պնդելով, որ միայն վարձատրվող աշխատանքի դեպքում կինը կարող է ազատագրվել¹¹:

1918 թվականից մինչև 1920 թվականը կանայք կազմում էին Ազգային ժողովի 8 %-ը, և առաջին կին դեսպանն աշխարհում ազգությամբ հայ Դիանա Աբգարն էր: Վերջինս նշանակվել էր Չայաստանի դեսպան Ճապոնիայում:

19-րդ դարի վերջին հայ կանայք տղամարդկանց զուգահեռ հիմնում էին կազմակերպություններ՝ անդամակցելով քաղաքական տարբեր կուսակցությունների: 19-րդ դարի վերջին Կոստանդնուպոլսում գործող 630 կազմակերպություններից 60-ը կանանց կազմակերպություններն էին¹²: Թեև այս կազմակերպությունները հիմնականում զբաղվում էին բարեգործությամբ և աղքատախնամությամբ, դրանք նաև ճանապարհ էին հարթում կանանց քաղաքացիական ու քաղաքական ակտիվիզմի համար: Այդ նշանավոր կազմակերպությունների թվում էին «Կարոցասեր տիկնանց միությունը» և «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը»՝ երկուսն էլ հիմնված 1879 թվականին¹³:

Չարկ է նշել, որ 19-րդ դարի հայ կանանց շարժումը կրում էր եվրոպացի կանանց շարժման ազդեցությունը¹⁴, սակայն ուներ նաև վառ արտահայտված ազգային, ինչպես նաև ազգայնական ենթատեքստեր: 19-րդ դարում Կոստանդնուպոլսի հայերը, ներշնչված եվրոպական

10. Kirakosyan S., Margaryan N., Moral Mistresses of the Kitchen: Eyewink into the Past.
11. Գենդերային հետազոտություններ, խմբ. Ջ. Չասրաթյան, «Յամալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», (N2), Երևան, 2001:
12. Նույն տեղում:
13. Նիկողոսյան Ա., Գենդերային հետազոտություններ, «Յամալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Երևան, 2005:
14. Բարեգործական առաքելությամբ զբաղվող կանանց մեծ մասն իրենց ուսումը ստացել էին Փարիզում:

լուսավորչական շարժումով, իրենց առաքելությունն էին համարում կրթել բոլոր ազգակիցներին նույնիսկ հեռավոր գյուղերում՝ կրթության և լուսավորության միջոցով ձգտելով պահպանել ազգային արժեքները: Չնայած նշված ավանդույթը ներուժ ուներ վերածվելու կանանց ազգային շարժման, սակայն դեպքերն այդ ուղղությամբ չզարգացան: Այն փոխարինվեց հավասարության խորհրդային գաղափարախոսությամբ, որը չնայած օգնեց կանանց առաջընթաց արձանագրելու գործում, սակայն զգալիորեն նվազեցրեց շարժման ազգային և մշակութային խոսույթները (դիսկուրսները): Մի նոր դժվար փուլ սկսվեց խորհրդային Միության փլուզումից հետո: Իսկ ներկայումս կանանց շարժումը հիմնականում ներկայացված է հասարակական կազմակերպությունների (ՉԿ) և անհատ ակտիվիստների կողմից:

Չնայած 1990 թվականից ի վեր գենդերային հավասարության ոլորտում արձանագրվել են դրական որոշ զարգացումներ, այդ թվում՝ միջազգային համաձայնագրերի ընդունումը, ինչպիսին է, օրինակ, 1993 թվականի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» հռչակագիրը, կյանքի բոլոր ասպարեզներում կանանց ներկայացվածության համար դեռևս կան բազմաթիվ խոչընդոտներ մակրո և միկրո մակարդակներում, քաղաքական մասնակցության և որոշումների կայացման բնագավառներում:

Չայաստանի օրենսդրական համակարգն ունի գենդերային զգալունություն: Ընդ որում՝ Չայաստանը վավերացրել է գենդերային հավասարության մի շարք համաձայնագրեր և կոնվենցիաներ: Չզալի փոփոխություններ են արվել նաև ազգային օրենսդրությունում:

2007 թվականին ՉՉ ընտրական օրենսգրքում փոփոխությունների շնորհիվ ներմուծվեց 15 %-ի քվոտա ապահովելու համար կանանց ներգրավվածությունը կուսակցությունների ընտրական ցուցակներում: 2011 թվականին այդ ցուցանիշը հասավ 20 %-ի: Ավելին՝ ընտրական ցուցակը պետք է կազմված լիներ այնպես, որ կին թեկնածու լիներ յուրաքանչյուր հինգում՝ սկսած երկրորդ տեղից¹⁵: Այնուամենայնիվ

15. Կանանց քաղաքական մասնակցությունը Չայաստանի Յանապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին, «Յամալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Գենդերային հետազոտությունների կենտրոն, Երևան, 2012:

նայնիվ, գենդերային հավասարության հիմնական թիրախներին դեռ պետք է հասնել, քանի որ կանանց ներգրավվածությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և հասարակական ոլորտներում մտնում է սահմանափակ: Վերջին մի քանի տարիներին Հայաստանում կանանց քաղաքական և տնտեսական մասնակցությունը նվազել է: Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի «Գենդերային ճեղքվածքի գլոբալ զեկույցի» 2015 թվականի տվյալների՝ Հայաստանը, 2014 թվականի համեմատ երկու տեղ զիջելով, 145 երկրների շարքում զբաղեցնում էր 105-րդ տեղը: 2011 թվականին Հայաստանը 84-րդ տեղում էր: Նշված փոփոխությունը հավանաբար պայմանավորված է Հայաստանում կանանց տնտեսական և քաղաքական մասնակցության անկումով:

2010 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2011 թվականին՝ «Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների 2011-2015 թթ. ծրագիրը»: 2013 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին» օրենքը:

1980-ական թվականների վերջին իրականացված կրթական բարեփոխումների շնորհիվ բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետների 61 %-ը և աշխատավորների 51 %-ը կանայք էին: Մինչ վերակառուցման («պերեստրոյկայի») ժամանակաշրջանը սոցիալ-քաղաքական կյանքում կանանց պաշտոնական ներկայացվածությունն ապահովում էին խորհրդային Միության ղեկավարները, սակայն կանայք չէին հայտնվում ղեկավար բարձր պաշտոններում: խորհրդային Միության վերջին տարիներից սկսած՝ կանայք կորցրին որոշումների կայացման համակարգերում իրենց ներկայացվածության մեծ մասը, ինչը շարունակվեց նաև հետխորհրդային Հայաստանում¹⁶:

Ըստ Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների՝ օրենսդրական կառավարման օղակներում կանայք ավելի շատ էին ներկայացված այն

16. Ishkanian A. (2004), Gendered transitions: The impact of the post-Soviet transition on women in central Asia and the Caucasus. Perspectives on Global Development and Technology, Vol. 3, Issue 3.

ժամանակ, երբ գործում էր քվոտայի համակարգը: Այսինքն՝ կանայք ավելի շատ էին ներկայացված Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդում 1985 թվականին և ՀՀ՝ 2007 ու 2012 թվականների խորհրդարաններում, երբ երեք դեպքում էլ գենդերային քվոտայի համակարգը գործում էր¹⁷:

Աղյուսակ 1

Կանանց ներկայացվածությունն Ազգային ժողովում

Գումարման տարի	Կանանց ներկայացվածությունը
1985 Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդ	35.6 %
1990 ՀՀ Գերագույն խորհուրդ	3.5 %
1995 ՀՀ Ազգային ժողով	6.3 %
1999 ՀՀ Ազգային ժողով	3.1 %
2003 ՀՀ Ազգային ժողով	5.3 %
2007 ՀՀ Ազգային ժողով	9.2 %
2012 ՀՀ Ազգային ժողով	10.7 %
2016 թ.-ի դրությամբ ¹⁸	9.9 %

Անկախության 20 տարիների ընթացքում օրենսդրական կառավարման դաշտում կանանց թիվն աճել է ընդամենը 7 %-ով, այն էլ՝ գենդերային քվոտաների շնորհիվ: Ինչպես կանխատեսում են փորձագետները, «նման ցուցանիշներով առնվազն 25 տարի պետք է սպասել մինչև 20 %-ի ներկայացվածության հասնելը»¹⁹:

Ներկայիս Ազգային ժողովում 131 խորհրդարանականներից ըն-

17. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Գենդերային հետազոտությունների կենտրոն, Երևան, 2012:

18. Արփինե Հովհաննիսյանի նախարար նշանակվելու պատճառով կանանց տոկոսային հարաբերակցությունը 2012 թ. համեմատությամբ նվազել է:

19. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Գենդերային հետազոտությունների կենտրոն, Երևան, 2012:

դամենը 13-ն է կին, և սա այն դեպքում, երբ կիրառվել է 20 % քվոտայի համակարգը: Կանայք էլ ավելի քիչ նախաձեռնող են մեծամասնական ընտրակարգում: Այս ընտրակարգով առաջադրված թե՛ թեկնածու, թե՛ ընտրված կանանց թիվը ընտրությունից ընտրություն նվազում է: Այսպես, եթե 1995 թվականին մեծամասնական ընտրակարգով ընտրվել է 4 կին, ապա 2012 թվականին նրանց թիվը նվազել է 2-ով (տես Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մեծամասնական ընտրակարգով ընտրված կանանց թիվը հինգ խորհրդարաններում

	1995	1999	2003	2007	2012
Մեծամասնական ընտրակարգով ընտրված կանանց թիվը	4	2	1	-	2

Փորձագետները կանանց թվաքանակի այս անկումը բացատրում են ծանր մրցակցության, «մուլթ» ու անարդար միջոցների կիրառմամբ, բացասական քարոզչության և մասամբ՝ նաև մեծամասնական ընտրատարածքների կրճատմամբ²⁰: Հարկ է նշել, որ մեծամասնական ընտրակարգում կին թեկնածուների ցածր թիվը նաև բացատրվում է նրանով, որ այդ կանայք հանդես են գալիս իբրև անկախ թեկնածուներ: Այս կանանց մեծամասնությունը՝ ընտրված կամ չընտրված, իրենց ընտրատարածքներում ունեցել են բարձր ցուցանիշներ:

Հայաստանում քաղաքականության մեջ ներգրավվածության կանանց ցածր ցուցանիշները լայնորեն կիրառվող ինքնաբացարկի հետևանք են, որը կառավարման բոլոր մակարդակներում կանանց ներայացվածությունը խոչընդոտող գործոններից մեկն է: Դիտարկենք օրինակ: 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների

20. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին, «Համալսարանական կրթությամբ կանանց առօրյա ցիցի», Գենդերային հետազոտությունների կենտրոն, Երևան, 2012:

հետընտրական շրջանում 102 թեկնածու ինքնաբացարկ հայտնեց: Նրանցից 26-ը կանայք էին: Տղամարդ թեկնածուների ինքնաբացարկ պայմանավորված էր կառավարական մարմիններում բարձր պաշտոններ զբաղեցնելու հանգամանքով, իսկ կանանց ընդամենը 30 %-ն ուներ նշված պրակտիկան կիրառելու նույն դրդապատճառը: Դեպքերի 70 %-ում պատճառներն անհայտ էին, քանի որ կանայք չէին ցանկանում մեկնաբանել իրենց արարքը: Կարելի է միայն ենթադրել, որ նրանց ներկայացրած քաղաքական կուսակցություններն էին ստիպել նման որոշում կայացնել: Ընդ որում՝ այդ կանանց մեծ մասը խորհրդարանում ներկայացնում էր առավելագույն թվով մանդատ ունեցող քաղաքական կուսակցություններ²¹:

Ինքնաբացարկի վերոնշյալ պրակտիկան խոչընդոտ է քվոտայի համակարգի կիրառման համար, քանի որ այն չէզոքացնում է այդ համակարգի նպատակը:

2015 թվականի հանրաքվեի (ռեֆերենդում) արդյունքում հաստատված ՀՀ սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ կառավարման ձևը նախագահականից փոխվեց խորհրդարանականի, արդյունքում նախընտրելի դարձավ համամասնական ընտրակարգը:

Կին թեկնածուների ինքնաբացարկը գործարկվեց ոչ միայն խորհրդարանական, այլև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Օրինակ՝ 2014 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրվեց 7 կնոջ թեկնածություն, սակայն անմիջապես ընտրությունների նախօրեին նրանցից երկուսը ինքնաբացարկ հայտարարեցին:

Խորհրդարանում կանանց սակավ ներկայացվածությանը անդրադառնալու և առնվազն 30 % գենդերային քվոտա ապահովելու համար միջազգային և տեղական 60 կազմակերպություններից կազմված Գենդերային թեմատիկ խումբը առաջարկություններով հանդես եկավ Ընտրական օրենսգրքի նախագծի քննարկումների

21. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին, «Համալսարանական կրթությամբ կանանց առօրյա ցիցի», Գենդերային հետազոտությունների կենտրոն, Երևան, 2012:

Աղյուսակ 3
Կանանց թիվը տեղական ինքնակառավարման
մարմիններում (ՀՀ ազգային վիճակագրական
ծառայություն, 2003-2016 թթ.)

Ժամանակ: Խումբը առաջարկեց կուսակցական ընտրացուցակները կազմել այնպես, որ առաջին երկու տեղերը զբաղեցնեն տարբեր սեռի ներկայացուցիչներ, և կանայք շարունակաբար ներկայացված լինեն յուրաքանչյուր եռյակում: Այս պայմանով 30 % գենդերային քվոտան երաշխավորված կլիներ: Ի հավելումս սրան՝ առաջարկ արվեց ինքնաբացարկ ներկայացրած թեկնածուների մանդատները հանձնելու ընտրացուցակի հաջորդականությամբ միևնույն սեռի այլ ներկայացուցիչ:

Վերոնշյալ առաջարկները միայն մասնակիորեն ընդունվեցին: Մասնավորապես ցուցակները նախկին 20/80-ի փոխարեն կձևավորվեն 25/75 համամասնությամբ: Տեղերը կտրամադրվեն ըստ կուսակցության ընտրական ցուցակների: Արդյունքում, եթե նույն կատեգորիայում բոլոր տեղերը զբաղեցնեն նույն սեռի ներկայացուցիչներ, վերջին թեկնածուն իր տեղը կգիջի չներկայացված սեռի ներկայացուցիչ: Ըստ օրենքի նախագծի հեղինակների՝ այս մեխանիզմը պետք է երաշխավորի կանանց ներկայացվածությունը ԱԺ յուրաքանչյուր խմբակցությունում:

Տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային կազմը Եական փոփոխությունների չի ենթարկվել: Այսպիսով՝ 2000-ական թվականներին Հայաստանում ոչ մի կին չի ընտրվել քաղաքապետի պաշտոնում կամ նշանակվել մարզպետ Հայաստանի 10 մարզերից մեկում: Գյուղապետ ընտրված կանանց թիվը նույնպես Եականորեն չի փոխվել (2-3 %) (տես Աղյուսակ 3):

Կին նախարարների և փոխնախարարների թիվը նույնպես շատ փոքր է, և տարիների ընթացքում այդ ցուցանիշը զգալի փոփոխության չի ենթարկվել:

Ներկայումս ունենք միայն երեք կին նախարար՝ մշակույթի, սփյուռքի և արդարադատության: Արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը նշանակվել է վերջերս՝ 2015 թվականին: Ա. Հովհաննիսյանի նշանակումն աննախադեպ էր և սոցիալական ցանցերում առաջացրեց տհաճ ալիք՝ նրան թիրախավորելով թե՛ իբրև մասնագետ, թե՛ իբրև կին: Այդ բացասական վերաբերմունքը որոշակիորեն պայմանավորված էր նրա զբաղեցրած ոլորտով. արդարադատությունը երբեք

Տարի	Մարզպետ	Քաղաքապետ	Գյուղապետ	%
2002	0	0	16	2 %
2003	0	0	17	2 %
2004	0	0	17	2 %
2005	0	0	21	2 %
2006	0	0	23	3 %
2007	0	0	23	3 %
2008	0	0	23	3 %
2009	0	0	24	3 %
2010	0	0	24	3 %
2011	0	0	22	2 %
2012	0	0	20	2 %
2016	0	0	18	2 %

չի ընկալվել որպես «կանացի» ոլորտ:

2016 թվականի դրությամբ կին նախարարների և փոխնախարարների թիվը յոթն է՝ ավելի քիչ նախորդ տարիների համեմատ:

Աղյուսակ 4

Նախարարներ և փոխնախարարներ (ՀՀ ազգային վիճակագրության ծառայություն, 2003-2016 թթ.)

Տարի	Կին նախարարներ և փոխնախարարներ	%
2002	8	8 %
2003	7	7 %
2004	7	7 %
2005	5	5 %
2006	6	6 %
2007	5	5 %
2008	7	7 %
2009	7	7 %
2010	10	10 %
2011	10	10 %
2012	11	11 %
2016	7	7 %

Գեներային հավասարության դրական միտում է արձանագրվել դատական համակարգում: Կանանց թիվն այստեղ նկատելիորեն աճել է: Նախքան 2009 թվականը կանանց թիվը չէր գերազանցում 22-ը, իսկ 2009 թվականից սկսած՝ նրանց թիվը կրկնապատկել է՝ 22-ից հասնելով 47-ի: Վերջերս կանանց թիվն այս համակարգում նվազել է, և դատավորների միայն 24 %-ն է կին: Սահմանադրական դատարանում առաջին կին դատավորը նշանակվել է 2010 թվականին: Ներկայումս Սահմանադրական դատարանի ինը դատավորներից երկուսը կանայք են:

Աղյուսակ 5

ՀՀ դատական համակարգի կին անդամները (ՀՀ ազգային վիճակագրության ծառայություն, 2002-2016 թթ.)

Տարի	Կին դատավոր	%
2001	21	21 %
2002	18	18 %
2003	21	21 %
2004	20	20 %
2005	19	19 %
2006	21	21 %
2007	22	22 %
2008	21	21 %
2009	45	21 %
2010	46	22 %
2011	45	37 %
2012	46	39 %
2016	47	24 %

Քաղաքականության մեջ կանանց հանրային ընկալումը

Գեներային հավասարությունը Հայաստանում տալիսապալի ինդիք է, որն ընդգծում են ոչ միայն ֆեմինիստները, այլև հանրային կարծիքը, որն ակնհայտ է դառնում անցկացվող հարցումների արդյունքում: Ըստ «Հայաստանի գեներային բարոմետր²²» հետազոտությու-

22. «Հայաստանի գեներային բարոմետր», Գեներային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոն, Երևան, 2015:

յան՝ հարցվողների 58 %-ը համաձայն է, որ հայ հասարակության մեջ կա տղամարդկանց և կանանց անհավասարություն: Նույն հետազոտությունը ցույց է տալիս, որ կանանց իրավունքները ոտնահարվում են կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ քաղաքականության բնագավառում:

Կանանց քաղաքական մասնակցության շուրջ հասարակական կարծիքը միանշանակ չէ: Սակայն տղամարդ քաղաքական գործիչներն ավելի դրականորեն են ընդունվում հասարակության կողմից, քան կին քաղաքական գործիչները: Ըստ «Հայաստանում սոցիալ-քաղաքական մասնակցության գենդերային հարթությունները²³» հետազոտության՝ հարցվողների 85 %-ը կարծում է, որ հանրային կարծիքը դրական է տղամարդկանց և 46 %-ը՝ կանանց քաղաքական գործունեության մասին: Ընդ որում՝ տղամարդկանց քաղաքական գործունեության մասին միանշանակորեն դրական արտահայտված հարցվողների թիվը (60 %) մի քանի անգամ գերազանցում է կանանց քաղաքական կարիերային միանշանակորեն կողմ արտահայտված հարցվողների թվին (11 %)²⁴: Այս դեպքում գենդերային կարծրատիպերը կարևոր դեր են խաղում կանանց քաղաքական մասնակցության շուրջ վերաբերմունքի հարցում: Մասնավորապես ըստ «Համաշխարհային արժեքների հետազոտության» (2010-2014)²⁵՝ հարցվողների 63 %-ը համաձայն է այն պնդմանը, որ տղամարդիկ ավելի լավ քաղաքական առաջնորդներ են, քան կանայք: Ավելին՝ ավելի շատ տղամարդիկ (74 %), քան կանայք (53 %) են համամիտ նշված տեսակետին:

Ընդհանուր առմամբ տղամարդիկ ավելի լավ քաղաքական առաջնորդներ են, քան կանայք:	Ընդամենը	Տղամարդ	Կին
Միանշանակ համաձայն եմ	22.7%	30.8%	15.1%
Համաձայն եմ	40.8%	43.5%	38.3%
Համաձայն եմ	24.8%	13.2%	31.6%
Ընդհանրապես համաձայն չեմ	9.1%	6.4%	11.5%
Ընդհանրապես համաձայն չեմ	3.4%	3%	3.4%

23. Hovhannisyan H., Zakaryan L., Osipov V. (2011), Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia. UNFPA, OSCE, Yerevan.

24. Նույն տեղում:

25. World Value Survey Armenia (2010-2014).

Ըստ Գենդերային ուսումնասիրությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի՝ 2014 թվականին իրականացված ուսումնասիրության՝ հարցվածների ավելի քան կեսը համաձայնել է, որ տղամարդիկ ավելի լավ քաղաքական առաջնորդներ են, քան կանայք, և նախընտրելի է, որ ընտրվեն տղամարդիկ²⁶: Մինևնույն ժամանակ հարցվածների 68 %-ը կարծում է, որ գենդերային հավասարությունը տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների առումով ժողովրդավարության էական առանձնահատկություններից է²⁷:

Դեռևս գոյություն ունեն կարծրատիպեր, ըստ որոնց՝ քաղաքականությամբ զբաղվում են անձնական կյանքում խնդիրներ ունեցող կանայք: Հարցված տղամարդկանց 48 %-ը և կանանց 39 %-ն են համաձայն նշված կարծիքին: Հատկանշական է, որ գործարար կանանց հանդեպ վերաբերմունքն ավելի դրական է: Ի պատասխան այն հարցին, թե արդյոք գործարարությամբ (մասնավոր ձեռներեցություն) զբաղվող կինն անձնական կյանքում խնդիրներ ունի, հարցված տղամարդկանց 60 %-ը և կանանց 53 %-ը բացասական պատասխան են տվել²⁸: Այս գործոնները, ներառյալ Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությունը կանխող գենդերային կարծրատիպերը, ավելի մանրամասնորեն կքննարկվեն ստորև:

Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնները

Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոններն ուսումնասիրվել են երկու տեսանկյունից՝ կին քաղաքական գործիչների ընկալումները և հասարակության ընկալումները կանանց քաղաքական մասնակցության արգելքների մասին:

Ըստ «Հայաստանում սոցիալ-քաղաքական մասնակցության

26. «Հայաստանի գենդերային բարոմետր», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոն, Երևան, 2015:

27. World Value Survey Armenia (2010-2014).

28. Hovhannisyan H., Zakaryan L., Osipov V. (2011), Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia. UNFPA, OSCE, Yerevan.

գենդերային հարթությունները»²⁹ հարցման արդյունքի՝ կանանց քաղաքական կարիերա չհետապնդելը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. կանանց առաջնային ուշադրության կենտրոնում ընտանիքն է (45 %),
2. կանանց ցածր ինքնավստահությունը (35 %),
3. հասարակության վստահության պակասը կին քաղաքական գործիչների նկատմամբ (33 %),
4. կանանց առաջադիմությանը նպաստող մեխանիզմների քաղաքացիությունը (օրինակ՝ կանանց անհամապատասխան ներկայացվածությունն քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում) (29 %)՝³⁰:

Մեկ այլ հետազոտության³¹ համաձայն՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնող կանայք ընտանեկան կախվածությունը կամ նվիրվածությունը համարել են կանանց քաղաքական գործունեության հիմնական խոչընդոտ:

Ընտանեկան պարտականությունները որպես կանանց քաղաքական մասնակցության խոչընդոտ

Ընտանիքը առաջնահերթությունն է հայ հասարակության մեջ: Չեռևաբար կանանց որոշումները մեծապես կրում են ընտանիքի անդամների կարծիքների ազդեցությունը: Այն դեպքում, երբ ընտանիքը դեմ է կարիերայում կնոջ առաջխաղացմանը, կինը պետք է զոհաբերի իրեն ընտանիքի համար: Չեռևաբար կենցաղը վարելու և երեխաներ մեծացնելու կնոջ դերը կարևորվում է նրա հանրային գործունեությունից: Չարցվածների ավելի քան 90 %-ը կարծում է, որ կնոջ գլխավոր առաքելությունը երեխա ունենալն է: Եվ գրեթե բոլորը կարծում են, որ

29. **Hovhannisyan H.**, Zakaryan L., Osipov V. (2011), Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia. UNFPA, OSCE, Yerevan.

30. Նույն տեղում:

31. **Ղազարյան Պ.**, Կանանց կողմից քաղաքական իրավունքների իրացման հիմնախնդիրը ՉՉ-ում (սոցիոլոգիական հետազոտություն), Երևան, 2013:

կնոջ համար առաջնահերթային պետք է լինի ոչ թե կարիերան, այլ ընտանիքը³²:

Ժամանակի կառավարման ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանայք հինգ անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում կենցաղային և չվարձատրվող աշխատանքների վրա, քան տղամարդիկ³³: Կնոջ վերաբերյալ հասարակական ընկալումների համաձայն՝ նրա առաջնային դերը ընտանիքի մասին հոգ տանելն ու երեխաներին դաստիարակելն է³⁴: Այս ընկալումից շեղվող կանայք հասարակության աջակցությունը չեն ստանում, ավելին՝ արժանանում են «անտարբեր» մայր կամ «անպիտան» կին բնորոշումներին: Կանայք նույնպես իրենց ընտանիքի առջև մեղավոր են զգում տանն ավելի քիչ ժամանակ անցկացնելու և երեխաներին մեծացնելու գործում պակաս նվիրվածության համար:

Փորձը ցույց է տալիս, որ քաղաքականության մեջ հաջողությամբ ներգրավված կանայք վայելում են իրենց ընտանիքների աջակցությունը: Որպես կանոն՝ քաղաքականության մեջ ակտիվ կանայք իրենց ամուսինների մասին խոսում են երախտագիտությամբ և հակված են ընդգծելու վերջիններիս դերն իրենց հաջողությունների գործում: Ամուսնու աջակցող վարքը ընկալվում է որպես առատաձեռնության դրսևորում: Մինչդեռ քաղաքականության մեջ ակտիվ տղամարդիկ պարտական և շնորհակալ են իրենց իսկ հմտություններին և արհեստավարժությանը, իսկ իրենց կանանց կարծիքը կարևոր, բայց ոչ էական են համարում իրենց որոշումների կայացման հարցում³⁵: Քաղաքականության մեջ առավելապես հաջողակ են ամուսնալուծված կամ միայնակ կանայք, որոնք ավելի քիչ են կաշկանդված ընտանեկան պարտականություններով³⁶:

32. «Չայաստանի գենդերային բարոմետր», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՉ կենտրոն, Երևան, 2015:

33. **Duban E.** (2010), Gender Assessment: USAID/Armenia.

34. **Mkhitarian A., Zakaryan L.** (2006), Gender Indicators of Armenian Local Government Institutions. Eurasia Foundation, Yerevan.

35. Նույն տեղում:

36. **Ղազարյան Պ.**, Կանանց կողմից քաղաքական իրավունքների իրացման հիմնախնդիրը ՉՉ-ում (սոցիոլոգիական հետազոտություն), Երևան, 2013:

Կանանց քաղաքական մասնակցության գենդերականացված խոչընդոտները

Հայաստանում քաղաքականապես ակտիվ կնոջ կարծրատիպային կերպարը 40-ամյա կամ ավելի բարձր տարիք ունեցող կինն է, որն ունի բարձրագույն կրթություն, աշխատում է «կանացի» բնագավառում, ինչպես օրինակ՝ կրթական կամ առողջապահության ոլորտում՝ վայելելով իր ընտանիքի և մերձավոր ազգականների աջակցությունը: Այս կանանց համար տնտեսական կայունությունը առաջնային չափանիշ է՝ ի տարբերություն տղամարդկանց, որոնց տնտեսական կարգավիճակով է որոշվում նրանց ներգրավվումը քաղաքականության ոլորտ³⁷: Այս պատկերը հայ հասարակության մեջ արտահայտում են գենդերային կարծրատիպերը և նախապաշարմունքները:

Կանանցից ակնկալվում է լինել ուժեղ, արդար և պատրաստ դիմակայելու բոլոր դժվարություններին ու զրկանքներին: Նշված հատկանիշները չեն ընկալվում որպես «կանացի», սակայն կինը, որն ունի նշված բնութագրերը, հասարակության կողմից ընկալվում է որպես հաջող և հարգանքի արժանի առաջնորդ: Միայն հաջողության դեպքում են նրան «ներվում» կանացիությունից կատարված շեղումները³⁸:

Հայրիշխանական մշակույթն ունի թե՛ կնոջ, թե՛ քաղաքական գործչի սահմանված կերպարներ: Նման հասարակություններում այդ կերպարները չեն համընկնում: Հետևաբար կնոջ համար քաղաքականության մեջ ներգրավվելը կատարվում է կանացիությունը «կորցնելու» հաշվին: Քաղաքական գործչի բնութագիրը նման է տղամարդու բնութագրին: Կինը պետք է որոշի՝ կամ պետք է հետևի իր երազանքին, մուտք գործի քաղաքականություն և պիտակավորվի որպես «նորմայից դուրս», կամ դուրս մնա քաղաքականությունից և պահպանի հասարակության կողմից պարտադրված գենդերային դերը: Այսպիսով՝ կանանց ցածր քաղաքական ներկայացվածությունը կանանց վրա գենդերային

37. **Ղազարյան Գ.**, Կանանց կողմից քաղաքական իրավունքների իրացման հիմնախնդիրը ՀՀ-ում (սոցիոլոգիական հետազոտություն), Երևան, 2013:
38. Նույն տեղում:

դերերի սոցիալական ճնշման հետևանք է:

Գենդերային կարծրատիպերը և նախապաշարմունքները որոշիչ հզոր գործոններ են քաղաքականության մեջ կանանց ցածր ներկայացվածության համար: «Քաղաքականությունը պատշաճ զբաղմունք է կանանց համար», կամ «կանանց հուզականությունը խանգարում է նրանց ճիշտ որոշումներ կայացնել» արտահայտությունները կրկնվում են՝ հստակորեն ցույց տալով, թե ինչպես է հասարակությունն ընկալում քաղաքականության մեջ ներգրավված կանանց³⁹:

Կանանց հանդեպ խտրականությունն արմատավորված է գենդերային կարծրատիպերում, որոնք ազդեցություն են ունենում երեխաների սոցիալականացման վրա: Սոցիալիզացիայի երկու հիմնական գործակալները՝ ընտանիքն ու դպրոցը, վաղ մանկությունից երեխաներին ներարկում են գենդերային տարբեր կարծրատիպեր: Այս կարծրատիպերն ազդեցություն են թողնում երեխայի վրա նրա ողջ կյանքում⁴⁰: Ըստ «Հայաստանի գենդերային բարոմետր» հետազոտության արդյունքների⁴¹՝ երեխայի զարգացման ընթացքում կարևորվող որակները տարբերվում են ըստ երեխայի սեռի: Տղայի համար առաջնահերթ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են անկախությունը, ինքնավստահությունը, մշտականությունը, անշահախնդրությունը և մեծահոգությունը, մինչդեռ աղջկա համար արժևորված որակներն են հնազանդությունը և ինքնարտահայտումը:

Մեկ այլ գենդերային հետազոտություն⁴² հաստատում է վերոնշյալ բացահայտումները. «համեստությունը», «նրբությունը» և «կանացիությունը» կանանց բնութագրող հիմնական հատկանիշներ են: Մինչդեռ այդ որակները հաջողություն չեն երաշխավորում որոշումների կա-

39. **Hovhannisyan H., Zakaryan L., Osipov V.** (2011), Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia. UNFPA, OSCE, Yerevan

40. **Մատոսյան Ռ.**, Գենդերային դերերը Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի դասագրքերում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 2012:

41. «Հայաստանի գենդերային բարոմետր», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոն, Երևան, 2015:

42. **Matosian M., Kazhoyan P., Harutyunyan G.** (2013), Sociological Survey on Gender Attitudes and Stereo types in Armenia. Women's Support Center, Yerevan.

յացման, կառավարման կամ ղեկավարման ոլորտներում: Բացի այդ՝ լավ քաղաքական գործչի բնութագիրը ներկայացնում է տղամարդու, ոչ թե կնոջ պատկերը: Այդ հատկանիշներից մի քանիսն են՝ բարձր մտավոր կարողությունները (92 %՝ տղամարդու համար, 90 %՝ կնոջ համար), պետական կառավարման մարմիններում բավարար աշխատանքային փորձը (համապատասխանաբար 75 % և 72 %), ազնվությունը և սկզբունքայնությունը (համապատասխանաբար 77 % և 77 %)՝⁴³:

Աղջիկների սոցիալականացման պարագայում կարևորություն է տրվում «համեստության» և «կանացիության» արժեքներին՝ անտեսելով «ինքնագնահատման», «կառավարման» և «որոշումների կայացման» արժեքները, ինչը խոչընդոտում է կանանց զբաղվել որոշումների կայացման ու կառավարման գործընթացներով: Այդ պատճառով քաղաքականություն մուտք գործելիս կանայք բախվում են բազմաթիվ խոչընդոտների: Կնոջից ավելի շատ ժամանակ և արիություն է պահանջվում հասարակական կարծիքին դեմ գնալու և գենդերականացված ուղիներով քաղաքականություն մուտք գործելու համար: Տղամարդիկ պետք է անեն շատ ավելի քիչ քայլեր նույն նպատակին հասնելու համար:

Գենդերով հիմնավորված տարբերակումը կանանց համար քաղաքականություն մտնելու առանձնահատուկ խոչընդոտ չէ, սակայն հենց գենդերային խտրականությունն է, որ շարունակում է մնալ խնդիր կանանց համար: Տղամարդու և կնոջ ավանդական դերերը՝ առաջինն իբրև հաց վաստակող և տունը կառավարող, երկրորդը՝ իբրև տան ներդաշնակության երաշխավոր և երեխաների հիմնական դաստիարակող, արտացոլված են նաև քաղաքականության մեջ⁴⁴: Քաղաքականության մեջ կարծրատիպային ընկալումից ելնելով՝ դաստիարակողի և «մոր» դերը հանձնում են կնոջը: Տղամարդկանց դերն այլ է. նրանք պետք է ղեկավարեն և որոշումներ կայացնեն հասարակության, այդ թվում՝ կանանց համար: Այսպիսով՝ գործունեությունը ընտանիքից տեղափոխվում է քաղաքականություն:

43. **Hovhannisyan H.**, Zakaryan L., Osipov V. (2011), Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia. UNFPA, OSCE, Yerevan.
44. **Duban E.** (2010), Gender Assessment: USAID/Armenia.

«Կանացիության» և «առնականության» հայրիշխանական տարբերակմամբ հասարակության մեջ պայմանավորվում են կանանց և տղամարդկանց դիրքերը: Ավելի նուրբ, «կանացի» գործունեությունը տրվում է կանանց, իսկ կոպիտ և «առնական» աշխատանքը՝ տղամարդկանց: Այս տեսանկյունից քաղաքականությունն ընկալվում է որպես «առնական» ոլորտ, որը բացատրում է բարձր պաշտոններում կանանց թերներկայացվածության խնդիրը: Ավնհայտ է, որ վերջնական որոշում կայացնողը դառնում է տղամարդը:

Պաշտոնյա կանանց հանդեպ անվստահությունը նույնպես կարելի է բացատրել գենդերային կարծրատիպերի միջոցով: Ըստ հարցման արդյունքների՝ «իդեալական թեկնածու ընտրելիս մարդիկ 2,5 անգամ ավելի հակված են ընտրելու տղամարդու, քան նույն որակավորմամբ կնոջ»⁴⁵: Հասարակության մեջ գենդերային խտրականությունը քաղաքականության մեջ կանանց ցածր ներկայացվածության հիմնական ցուցիչներից մեկն է: Անվստահությունը և կանանց պիտակավորումը կանխում է կանանց մուտքը «տղամարդկանց աշխարհ»:

Տնտեսական անկախության բացակայությունը

Հայաստանում գործազրկությունը կազմում է 20 % (2015 թ.)⁴⁶: Գործազրկության պատճառները տարբեր են երկու սեռերի դեպքում: Կանանց տարիքային բոլոր խմբերում գործազրկության հիմնական պատճառը (98%) ընտանիքի և երեխայի խնամքն է, մինչդեռ տղամարդկանց դեպքում՝ կան հաշմանդամության կարգավիճակը, կան սոցիալական նպաստներ ստանալը:

Հարկ է նշել, որ շատ դեպքերում կանայք իրենք են որոշում բարձր վարձատրվող աշխատանքի համար դուրս գալ մրցակցությունից, քանի որ տարածված մշակութային կարծրատիպի համաձայն՝ կինը չպետք է

45. **Hovhannisyan H.**, Zakaryan L., Osipov V. (2011), Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia. UNFPA, OSCE, Yerevan.
46. ՀՀ ազգային վիճակագրության ծառայություն, 2015:

ամուսնուց շատ վաստակի: 1990-ական թվականներին կանայք գարմանալիորեն ճկուն գտնվեցին՝ ամեն տեսակ աշխատանք կատարելով իրենց ընտանիքների գոյությունն ապահովելու համար, մինչդեռ տղամարդիկ «առնականության ճգնաժամ» էին ապրում՝ մերժելով իրականացնել այնպիսի աշխատանք, որը համարվում էր «ոչ պատշաճ» իրենց կարգավիճակի համար նույնիսկ այն դեպքում, երբ ընտանիքին խիստ անհրաժեշտ էր նրանց օժանդակությունը:

Ընտանեկան եկամտի հիմնական աղբյուրը տղամարդու կողմից վաստակած գումարն է: Կնոջ աշխատանքը չի սահմանափակվում, եթե այն կեսօրյա է, չի խանգարում նրա «կանացի» պարտականություններին, այդ թվում՝ ընտանիքը խնամելու, երեխաներին դաստիարակելու և այլ գործառնություններին: Ըստ «Կովկասյան բարոմետր» հետազոտության (2015 թ.) կանանց 43 %-ը հարցմանը նախորդող ամսին չի ունեցել անձնական ոչ մի եկամուտ, մինչդեռ տղամարդկանց միայն 24 %-ն էր նույն վիճակում: Հարցման պահին կանանց 72 %-ը և տղամարդկանց 45 %-ը գործազուրկ էին, և կանանց 60 %-ը նույնիսկ աշխատանք չէր փնտրում: Հարկ է նկատել, որ ընդունված նորմերին դեմ գնալու դեպքում կինը ենթարկվում է ընտանիքի անդամների խիստ ընդդիմությանը: Շատ դեպքերում կանայք նախընտրում են հետ կանգնել իրենց նպատակներից՝ խուսափելով ընտանիքում բախում ստեղծելուց: Միայն քիչ թվով խիզախ կանայք են հաջողությամբ հաղթահարում արգելքը, սակայն հաճախ ընտանիքը կորցնելու կամ ամուսնալուծության հաշվին⁴⁷:

Տնտեսական կախվածությունը հաճախ կանանց կախյալ լինելու պատճառ է դառնում: Հաց վաստակողը փառաբանվում է ընտանիքում: Որոշումների կայացումը դառնում է նրա արտոնությունը և հիմնական պատասխանատվությունը ընտանիքում: Տնտեսապես կախյալ կանայք ավելի քիչ շարժունակություն ունեն հասարակության մեջ: Կախյալությունը նրանց թույլ չի տալիս մուտք գործել քաղաքականություն: Օրինակ՝ տնտեսապես կախյալ վիճակը խոչընդոտում է, որ կանայք առա-

ջադրեն իրենց թեկնածությունը, քանի որ չեն կարողանա ֆինանսավորել իրենց թեկնածությունը: Ընտրական գրավի կամ նախընտրական քարոզարշավի գումարը մեծ է⁴⁸: Այս խոչընդոտը չեն կարողանում հաղթահարել նաև բազմաթիվ տղամարդ թեկնածուներ: Ֆինանսական աջակցություն չունեցող կանայք չեն կարողանում վճարել այդ գումարը և դուրս են մտնում մրցակցությունից: Համայնքային օժանդակության մշակույթը ևս տարածված չէ Հայաստանում: Հետևաբար կինը կամ պետք է ֆինանսական օժանդակություն ստանա ինչ-որ մեկից, կամ առաջադրվի քաղաքական կուսակցության կողմից:

«Կեղտոտ» քաղաքականություն. քաղաքական մշակույթը Հայաստանում՝ որպես կանանց քաղաքական մասնակցության խոչընդոտ

Ըստ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի» տվյալների (2007 թ.)՝ ոչ լեգիտիմ ընտրությունները կրկնապատկում են կանանց խոցելիությունը քաղաքական դաշտում: «Կեղտոտ» խաղի կանոնները, որոնք հաճախակի կիրառվում են հայաստանյան քաղաքական կյանքում, ընդունված չեն կանանց քաղաքական մշակույթում: Կանայք ընկալվում են որպես բնությամբ արդար և անկողմնակալ էակներ, ուստի չեն կարող մաս կազմել այդ անարդար խաղի: Բացի այդ՝ կանանց հավասար սկզբունքով չեն մոտենում. նրանք դիտվում են որպես «պահեստային» թեկնածուներ և օգտագործվում արտակարգ իրավիճակներում: Երբեմն կինը դիտվում է որպես այլընտրանք վատ ղեկավարի համար՝ հենվելով այն տեսակետի վրա, որ նա արդար է և պատրաստ խուսափելու կոռուպցիոն ռիսկերից: Այլ կերպ ասած՝ կինը համարվում է իրադրության «փրկիչ»⁴⁹: Այդ իսկ պատճառով ոչ լեգիտիմ

47. **Ղազարյան Գ.**, Կանանց կողմից քաղաքական իրավունքների իրացման հիմնախնդիրը ՀՀ-ում (սոցիոլոգիական հետազոտություն), Երևան, 2013:

48. **Mkhitarian A., Zakaryan L.** (2006), Gender Indicators of Armenian Local Government Institutions. Eurasia Foundation, Yerevan.

49. Նույն տեղում:

ընտրությունների ժամանակ կանանց հաղթանակի հավանականությունը երկու անգամ ավելի փոքր է տղամարդ գործընկերների հաղթանակի ցուցանիշից:

Փոքր համայնքներում չկա վերընտրվելու սահմանափակում: Ղեկավարն իրավաբանորեն իշխանության գլխին է, նույնիսկ եթե նա նույն պաշտոնի համար առաջադրվում է մի քանի անգամ: Նրա թեկնածությունը հաճախ օժանդակվում է համայնքի կողմից: Հետևաբար պաշտոնավարելը դառնում է մենաշնորհային: Կա նաև հորից իշխանություն «ժամանագելու» պրակտիկան: Նման իրավիճակներում կանայք ավելի քիչ կարող են մրցակցել: Եթե այնուամենայնիվ հասնում են հաջողության, ապա նրանց հաջողությունը վերագրվում է ընտանիքին կամ ազգականներին՝ ըստ տարածված այն կարծիքի, որ առաջ գնալու համար անհրաժեշտ են որոշակի կապեր⁵⁰:

Անարդար քաղաքական միջավայրը չեզոքացնում է օրենսդրական այն բարեփոխումների ազդեցությունը, որոնք ՀՀ կառավարությունը ձեռնարկում է՝ միջազգային պարտավորություններից ելնելով: Չնայած ՀՀ օրենսդրությունը սատարում է կանանց առաջընթացը գեներալային հավասարության և զգայունություն առումով, դեռևս հարկավոր է մշակել մեխանիզմներ այդ օրենքների իրագործման համար:

Օրենքի թերի կիրառման լավ օրինակ է ինքնաբացարկի երեվոյթը, որը լայնորեն կիրառվել է 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ըստ Ընտրական օրենսգրքի փոփոխության՝ սահմանվեց 20 % գեներալային քվոտա, որը ընտրացուցակներում պետք է ապահովեր կանանց 20 % ներգրավվածություն: Ընտրություններից հետո մանդատ ստացած մեծ թվով թեկնածուներ, որոնց մեծ մասը կանայք էին, ինքնաբացարկ հայտարարեցին՝ մանդատները թողնելով իրենց կուսակցական գործընկերներին, որոնք բոլորն էլ տղամարդիկ էին: Արդյունքում ընդամենը 14 կին ներկայացվեց հինգերորդ գումարմանը⁵¹:

50. **Mkhitarian A., Zakaryan L.** (2006), Gender Indicators of Armenian Local Government Institutions. Eurasia Foundation, Yerevan.

51. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին, «Համալսարանական կրթությամբ կանանց առօրյա գիտելիք», Գեներալային հետազոտությունների կենտրոն, Երևան, 2012:

Սոցիալական կապիտալի բացակայությունը

Հայաստանում քաղաքականությունը հաճախ կառուցվում է ոչ ֆորմալ կապերի և ցանցերի շուրջ: Այդ ցանցերն իրենց բնույթով «առնական» են՝ կառուցված տղամարդկանց կողմից՝ տղամարդկանց համար: Այդ ցանցերը ստեղծում են քաղաքական քննարկումների հատուկ «առնական» տարածություններ՝ ռեստորաններ, բաղնիքներ, շոգեբաղնիքներ և այլն՝ համեմատած «առնական» ժարգոնով⁵²: Համայնքային ինդիկները հաճախ լուծումներ են գտնում նման հավաքների ժամանակ, և այդ պատճառով համայնքներում նախապատվությունը տրվում է տղամարդ թեկնածուներին: Հարցեր լուծելու ոչ ֆորմալ ձևերը համայնքներում շարունակում են մտալ առավել օգտագործվող մեխանիզմները: Կանայք, ի տարբերություն տղամարդկանց, չունեն նման ցանցեր ու մշակույթ: Նրանք չեն կարող մասնակցել այս «առնական» ցանցերին: Որոշ կանանց իրենց սեփական շրջապատը ստեղծելու և մեծացնելու գործում օգնում է իրենց եղբայրների, ամուսինների կամ հայրերի շրջապատը:

Փոքր համայնքների կրթական և առողջապահական ոլորտներում կանանց զբաղվածությունը սոցիալական և քաղաքական կապիտալի ընդլայնման երաշխիք է: Խոշոր համայնքներում քաղաքական կամ քաղաքացիական կազմակերպություններն են ձեռնարկում կանանց առաջադրումը քաղաքականության մեջ⁵³: Ի լրումն սրան՝ կանայք միասնականությունը և միմյանց սատարելը առաջնահերթ չեն համարում: Կանանց կողմից քաղաքական մշակույթի ձևավորումը նույնպես օրակարգային խնդիր չէ:

Կնոջ հաջողությունը վերագրվում է ոչ թե նրա անձնական հատկանիշներին և կարողություններին, այլ իր տղամարդ բարեկամի հնարավորությանը, կապիտալին և շրջապատին: Եթե նրա ամուսինը, հայ-

52. **Pittman A.** (2013), Exploring Women's Rights and Feminist Movement Building in Armenia: Learning from the Past and Strategizing for the Future. Open Society Foundations-Armenia.

53. **Միքայելյան Յ.**, Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ, Կովկասի ինստիտուտի առցանց հրապարակում, N 6, Երևան, 2011:

րը կամ մի այլ տղամարդ ազգական իր կողքին է և սատարում է նրան, ամենայն հավանականությամբ նա հաջողության կհասնի: Կինը նաև իր ընտանիքի և ազգականների սատարման կարիքն ունի:

«Վաղ տարիքից տղաներին սովորեցնում են ընկերներ ձեռք բերել փողոցներում, օգտակար կապեր հաստատել, և, բնականաբար, նրանք սոցիալական կապիտալ են ձեռք բերում իրենց ողջ կյանքի ընթացքում, մինչդեռ կանանց չեն խրախուսում կապեր հաստատելու և դրանք օգտագործելու հմտություններ ձեռք բերել»⁵⁴: Հայաստանում քաղաքականության մեջ կա ռիսկի մեծ գործոն, և կանանցից շատ խիզախություն է պահանջվում քաղաքական ոլորտ մտնելու համար: Կանանց վերաբերվում են նախապաշարմունքով՝ այդպիսով ճնշելով քաղաքական կյանք մտնելու նրանց ցանկությունը: Ամենատարածված կարծրատիպերն են՝ «Հայ կնոջ համար դա ընդունելի չէ», «Հայ կինը պետք է մնա տանը և հոգ տանի իր երեխաների մասին», «Կին ղեկավարներ դառնում են նրանք, ովքեր չունեն անձնական կյանք և/կամ լավ ամուսիններ» և այլն: Նման խոչընդոտների արդյունքում կանանց գրեթե 40%-ը հանեց իրենց թեկնածությունը քաղաքապետարանի և գյուղի ավագանու վերջին ընտրություններում⁵⁵:

Հոգեբանական պատնեշները. ցածր ինքնագնահատականի ինդիքը

Սոցիալականացման միջոցով գենդերային կարծրատիպերը ճնշում են կանանց՝ իրենց նպատակներին հասնելու համար կատարելագործումը և մոտիվացիան: Կանայք զսպում են բարձր պաշտոնների հասնելու ցանկությունը, քանի որ դա չի ընկալվում «պատշաճ» կանանց համար: Գենդերային կարծրատիպերն ազդում են կնոջ ինքնագնահատականի ձևավորման վրա՝ նրա մոտ առաջացնելով ցածր ինքնագնա-

54. Միքայելյան Հ., Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ, Կովկասի ինստիտուտի առջանց հրապարակում, N 6, Երևան, 2011:
55. Նույն տեղում:

հատական և անվստահություն իր կարողությունների նկատմամբ⁵⁶:

Սոցիալականացման հիմնական գործակալները հաճախ կանայք են: Նրանք՝ իբրև մայր տանը և ուսուցիչ դպրոցներում, որտեղ մեծամասնություն են կազմում, սոցիալականացման ազդեցիկ գործակալներ են թե՛ աղջիկների և թե՛ տղաների համար: Սոցիալականացման ֆեմինիզացիան ենթադրում է ապագա սերունդների մոտ գենդերային վերաբերմունքի փոփոխություն: Սակայն իրականում փոփոխություններ չեն նկատվում, քանի որ կանայք կրկնօրինակում են հասարակության մեջ կիրառվող վարքաձևերը:

Ըստ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի» հետազոտությունների (2007 թ.)՝ նախապաշարմունքները, որոնցից է, օրինակ, «Քաղաքականությունը կնոջ տեղը չէ» արտահայտությունը, նվազեցնում են կանանց՝ քաղաքականությամբ զբաղվելու ցանկությունն ու ինքնագնահատականը: Քաղաքականությամբ զբաղվելու ցանկացող կանայք ունեն կանացիությունը կորցնելու վախ: Այս կարծրատիպերը կանանց ենթարկում են կրկնակի վերահսկման, քանի որ նրանք պարտավորված են զգում լինել քաղաքական գործիչ՝ միևնույն ժամանակ պահելով իրենց կանացիությունը:

Կին քաղաքական գործիչները հաճախ ժխտում են հասարակության մեջ գենդերային խտրականությանն առկայությունը, սակայն արտաբերում են այն իրենց խոսքում. «Դա խտրականություն չէ, այլ ուրիշ բան: Կանանց լրջությամբ չեն ընդունում»⁵⁷: Կանանց ինքնագնահատականը մեծապես կախված է տղամարդկանց կարծիքից: Տղամարդկանց աջակցությունը քաջալերում է նրանց, թռչելու համար թևեր տալիս, իսկ օժանդակություն չգտնելու դեպքում նրանց սոցիալական և քաղաքական ակտիվությունը կտրուկ նվազում է: Անհնազանդությունը հաճախ հանգեցնում է անձնական կյանքի կորստի: Հաճախ, երբ ամուսինը դեմ է կնոջ քաղաքական գործունեությանը, ամուսնալուծությունն

56. Hovhannisyan H., Zakaryan L., Osipov V. (2011), Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia. UNFPA, OSCE, Yerevan.

57. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Գենդերային հետազոտությունների կենտրոն, Երևան:

անխուսափելի է դառնում⁵⁸:

Ընդհանուր առմամբ կնոջ մասնակցությունը քաղաքական կյանքում կապված է բազմաթիվ զրկանքների հետ: Նրանից ակնկալվում է հաղթահարել թերագնահատումը, բայց նաև ընդունել գենդերային կարծրատիպերը, հասարակության հայրիշխանության նորմերը, դեռ ավելին՝ ոչ լեգիտիմ ընտրությունները, կոռուպցիոն ռիսկերը և քաղաքական մասնակցությանն ուղղված համառ դիմադրությունը:

58. **Ղազարյան Գ.**, Կանանց կողմից քաղաքական իրավունքների իրացման հիմնախնդիրը ԶԶ-ում (սոցիոլոգիական հետազոտություն), Երևան, 2013:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՆԱՆՑ
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ
ՈՒ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

5.1. Հետազոտության մեթոդաբանությունը և հիմնավորումը

Քաղաքական կյանքում կանանց մասնակցությունը պայմանավորված է տարբեր գործոններով՝ սկսած կառուցվածքային և ինստիտուցիոնալ գործոններից մինչև մշակութային և սոցիալ-հոգեբանական: Քաղաքական կազմակերպությունների և խմբերի ինստիտուցիոնալ դիզայնը, թափանցիկությունը և քաղաքական ինստիտուտների միջև որոշումների կայացման գործընթացը զգալի դեր են խաղում կանանց քաղաքական կարիերայի զարգացման և սահմանափակման գործում:

Ինչպես արդեն քննարկվել է աշխատանքի տեսական հատվածում, կանանց քաղաքական ներգրավմանը հիմնականում խոչընդոտում են հետևյալ գործոնները՝

- ընտանեկան պարտականությունները,
- գենդերային կարծրատիպերը և գենդերային դերերը,
- կանանց տնտեսական կախվածությունը,
- անբարենպաստ քաղաքական մշակույթը,
- կանանց շրջանում սոցիալական կապիտալի պակասը,
- կանանց ցածր ինքնագնահատականը:

Այնուամենայնիվ, կանանց քաղաքական կյանքում առաջխաղացման վրա ազդող հիմնական գործոնը **քաղաքական կուսակացությունների և քաղաքական նախաձեռնությունների ինստիտուցիոնալ դիզայնն է:**

Անկախացումից հետո Հայաստանում քաղաքականության մեջ կանանց ֆորմալ ներկայացուցչությունը շարունակում է շատ ցածր մտալ: Մյուս կողմից, քաղաքացիական և քաղաքական նախաձեռնություններում կանանց ներգրավվածությունը նկատելիորեն մեծ է, քանի որ դրանք պակաս ինստիտուցիոնալիզացված ու կառուցվածքային են և ունեն որոշումների կայացման և ռեսուրսների բաշխման առավել թափանցիկ ընթացակարգեր:

Տվյալ հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել Հայաստանի

քաղաքական կուսակցություններում և քաղաքական նախաձեռնություններում կանանց առաջխաղացմանը նպաստող հնարավորություններն ու դրանց վրա ազդող գործոնները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել Հայաստանի քաղաքական կուսակցություններին և քաղաքական նախաձեռնություններին¹ ինստիտուցիոնալ դիզայնը,
2. հետազոտել Հայաստանի քաղաքական կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների գենդերային կառուցվածքը, ներառյալ գենդերային մոտեցումներն ու ընթացակարգերը,
3. բացահայտել այն խոչընդոտներն ու դժվարությունները, որոնց հանդիպում են կանայք Հայաստանում քաղաքական կարիերա ստեղծելու ժամանակ,
4. համեմատել կանանց համար ստեղծված հնարավորությունները քաղաքական կուսակցություններում և ոչ այդքան ֆորմալ քաղաքացիական ու քաղաքական նախաձեռնություններում,
5. ուսումնասիրել մշակութային փոփոխականների (հասարակությունում կանանց և տղամարդկանց դերի նկատմամբ առկա կարծրատիպերը, վերաբերմունքը, կին առաջնորդների մասին պատկերացումները) ազդեցությունը Հայաստանում քաղաքական կյանքում կանանց ակտիվ մասնակցության վրա:

Կիրառված մեթոդները

Նպատակին հասնելու համար իրականացվել են՝

1. Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությանը վե-

1. Տվյալ հետազոտության շրջանակներում որպես քաղաքացիական նախաձեռնություններ դիտարկվել են պակաս ֆորմալացված և ինստիտուցիոնալացված քաղաքական միավորումներ, որոնց թվում են, օրինակ, «Նախախորհրդարանը» կամ «Քաղաքացիական պայմանագիրը», որը մեր հետազոտության իրականացման ժամանակահատվածում դեռևս չէր գրանցվել որպես քաղաքական կուսակցություն:

րաբերող հետազոտությունների և տվյալների բովանդակային վերլուծություն, ներառյալ կանանց առաջխաղացման նկատմամբ առկա վերաբերմունքը: Մասնավորապես ուսումնասիրվել են տեսական հետևյալ մոտեցումները և հայեցակարգերը՝


ա. քաղաքական գիտությունների ֆեմինիստական բննադատական տեսությունները (Ա. Ֆիլիպս, Ա. Փիթման, Զ. Ռիտտեր, Ն. Մելլու և ուրիշներ),

բ. ֆորմալ քաղաքականության մեջ կանանց ցածր ներգրավվածությունը մեկնաբանող տեսությունները (Պ. Պաքստոն, Ը. Կունովիչ, Մ.Յյուզս, Զ. Մարկ, Ռ. Պանդ, Դ.Ֆորդ և ուրիշներ),

գ. հետխորհրդային երկրներում կանանց քաղաքական մասնակցության տեսությունները (Մ. Կոսա-Կովաչ, Վ. Նիկոլիչ-Ռիստանովիչ, Ռ. Մաթլանդ, Կ. Մոնթգոմերի և ուրիշներ):

Բովանդակային վերլուծության են ենթարկվել նաև հայաստանյան քաղաքական դաշտում կանանց մասնակցության հիմնական խոչընդոտներն ու դժվարությունները Հայաստանում հայ հետազոտողների կողմից իրականացված համապատասխան հետազոտությունների արդյունքների ուսումնասիրության և վերլուծության միջոցով: Ուսումնասիրված տեսությունների և արդեն իսկ իրականացված հետազոտությունների հիման վրա առաջադրվել են հետազոտության հիմնական հարցադրումները, մշակվել է մեթոդաբանություն: Բուն հետազոտական փուլից հետո իրական արդյունքների հիման վրա որոշակի փոփոխություններ են կատարվել նաև տեսական բաժնում՝ այսպիսով ապահովվելով տեսական և հետազոտական բաժինների ակտիվ ու փոխկապակցված վերլուծությունը:

2. Խորին հարցազրույցներ քաղաքական կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների երեք օղակների՝ վերին, միջին ստորին, կին և տղամարդ ներկայացուցիչների հետ:



Յուրաքանչյուր խմբում իրականացվել են մեկական հարցազրույցներ արական և իգական սեռի ներկայացուցիչների հետ: Հետազոտական թիմը ընտրել է հետազոտական նման մոտեցում՝ նպատակ ունենալով միևնույն մակարդակի վրա գործող տղամարդ և կին ներկայացուցիչների կարծիքների համեմատական ուսումնասիրության արդյունքում դուրս բերել քաղաքական կառույցներում մասնակցության գենդերային առանձնահատկություններ: Հետազոտության մեջ ընդգրկված էին «Հայաստանի հանրապետական կուսակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր», «Հայ ազգային կոնգրես», «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Ժառանգություն» կուսակցությունները և «Զաղաքացիական պայմանագիր», «Հիմնադիր խորհրդարան» նախաձեռնությունները:

Օգտագործված հարցաշարեր

Հարցվողների յուրաքանչյուր խմբի համար կազմվել են համապատասխան հարցաշարեր, որոնք բաղկացած են հետևյալ հիմնական բաժիններից՝

- ընդհանուր հարցեր, անձնական տվյալներ,

- հարցվողի քաղաքական կարիերան,
- քաղաքական կուսակցությունում կամ նախաձեռնությունում որոշումների կայացման գործընթացին մասնակցություն,
- սոցիալական կապեր, սոցիալական կապիտալ և փոխհարաբերություններ գործընկերների ու ղեկավարների հետ,
- քաղաքական առաջխաղացման ընթացքում առկա խոչընդոտներ և խտրականություն,
- քաղաքական նպատակներ,
- գենդերային դերերի և գենդերային հավասարության մասին պատկերացումներ,
- առաջնորդի և որոշում կայացնողների մասին պատկերացումներ,
- քաղաքական ակտիվության նկատմամբ վերաբերմունք:

Կանանց համար նախատեսված հարցաշարերը պարունակում էին նաև ընտանիքների անդամների կողմից իրենց գենդերային դերերի և սպասումների փոփոխությունների մասին հավելյալ հարցեր, օրինակ՝ «Ինչպե՞ս է «կանացիություն» հասկացությունը կիրառվում քաղաքականության մեջ», «Ինչպե՞ս է փոխվել քաղաքականության մեջ ներգրավված կանանց մոտ շրջապատի (բարեկամների, ընկերների, գործընկերների) վերաբերմունքը նրանց նկատմամբ քաղաքականապես ակտիվ դառնալուց հետո» և այլն:

Քաղաքական կուսակցությունների և նախաձեռնությունների առաջնորդների համար մշակված հարցաշարերը պարունակում էին նաև վերջիններիս անդամագրության և առաջխաղացման ընթացակարգերի մասին հավելյալ հարցեր, հարցեր՝ կանանց և տղամարդկանց հավասարությունը ապահովող ներքին գենդերային քաղաքականությունների և մեխանիզմների վերաբերյալ:

Հետազոտության ընթացքում առաջացած դժվարությունները

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ հետազոտության դաշտային փուլում էական խնդիրներ կամ դժվարություններ չեն նկատվել: Միակ խնդիրը կապված էր քաղաքական կառույցների ներկայացուցիչների անհասանելիության կամ դժվար հասանելիության հետ: Դաշտային փուլի ընթացքում պարզ դարձավ, որ ավելի բաց ու պատրաստակամ էին քաղաքական նախաձեռնությունները, քան քաղաքական կուսակցությունները, հատկապես «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» (ՀՀԿ): Ենթադրում ենք, որ սա պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքացիական նախաձեռնությունները պակաս բյուրոկրատացված և ֆորմալացված են: Բացի այդ՝ դժվար էր գտնել «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ), «Ժառանգություն» կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների (ՔՆ) ստորին օղակի ներկայացուցիչներ, քանի որ նշված կառույցներում այս պահին չկա մեծ թվով անդամների հավաքագրում դաշտի ոչ այնքան ակտիվ լինելու պատճառով:

Այսպիսով՝ հարցվողների անհասանելիությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

1. պարզապես տվյալ կուսակցությունը չէր ցանկանում որևէ կերպ մասնակցել հետազոտությանը,

2. տվյալ կառույցի տվյալ օղակում վերջին ժամանակներում հավաքում տեղի չէր ունեցել:

Նշված խնդիրներին մենք փորձել ենք տալ բազմակողմանի լուծումներ.

- ուղղել ենք պաշտոնական նամակներ քաղաքական կուսակցություններին՝ հետազոտության նկարագրությամբ և կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցության կարևորության շեշտադրմամբ,

- կիրառել ենք «Ձևագնդի» մեթոդը՝ արդեն իսկ հարցազրույցին

մասնակցած անձանց խնդրելով տալ այլ օղակների ներկայացուցիչների տվյալներ, և կապ ենք հաստատել նրանց հետ,

- օգտագործել ենք սոցիալական կապիտալը. կառույցներում առկա ծանոթների միջոցով փորձել ենք կապ հաստատել տվյալ օղակի որևէ ներկայացուցիչ հետ: Այդուհանդերձ, հնարավոր չի եղել գտնել և զրուցել վեց հարցվողների հետ (մեծամասնությունը կազմում են ՀՀԿ կուսակցության ներկայացուցիչները):

5.2. Քաղաքական կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների գենդերային բնութագիրը

Փորձելով հասկանալ ՀՀ-ում քաղաքական կուսակցությունների ու նախաձեռնությունների կառուցվածքն ու գենդերային համամասնությունը՝ մենք ուսումնասիրել ենք այն տեղեկատվությունը, որն առկա էր յուրաքանչյուր կուսակցության կայքում, ինչպես նաև առանձին տեղեկություններ ենք ստացել բուն հարցազրույցների ընթացքում:

Կայքերի բովանդակային վերլուծությունը բացահայտեց հետևյալ հանգամանքը. կուսակցությունների հստակ կառուցվածքային բաշխվածություն (ըստ կառույցների և դրանցում ներգրավված անդամների սեռային բաշխվածության) ունեին միայն «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» (ՀՀԿ) և «Հայ ազգային կոնգրեսը» (ՀԱԿ): Մյուս կուսակցությունների պարագայում առկա էին միայն կառույցների և ենթակառույցների անվանումները՝ առանց դրանցում հստակ անդամների քանակի նշման, իսկ քաղաքական նախաձեռնությունների համար նման տեղեկատվությունը ընդհանրապես կայքերում բացակայում էր:

«Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ) և «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ) կուսակցությունների կայքերում առկա էր միայն կուսակցությունների կառուցվածքը՝ ենթակառույցներով, սակայն թվային տվյալները բացակայում էին: Նշված կուսակցությունների կառուցվածքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

«Ժառանգություն» կուսակցության, «Քաղաքացիական պայմանագիր» և «Հիմնադիր խորհրդարան» քաղաքական նախաձեռնությունների կառուցվածքային տվյալները հրապարակված չէին:

Պաշտոնական տվյալներից զատ՝ կուսակցությունների և նախաձեռնությունների գեներային բաշխվածության մասին հարց տրվեց նաև հարցված քաղաքական դերակատարներին: Կրկին հստակ թվեր կամ վիճակագրություն չհաջողվեց հավաքել, այնուամենայնիվ, բնութագրական որոշակի պատկեր ուրվագծվեց:

Այսպիսով՝ կուսակցությունների և նախաձեռնությունների վերին օղակի ներկայացուցիչները նշեցին կուսակցություններում կին/տղամարդ հետևյալ համամասնությունը.

ԲԳԿ 45 % կ – 55 % տ	ՀԱԿ 30 % կ – 70 % տ	ԲՀԿ տվյալ չտրամադրվեց	ՕԵԿ 45 % կ – 55 % տ
ՀՅԴ 20 % կ – 80 % տ	«Ժառանգու- թյուն» 45 % կ – 55 % տ	«Հիմնադիր խորհրդարան» 20 % կ – 80 % տ	«Քաղ. պայմա- նագիր» 20 % կ – 80 % տ

Խորհրդարանական ընտրացուցակներում գեներային բալանսավորումը հիմնականում պահպանվում է ըստ օրենքի, այսինքն՝ կանանց 20 % ներգրավվածությունը ապահովվում է կուսակցությունների կողմից: Այդուհանդերձ, ՀՅԴ կուսակցության պարագայում կանանց թիվը կուսակցությունում և հատկապես ընտրացուցակներում վերջին շրջանում բավական նվազել է, և այսօր ներկայացուցչական մարմիններում ՀՅԴ կին դերակատար չկա: Մյուս կուսակցությունների պարագայում նվազագույն 20 % ներկայացվածությունը պահպանվում է, որոշ դեպքերում կուսակցության նախաձեռնությամբ կանանց ներգրավվածությունը կուսակցության ընտրացուցակներում հասնում է 30-35 % -ի (ՕԵԿ, ԲՀԿ):

Հասարակայնության հետ կապերի պատասխանատվությունն ու **նախընտրական ծրագրերի կազմման** գործընթացը ոչ մի կուսակ-

ցությունում և նախաձեռնությունում չի կրում գեներային որևէ տարանջատում կամ նկարագիր: Այս գործողությունները կատարվում են ըստ ոլորտների և մասնագիտացվածության աստիճանի: Սեռային տարբերություն կամ խտրականություն չի դրվել և չի դրվում: Առաջին հայացքից գեներային տարբերություններ չեն նկատվում նաև **նախընտրական արշավների** մասնակցության դեպքում, քանի որ կանայք և տղամարդիկ հավասար բաշխվածությամբ մասնակցում են վերջիններին: Սակայն խորիքային դիտարկում կատարելու արդյունքում պարզ է դառնում, որ հաճախ քարոզարշավների կամ հանրային հանդիպումների ժամանակ կանայք «օգտագործվում են» որպես իրավիճակը մեղմող, հարթող «միջոցներ»: Այսինքն՝ կանայք տղամարդկանց խնդրանքով, պահանջով կամ երբեմն նաև համատեղ որոշմամբ մասնակցում են քարոզարշավներին կամ հանրային հանդիպումներին՝ ցրելու կուսակցության/նախաձեռնության տղամարդկանց նկատմամբ հասարակության մոտ առկա չվստահող, հուսահատ կամ ըմբոստ մթնոլորտը:

Ինչ վերաբերում է **կուսակցությունների քարտուղարությանը**, ապա ԲՀԿ, ՕԵԿ և «Ժառանգություն» կուսակցություններում գերակշռող մասը կազմում են կանայք, և հենց իրենք՝ հարցված կանայք, այդ հանգամանքը գնահատում էին որպես նորմալ ու բնական երևույթ: Քարտուղարությունում կանանց գերակշռ մաս կազմելու հիմնական բացատրությունն այն էր, որ կանայք առավել պատասխանատու են գրագրություն և քարտուղարությանը հատուկ այլ գործողություններ իրականացնելու հարցերում, այդ իսկ պատճառով այս բաժինը մեծ մասամբ ոչ թե տղամարդկանց, այլ նրանց է վստահված: Տղամարդկանց համար առավել բնորոշ է ղեկավար պաշտոնների զբաղեցումը, ինչը և հիմնականում նկատվում է կուսակցություններում: ՀՅԴ կուսակցության քարտուղարությունում դերերն ու պարտականությունները բաշխված են ըստ հմտությունների ու մասնագիտացվածության, ոչ թե ըստ սեռի, և կանայք ու տղամարդիկ մոտավորապես հավասար ներգրավվածությունն ունեն նշված ոլորտում: Իսկ ՀԱԿ կուսակցությունում ու «Քաղաքացիական պայմանագիր» քաղաքական նախաձեռնությունում որպես այդպիսին քարտուղարության բաժին առանձնացված չէ, այդ

իսկ պատճառով նման հարցերով հավասարապես զբաղվում և և պատասխանատվություն են կրում թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ: Ինչ վերաբերում է «Հիմնադիր խորհրդարան» քաղաքական նախաձեռնությանը, այստեղ քարտուղարության բաժնում գերակշռում են տղամարդիկ:

Թե՛ քաղաքական կուսակցությունների և թե՛ քաղաքական նախաձեռնությունների **ղեկավարման ձևը** կոլեգիալ է, հիմնահարցերն ու խնդիրները քննարկվում են ընդհանուր կարգով, և մեծամասնության կողմից համաձայնության բերված տարբերակն ընդունվում է:

Կուսակցության անդամագրությունը ՕԵԿ, ԶԶԿ, «Ժառանգություն» կուսակցություններում և երկու նախաձեռնություններում կատարվում է ներկայացրած դիմումի համաձայն, փոխարենը որևէ պաշտոնական ընտրություն կամ նշանակում չի կատարվում: Մյուս կուսակցություններում՝ ԶԱԿ, ԶՅԴ, ԲԶԿ, ընդհանուր անդամակցության ընթացակարգը բաց է ցանկացած 18 տարին լրացած քաղաքացու համար: Վերջինս ներկայացնում է դիմում-հայտ, սակայն անդամագրվելու համար նա պետք է ստանա նաև կուսակցության քաղաքական խորհրդից կամ վարչությունից երաշխավորություն:

Իստեղով **գենդերային հատուկ քաղաքականության առկայության**, ինչպես նաև կանանց հետ տարվող աշխատանքների կամ նրանց կուսակցության կառավարման մեջ ավելի շատ ներգրավման մասին՝ ԲԶԿ, ՕԵԿ, «Ժառանգություն», ԶԶԿ և ԶՅԴ կուսակցությունները նշեցին, որ ունեն կանանց խորհուրդներ: Այս խորհուրդները հիմնականում նպաստում են կանանց և աղջիկների ինքնադրսևորմանը և կուսակցության կառավարման հարցում ավելի գործուն դերակատարություն ու մասնակցություն ունենալու հնարավորությունների ընձեռմանը: Ինչ վերաբերում է ԶԱԿ կուսակցությանը և քաղաքական նախաձեռնություններին, հարցված ներկայացուցիչները նշեցին, որ գենդերային քաղաքականություն գոյություն չունի, և ըստ էության՝ կանանց/աղջիկների խորհուրդ ևս չկա:

Չարկ է նաև նկատել, որ գենդերային հատուկ քաղաքականության և ըստ էության նման քաղաքականության անհրաժեշտության անտեսման հետ մեկտեղ հարցված քաղաքական ոլորտի թե՛ կին և թե՛

տղամարդ ներկայացուցիչները նշում էին, որ իրենց շարքերում գենդերային խտրականություն հատկապես կանանց նկատմամբ չի նկատվել: **Միևնույն ժամանակ կանանց տրվող արտոնությունների ներքո** քաղաքական կառույցների ներկայացուցիչները հասկանում էին **կանանց նվիրված տոների հատուկ ուշադրություն և վերաբերմունք ցույց տալը և ոչ թե քաղաքական ոլորտում կանանց առաջխաղացումն ու առավել բարձր տոկոսով ներգրավվածությունը:**

«...Առհասարակ մենք կանանց միշտ վերաբերվում ենք ըստ արժանվույն, տոնական օրերին միշտ կազմակերպում ենք միջոցառումներ, փորձում ենք կանանց և աղջիկներին նվերներով «սիրաշահել» և ոգևորել իրենց կատարած աշխատանքի համար»:

ՔԿ, արական, միջին օղակ

Այսպիսով՝ կարելի է ընդհանրացնել, որ ընդհանուր առմամբ կուսակցություններում և նախաձեռնություններում չկա գենդերային որևէ պաշտոնական քաղաքականություն, և կառավարման մակարդակում գենդերային համամասնության ապահովման հստակ գործողություններ չեն իրականացվում:

5.3. Գենդերային դերերի մասին պատկերացումներն ու առաջնորդության գենդերային ուղղվածությունը

Գենդերային հավասարության և գենդերային դերերի մասին պատկերացումները

Չարկ է նշել, որ «գենդեր» եզրույթի հետ կապված կարծրատիպային և բացասական վերաբերմունքը, որը ստեղծվել էր հայաստանյան իրականությունում լրատվամիջոցների և այլ աղբյուրների սխալ

տեղեկատվության արդյունքում, իր ազդեցությունն էր ունեցել նաև հարցված քաղաքական կուսակցությունների և նախաձեռնությունների անդամների մոտեցումների վրա: Այդ իսկ պատճառով գենդերային հավասարության և դերերի մասին խոսելիս հարցվողների մեծամասնությունը, անկախ սեռից, հաճախ չէին ցանկանում կիրառել «գենդերային» եզրույթը և կողմակից էին պարզապես «կնոջ և տղամարդու հավասարություն» հասկացության կիրառմանը: Այնուամենայնիվ, նրանք չնուսափեցին անդրադառնալ թեմային և ներկայացրին գենդերային հավասարության մասին իրենց տեսակետները:

Ստորև ավելի մանրամասն կանդրադառնանք գենդերային հավասարության և գենդերային դերերի մասին քաղաքական ոլորտի տղամարդ և կին դերակատարների պատկերացումներին:

Գենդերային հավասարության մասին խոսելիս **տղամարդիկ** բաժանվեցին երկու խմբի՝ գենդերային հավասարությանը **դեմ** և **կողմ**: Չարկ է նշել, որ երկրորդ խմբում ընդգրկվածները կազմում էին ճնշող մեծամասնություն՝ ներկայացնելով քաղաքական կառույցների միջին ու վերին օղակները:

Գենդերային հավասարությանը դեմ հանդես եկող տղամարդիկ հիմնականում ներկայացնում էին բոլոր ներգրավված քաղաքական կառույցների ստորին օղակները, այսինքն՝ նրանք հիմնականում երիտասարդ ներկայացուցիչներ էին: Նրանց կարծիքով՝ դա կեղծ կառուցակցված հասկացություն է կանանց արհեստական գերակայություն (դոմինանտություն) ապահովելու համար, քանի որ իրականում յուրաքանչյուրն ունի իր հստակ դերը և պարտականությունները: Այս խմբի տղամարդկանց կարծիքով՝ այն, ինչ կարող է անել կինը, տղամարդը չի կարող անել, և հակառակը: Միևնույն ժամանակ նրանք դեմ էին նաև կանանց ունակությունների և հնարավորությունների՝ գոյություն ունեցող կարծրատիպային թերազնահատմանը:

Գենդերային հավասարությանը կողմ տղամարդիկ դիտարկում էին այն որպես ընդունելի և բնական իրավիճակ, երբ կնոջ և տղամարդու միջև կա իրավահավասարություն բոլոր ոլորտներում՝ կրթություն, աշխատանք, քաղաքականություն, ընտանիք և այլն: Մյուս կողմից, սա

մեկնաբանվում էր որպես իրավունք, որը տրվում է կնոջը՝ ընտրելու՝ նա ուզում է լինել բիզնես ոլորտում, քաղաքականության մեջ, թե՛ զբաղվել միայն տնային տնտեսությամբ: Այս խմբի կարծիքները նաև ցույց էին տալիս, որ գենդերային հավասարությունը չի ենթադրում կանանց բացարձակ գերակշռություն տղամարդկանց նկատմամբ կամ տղամարդկանց հաշվին կանանց տրվող առավելություն: Չետաքթրական այն էր, որ տղամարդկանց կարծիքով՝ այսօր Չայաստանում առկա է գենդերային հավասարություն, այդ թվում՝ քաղաքականության մեջ, պարզապես քաղաքականությամբ զբաղվել ցանկացող կանանց թիվը քիչ է: Այդ պատճառով նրանք անհրաժեշտություն չէին տեսնում՝ առաջարկելու որևէ միջոց կամ տարբերակ, որը հնարավորություն կտար ապահովելու կանանց բարձր ներգրավվածությունն այն ոլորտներում, որոնցում այսօր հայաստանյան իրականությունում նկատվում է տղամարդկանց գերակշռություն՝ քաղաքականություն, բիզնես ոլորտ, ղեկավար պաշտոններ և այլն: **Այսինքն՝ գենդերային հավասարությանը կողմ տղամարդկանց կարծիքով՝ քաղաքականության և բարձր պաշտոններում կանանց ներգրավվածության ցածր տոկոսը պայմանավորված է հենց կանանց ցանկության բացակայությամբ, և մասնակցության հնարավորությունների ապահովողներն էլ պետք է իրենք՝ կանայք լինեն:**

Այն տղամարդիկ, որոնք ընդհանուր առմամբ կողմ էին արտահայտվում կանանց քաղաքական ակտիվությանը, միևնույնն է, չէին գիտակցում կուսակցությունների և նախաձեռնությունների պատասխանատվությունը հավասար ներգրավվածության ապահովման գործում՝ հիմնականում կանանց քաղաքական պասիվությունը պայմանավորելով ընտանեկան պարտականություններով:

«...Կանանց կողմից ներգրավվածության չափը իրենք են որոշում: Կանանց հետ այն է բարդ, որ ընտանիքներ և այլ խնդիրներ կան: Իսկ ով էլ ամուսնացած չէ, ուզում է ամուսնանալ: Դա է հիմնական խնդիրը, թե իրենք ինչքանով են ուզում մասնակցել: Այսինքն՝ ոչ թե իրենք են ուզում, իրենց չեն թողնում,

այլ իմ նշած տարբերակով է լինում: Մարդուն չես կարող ստիպել, իրենք պետք է ցանկանան, ինչպես կանայք, այնպես էլ ամեն մարդ ինքը պետք է որոշի...»:

ԸՆ, արական, միջին օղակ

Գենդերային դերերի և դերային սպասելիքների վերաբերյալ գենդերային հավասարության կողմ արտահայտված տղամարդիկ նշեցին, որ, բնականաբար, դերերի միջև կան տարբերություններ, որոնք տրված են ի սկզբանե բնության կողմից, և որոնց միջոցով էլ ի վերջո տարբերվում են կինն ու տղամարդը (շեշտադրվում էին հիմնականում կենսաբանական առաձևահատկություններից բխող դերերի տարբերությունները, օրինակ՝ տղամարդու համար ֆիզիկական ծանր աշխատանքի կատարումը, կնոջ համար երեխա լույս աշխարհ բերելը և այլն): Այսինքն՝ մյուս բոլոր ոլորտների ու դերերի համար խիստ պիտակավորում էր դրվում. այս կամ այն սեռերից մեկին կարծրատիպորեն բնորոշ դերը մյուս սեռի ներկայացուցիչը չպետք է կամ չի կարող կատարել: Ընդհակառակը, այս խմբի ներկայացուցիչների կարծիքով՝ դերերի ընտրության որոշումն էլ պետք է կատարի տվյալ անձը:

Հարցված **կին** քաղաքական դերակատարները նույնպես երկու հիմնական կարծիքների ու մոտեցումների կրողներ էին:

Առաջին խմբի կանայք գտնում էին, որ գենդերային հավասարությունը **կնոջ և տղամարդու իրավահավասարությունն է բոլոր ոլորտներում՝** համապատասխան առաջխաղացումներով կախված զուտ տվյալ անձի կարողություններից ու ունակություններից: Չետաքրքրական էր այն, որ այս տեսակետի կողմնակիցների շարքերում քաղաքական նախաձեռնության պարագայում ստորին օղակի ներկայացուցիչներն էին, իսկ քաղաքական կուսակցությունների դեպքում բոլոր օղակները ներկայացված էին:

Կանանց մյուս խումբը, որում ներկայացված էին քաղաքական նախաձեռնությունների միջին և վերին, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների բոլոր օղակների ներկայացուցիչները, նշեց, որ «գենդերային հավասարությունը» **կեղծ հասկացություն է**, և կինն ու

տղամարդը ոչ մի ոլորտում, ոչ մի հասարակությունում և ոչ մի ժամանակաշրջանում չեն կարող ունենալ հավասար դերեր ու պարտականություններ ու լինել հավասար:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն տղամարդկանց, կանանց դեպքում երկու խմբերից որևէ մեկում չնկատվեց կողմնակիցների բացարձակ մեծամասնություն, և շատ փոքր տարբերությամբ գենդերային հավասարության կողմնակիցների թիվը ավելի մեծ էր գենդերային հավասարությանը ընդդիմացողների թվից: **Այս հանգամանքը կարող է մատնացույց անել նաև այն փաստը, որ տղամարդիկ, իրականում դեմ լինելով գենդերային հավասարությանը, այնուամենայնիվ, կողմ են արտահայտվում, որպեսզի խուսափեն հասարակական հավելյալ «ճնշումներից» և գենդերային հավասարությանը ակնհայտ դեմ լինելու պիտակավորում ստանալուց: Այս եզրահանգման համար ևս մեկ հիմնավորում կարող է դառնալ այն, որ հայաստանյան հասարակությունում էական ու արժեքավոր քայլեր չեն իրականացվում բոլոր ոլորտներում, հատկապես քաղաքականության մեջ գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ:**

Ենթադրելով, որ քաղաքական առաջխաղացման գրավական կարող է դառնալ տղամարդու դերի ստանձնումն ու առնականության մշակութային սահմաններում ինքնադրսևորումը, կանանց տրվեց նաև առանձին հարց՝ «Արդյո՞ք քաղաքական կարիերայի ընթացքում նրանք փորձել են ընդօրինակել տղամարդկանց կամ, ընդհակառակը, հատուկ շեշտադրել իրենց կանացիությունը՝ քաղաքական ոլորտում ավելի հաջողակ լինելու նպատակով»: Արդյունքում ստացվեց, որ հարցված կին քաղաքական գործիչները երբևէ չեն փորձել հատուկ շեշտադրել իրենց կանացիությունը, ինչպես նաև չեն ձգտել ընդօրինակել տղամարդկանց դերերը: Միևնույն ժամանակ կանայք նշեցին, որ հաճախ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք դրսևորում են բավական ուսանելի և հաջողված վարք, որի ընդօրինակումը չի կարող դիտարկվել որպես գենդերային դերերի անհավասարություն ու մասկուլինության կամ ֆեմինինության գերակայություն:

Միևնույն ժամանակ հարցված կանանց մի մասը պնդում էր, որ

քաղաքական ոլորտ մտնելուց հետո շրջապատի և ընտանիքի անդամների վերաբերմունքն ու մոտեցումը իրենց նկատմամբ չի փոխվել: Այս կանանց կարծիքով՝ փոփոխություն տեղի չի ունեցել նաև իրենց գենդերային դերերի մեջ:

Մյուս խմբի կանանց կարծիքով՝ իրենց շրջապատող մարդիկ փոխել են իրենց վերաբերմունքն ու սկսել են ավելի շատ հաշվի նստել նրանց հետ, եթե նույնիսկ ակնհայտորեն դա ցույց չեն տվել:

«...Միայն իմ դերը ընտանիքում, գուտ էտ ա փոխվել. ավելի կայուն ա դարձել, ավելի ինքնուրույն ա դարձել, մի քիչ ավելի ազատված ա դարձել իրանցից: Կոնֆլիկտներ չեմ ունեցել ընտանիքում, որովհետև մեր ընտանիքը մի քիչ ավելի ժամանակակից մտածելակերպ ունի էդ առումով. չեն խոչընդոտում: Ուղղորդում են միանշանակ, խորհուրդներ են տալիս, ճիշտ-սխալ իրանց տեսանկյունն են ասում, բայց չեն պարտադրում միանշանակ ո՛չ մասնագիտության ընտրության, ո՛չ էլ քաղաքականության ընտրության հարցերում»:

ԶԿ, իգական, միջին օղակ

Սակայն այս կանայք իրենց գենդերային դերերում էական փոփոխություններ չեն նկատել, քանի որ շարունակել են իրենց առօրյան՝ մի փոքր ավելի շատ ժամանակ տրամադրելով քաղաքականությանը:

«...Ընտանիքի անդամների վերաբերմունքը, իհարկե, թաքուն փոխվել է, բայց դա բացահայտ երբեք թե՛ գույց չեն տա, որովհետև դու ապրում ես հայ իրականության մեջ: Իսկ հայ իրականության մեջ տան գլուխը տղամարդն է, բայց տան վիզը կինն է: Որ կողմը ուզում է, այն կողմս էլ թեքում է: Բայց դու միշտ պիտի ընդունես այդ փաստը, որ տղամարդը տան գլուխն է: Եղպես է մեր դաստիարակության մեջ, աղջիկներին այդպես են դաստիարակում: Եդ մեր ազգային սովորույթներն են ու ավանդույթները: Եթե դու թե՛գ հայ ես համարում, ուրեմն տեսակդ դա է»:

ԶԿ, իգական, վերին օղակ

«...Օրինակ՝ ժամանակին իմ կուսակցական լինելը շատ տղամարդկանց հեռու ա պահել: Եվ չեմ ասում՝ ես անսխալական եմ: Մեկ-երկու անգամ դիտողություն եմ ստացել, որ դու չոր ես, կուսակցական չորություն կա մեջդ: Փորձել եմ հասկանալ՝ արդյո՞ք, մի՞թե և ինչպե՞ս փոխել: Բայց կինը... մարդ պիտի երջանիկ լինի՝ տղամարդ թե կին: Բայց մի տեսակ նաև, որ ավանդաբար մեզ ընտրում են, և քիչ ենք մենք ընտրում, պիտի խելոք լինել՝ ընտրելի դառնալու համար և գնալ ընտրության, այդ ուղղությանը»:

ԶԿ, իգական, ստորին օղակ

«...Այո, ավելի հարգանքով են դարձել, և ինձ ներկայացնելիս որպես հանրային մարդ են ներկայացնում, նշում են, որ ակտիվիստ եմ: Այդ առումով փոխվել է»:

ԶԿ, իգական, ստորին օղակ

Ինչ վերաբերում է քաղաքական ոլորտում ներգրավվելուց հետո ինքնագնահատականի կամ ինքնաընկալման փոփոխություններին, ապա իրավիճակը հետևյալն է: Ինքնաընկալման էական փոփոխություն չէր նկատվել ո՛չ կանանց, ո՛չ տղամարդկանց շրջանում: Միակ փոփոխությունը, որը բնորոշ էր երկու սեռերին, այն էր, որ քաղաքական ոլորտում որոշակի հաջողություններ ունենալու արդյունքում սեփական անձի նկատմամբ հարգանքի բարձրացում էր նկատվել: Առանցքային այլ փոփոխություններ չնշվեցին:

Ինչ վերաբերում է ինքնագնահատականի փոփոխությանը, ապա այս առումով հարցված **կանանց ճնշող մեծամասնությունը նշեց**, որ քաղաքական ոլորտ մտնելուց և քաղաքական կուսակցության կամ նախաձեռնության անդամ դառնալուց հետո իրենց **ինքնագնահատականը էականորեն բարձրացել է**, ավելի **ինքնավստահ են դարձել**, **հավատացել են իրենց ուժերին ու ավելիին են ձգտել**: **Յակառակ դրան՝ հարցված տղամարդկանց ճնշող մեծամասնությունը** նշեց, որ **քաղաքականության մեջ լինելը իրենց ինքնագնահատականի վրա ոչ մի**

Կերպ չի ազդել, և որևէ եական փոփոխություն չի եղել, քանի որ իրենց «ինքնագնահատականը առանց այն էլ միշտ բարձր է եղել»:

Հատկանշական է այն հանգամանքը, որ կին մասնակիցների գրույցները վկայում են նրանց՝ անընդմեջ ինքնակատարելագործմանը ձգտելու մասին: Կին մասնակիցները նշում են ապագայում կրթական նորանոր հնարավորությունների ստանձնումը՝ սեփական գիտելիքների պաշարը համալրելու, հետևաբար նաև աշխատանքը կատարելագործելու համար: Սակայն այս ինքնագարգացումը հիմնականում դիտարկվում է որպես միմիայն հայրենիքին ավելի լավ «ծառայելու» գործոն: Կանանց ինքնարժևորման շուրջ խնդիրները տարբեր ուսումնասիրությունների ամարկա են դարձել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք ավելի հաճախ են թերագնահատում իրենց ուժերը, հետևաբար ձգտում առավելագույնին, կատարելության՝ ի հակադրություն տղամարդկանց, որոնք ավելի քաջ են գտնվում՝ քայլ կատարելու նույնիսկ այն պարագայում, երբ լիովին չեն բավարարում պահանջվող չափանիշներին: Կին մասնակիցների սեփական ուժերի նկատմամբ անվստահությունն արտահայտվում է այլ դիպվածներում և ընդհանուր խոսքի մեջ ևս: «Չգիտեմ», «դժվարանում եմ պատասխանել», «երևի» և նմանատիպ անորոշ, խուսափողական մեկնաբանությունները գերակշռում են կանանց պատասխաններում: Տղամարդկանց պատասխաններն ավելի հստակ են, նպատակաուղղված և կտրուկ:


Առաջնորդության մասին պատկերացումները

Առաջնորդությունը անձի ունակությունն ու կարողությունն է ղեկավարելու այլ մարդկանց կամ խմբերի: Հասարակության քաղաքական կյանքում քաղաքական էլիտայի գործունեությունը հիմնականում պայմանավորված է հենց քաղաքական առաջնորդությունների առկայությամբ: Առաջնորդի հատկանիշներ կարող են ի հայտ գալ մանկուց կամ կարող են առավել վառ դրսևորվել հասուն տարիքում: Մենք փորձեցինք հասկանալ, թե երբ են առաջնորդական հակումներ արտահայտվել և դրսևորվել հետազոտության մասնա-

կիցների՝ քաղաքական կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների ներկայացուցիչների մոտ՝ նպատակ ունենալով դուրս բերել առաջնորդության մասին պատկերացումների ու դրսևորումների գենդերային բնորոշիչներ:

Առաջնորդի մասին ունեցած պատկերացումները շատ ընդհանրական էին և եականորեն չէին տարբերվում ընդհանրական կառույցների, ընդհանրական միջև: Այսինքն՝ առաջնորդի մասին պատկերացումները գենդերային որևէ հատուկ երանգավորում չստացան: Ընդհանրապես, թե կին և թե տղամարդ ներկայացուցիչները նշեցին ընդհանուր բնութագրող մի քանի հատկանիշներ:

Այսպիսով՝ առաջնորդի համար բնորոշ հատկանիշները, ըստ հարցվողների, կարելի է դասակարգել հետևյալ կերպ.



Առաջնորդության տեսակները

ՔԿ և ՔՆ ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցների ժամանակ հնչած կարծիքների ու մոտեցումների հիման վրա պայմանականորեն առաջադրեցինք առաջնորդության չորս հավանական տիպեր՝

1. առաջնային առաջնորդություն, երբ անձի մոտ առաջնորդության հատկանիշներն ու հակումները դրսևորվում են դեռևս վաղ տարիքից, օրինակ՝ մանկապարտեզում, դպրոցում,

2. երկրորդային առաջնորդություն, երբ մարդն ինքը իրեն առաջնորդ չի համարում, պարզապես գտնում է, որ հասուն տարիքում իր մոտ դրսևորվում են առաջնորդական որոշակի հմտություններ,

3. իրավիճակային առաջնորդություն, երբ առաջնորդական հմտությունները ձևավորվում են ըստ իրավիճակի և հասարակական-քաղաքական պահանջարկի,

4. վերագրվող առաջնորդություն, երբ անձը գտնում է, որ իր առաջնորդական հատկանիշների մասին պետք է դատեն իրեն շրջապատող մարդիկ:

Այսպիսով՝ տղամարդկանց մոտեցումներն ու ընկալումներն ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ վերջիններս ներկայացնում են առաջնորդության հետևյալ տեսակները (ներկայացված է ըստ խմբում մեծամասնություն կազմելու սկզբունքի):

1. Երկրորդային առաջնորդություն.

«...Ես չեմ նկատել առաջնորդական հմտություն իմ մեջ»:

ՔՆ, արական, միջին օղակ

«... Երևի իմ ակտիվության կոճակը պետք է ավելի ուշ սեղմվեր»:

ՔԿ, արական, վերին օղակ

2. Առաջնային առաջնորդություն.

«...Սկզբում բուհում, այնուհետև բանակում, հետո աշխատանքում»:

ՔՆ, արական, միջին օղակ

«...Այո, ուսանողական տարիներին ուսխորհրդի անդամ եմ եղել»:

ՔՆ, արական, վերին օղակ

3. Իրավիճակային առաջնորդություն.

«...Ճիշտն ասած, առաջնորդությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ որ դու որևէ բանի մեջ լավ ես, այսինքն՝ դու որևէ ոլորտում լավ ես, Էդ ոլորտում դու կարող ես հավակնել առաջնորդության»:

ՔՆ, արական, միջին օղակ

4. Վերագրվող առաջնորդություն.

«...Ես համարում եմ, որ անհատը չի կարող իր մեջ նկատել լիդերական ունակություններ: Դա պետք ա շրջապատող նկատի»:

ՔԿ, արական, միջին օղակ

«...Լիդերային հատկություններ ես չպետք է գնահատեմ, իմ ընկերները, իմ կուսակիցները, իմ շրջապատող կարող է գնահատել՝ ես ունեմ էդ հատկանիշը, թե ոչ»:

ՔԿ, արական, միջին օղակ

Կին մասնակիցների կարծիքը հաշվի առնելով՝ կարելի է տալ հետևյալ բաժանումը (ներկայացված է ըստ խմբում մեծամասնություն կազմելու սկզբունքի):

1. Առաջնային առաջնորդություն.

«...Դպրոցական տարիներից Էդ ակտիվությունը, լիդերային հատկությունները միշտ մեջս եղել են»:

ՔԿ, իգական, միջին օղակ

«...Ինձ մոտ առաջնորդական հմտություններ տեսել եմ միջին դպրոցում, ես զգացի, որ ընկերներս ինձ սիրում են լսել,

սիրում են անել այն, ինչ ես առաջարկում եմ, դուր է գալիս ինձ հետ շփվել»:

ԶԿ, իգական, վերին օղակ

2. Երկրորդային առաջնորդություն.

«...Բացարձակ ակտիվ չեմ եղել դպրոցում: Ես կարծում եմ, որ դա տեղի ա ունեցել փողոցում: Փողոցը շատ կարևոր տեղ ա եղել ինձ համար: Ո՛չ դպրոցում, ո՛չ ընտանիքում, ո՛չ էլ նույնիսկ համալսարանում երբևէ առիթ չի եղել, այսինքն՝ չի եղել այնպիսի մի միջավայր, մի տրամադրություն, որ ես կարողանամ դրսևորել առաջնորդական ինչ-որ հատկանիշ»:

ԶԿ, իգական, միջին օղակ

3. Իրավիճակային առաջնորդություն.

«...Կարծես ինձ թվաց՝ ինչ-որ պահի ես այլևս չեմ ուզում շատ ակտիվ լինել, բայց համալսարանում որևէ երպիսի ղեկավար պաշտոն չեմ զբաղեցրել, և իրականում ավելի հանգիստ են անցել իմ ուսանողական տարիները »:

ԶԿ, իգական, վերին օղակ

«...Երբ ես դուրս եկա փողոց ու ծանոթացա ինձ համար անծանոթ մարդկանց հետ, ես հասկացա, որ մենք կապ ունենք իրար հետ»:

ԶՆ, իգական, վերին օղակ

Ուշագրավ է այն, որ թեպետև քիչ քանակով, բայց տղամարդկանց շարքերում կային այնպիսիք, որոնք չէին կարողանում հաստատել կամ ժխտել իրենց առաջնորդլինելու հատկանիշները՝ թողնելով դա շրջապատի մարդկանց դատողությանը: Իսկ կանանց պարագայում իրենց առաջնային առաջնորդության տիպի հատկանիշները վերա-գրողների թիվը զգալիորեն մեծ էր թե՛ մյուս կանանց նկատմամբ և թե՛

տղամարդկանց նույն խմբի համեմատ: Սա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ հայկական իրականությունում վաղ տարիքից տղաներին դաստիարակում են «առաջնորդական (լիդերային) հատկանիշներով», այսինքն՝ անընդհատ վերագրում են նման հատկանիշներ, եթե անգամ դրանք չկան: Արդյունքում այն տղաները, որոնք իրականում չունեն առաջնորդական հատկանիշներ, սակայն ում մանկուց մատնացույց են արվել դրանք, հասուն տարիքում իրենց առաջնորդական գծերը հաստատելու և ցուցադրելու համար շրջապատի և երրորդ անձանց կարիքն ու աջակցությունն են ունենում: Նույն տրամաբանությամբ, քանի որ աղջիկներին հատուկ առաջնորդական հատկանիշների սերմանում չի տարվում մանուկ հասակից, հասուն տարիքում իրական առաջնորդություն ցուցաբերում են հենց նրանք, ովքեր իրականում ունեն այդ հատկանիշները և ոչ թե կեղծ կերպարի կրողներ են, ինչպես տղաների պարագայում կարող է լինել:

Հետազոտությունը ևս մեկ անգամ հաստատեց այն, որ քաղաքականապես ակտիվ կնոջ կերպարը անձնավորված է. այն ասոցիացվում է կոնկրետ կերպարների հետ, ինչը կարող է պայմանավորված լինել նրանով, որ կանանց թիվը քաղաքականության մեջ զգալիորեն փոքր է, և քաղաքականապես ակտիվ կնոջ հավաքական կերպարը ձևավորվում է, այսպես կոչված, վառ արտահայտված առաջնորդական հատկանիշներ ունեցող կանանցից: Ի տարբերություն կանանց՝ տղամարդկանց պարագայում դժվար է առանձնացնել քաղաքական առաջնորդի մեկ հավաքական կերպար, ինչը պայմանավորված է քաղաքականության մեջ տղամարդկանց մեծ թվով ներգրավվածությամբ և հետևաբար առաջնորդական հատկանիշների բազմազանությամբ:

Հետաքրքրական է նաև այն, որ քաղաքական կուսակցությունները և քաղաքական նախաձեռնությունները համեմատելիս չնկատեցինք առաջնորդության բացարձակ մեկ տեսակին հավավածություն: Ընդհակառակը, կարելի էր տեսնել ԶԿ և ԶՆ առնվազն երկու-երեք ներկայացուցիչ, որոնք ունեին առաջնորդության առաջարկվող յուրաքանչյուր

տեսակին բնորոշ հատկանիշներ: Այսպիսով՝ առաջնորդության հատկանիշների բացահայտման որոշակի տարբերություններ նկատվում են սեռերի, բայց ոչ քաղաքական կառույցների տեսակների միջև:

Յետազոտության արդյունքները փաստեցին նաև այն, որ կանանց դեպքում ծնողական ընտանիքը և ծնողների դիրքորոշումը ավելի մեծ դեր են խաղացել իրենց հետագա քաղաքական ակտիվության վրա, քան տղամարդկանց դեպքում:

5.4. Քաղաքական մասնակցության և քաղաքական ակտիվության գենդերային բնութագիրը

Քաղաքականապես ակտիվ մարդու հիմնական նկարագիրը

Յետազոտության խնդիրներից էր նաև պարզել քաղաքականապես ակտիվ մարդու բնութագրման գենդերային զգայունությունը և ընկալումների գենդերային տարբերությունները քաղաքական կառույցների ներկայացուցիչների շրջանում:

Քաղաքականապես ակտիվ մարդուն բնութագրելիս առանձնացվեցին երկու հիմնական խմբեր՝

ա) պարզապես քաղաքացիներ, որոնք դրսևորում են քաղաքական ակտիվություն,

բ) քաղաքական գործիչներ:

Նկատվեց հետաքրքիր նրբություն. տղամարդ մասնակիցները, տալով քաղաքականապես ակտիվ մարդու բնութագրիչները, ավելի պրագմատիկ էին, իսկ կին մասնակիցների նշած բնութագրիչների մեջ նկատվում էին նաև իդեալիստական մոտեցումներ:

ա) Քաղաքականապես ակտիվ քաղաքացու նկարագիրը

Այսպես՝ կանանց կարծիքով՝ քաղաքականապես ակտիվ մարդը պետք է լինի **արդար, օբյեկտիվ, ռեալիստ, նպատակասլաց, համառ,**

գրագետ ու կրթված: Պետք է հավատ, կամքի ուժ ու հստակ գաղափար ունենա, հանուն որի առաջ կգնա: Պետք է ակտիվություն ցուցաբերի, պասիվ չլինի, ինչպես նաև լավատեղյակ լինի քաղաքականությունից ու քաղաքական կյանքից: Պետք է նաև լինի պայքարող ու ունենալով վերլուծական մտածողություն՝ ի վիճակի լինի տարբերել կեղծիքն ու սուտը և հաղթահարի դրանք:

«... Պետք է շատ հոգու ուժ ունենա, այսինքն՝ անկոտրում լինի, բայց ունենա խղճի խայթ: Ինքը պիտի անկախ լինի, չթողի, որ ինչ-որ մեկը առաջնորդի իրեն կամ գերիշխի իր վրա: Պետք է հաշվի առնի ժողովրդի ձայնը»:

ՔԿ, իգական, ստորին օղակ

«... Քաղաքականապես ակտիվ անձնավորությունը պետք է տեղյակ լինի երկրի քաղաքական համակարգից, քաղաքական կուսակցություններից, դրանց գաղափարախոսություններից, որպեսզի ինքն էլ կարողանա ընտրություն կատարել: Քաղաքականապես ակտիվ մարդը պետք է տեղյակ լինի բոլոր գործողություններից, իրականում հետևի բոլոր կուսակցությունների քաղաքական գործիչների աշխատանքներին»:

ՔԿ, իգական, միջին օղակ

«... Ամենակարևորը անալիտիկ մտածողություն ունենալն է, որը ես շատ եմ կարևորում, ինչը շատ քիչ է մեր հասարակությունում, քանի որ մի ինֆորմացիա ստանալով, մի նորություն կարդալով՝ արդեն իրենք ազդվում են դրանից, ու շատ դժվար է իրենց համոզել»:

ՔԿ, իգական, վերին օղակ

Տղամարդ հարցվողների կարծիքով՝ քաղաքականապես ակտիվ մարդը պետք է լինի **հայրենասեր, վճռական, գրագետ, կրթված, ազնիվ, անկեղծ ու հետաքրքրասեր: Ունենա բարոյական նկարագիր,**

ինչպես նաև գաղափարական հստակ արժեքներ ու քաղաքական պատկերացումներ, քաղաքական համակարգային մտածելակերպ: Կարևորվեց նաև կազմակերպչական ջիղ ու սկզբունքայնություն ունենալը, ղեկավարելու լավ հմտություններ ունենալը:

«... Քաղաքականապես ակտիվ մարդը անտարբեր չէ: Ինձ թվում է ուղղակի, որ մարդիկ չպետք է լինեն անտարբեր, հասկանան, փորձեն ընդհանուր պատկերը գոնե գլոբալ դիտարկել, ոչ թե նեղ ինչ-որ անձնական շահերից ելնելով»:

ՔՆ, արական, միջին օղակ

«...Մենք բոլորս քաղաքականապես ակտիվ ենք, բայց մեզանից ոչ ոք քաղաքական ակտիվիստ չէ: Քաղաքականապես ակտիվ մարդու համար ամենակարևոր հատկանիշը իրազեկվածությունն է և բազային որոշակի գիտելիքները:

ՔԿ, արական, միջին օղակ

«...Վճռականություն, գիտակցություն, ազնվություն, որ հույսեր չունենան անձնական խնդիրներ լուծել քաղաքական դաշտում, և այն մարդիկ, որոնք կփորձեն անձնական խնդիրները լուծել, խայտառակ կլինեն, ինչպես վերջերս եղավ: Ես, իհարկե, պատրաստակամություն ունեմ գնալ մինչև վերջ»:

ՔՆ, արական, միջին օղակ

«...Չգիտեմ, ինձ թվում է՝ պետք է սկզբունքներ ունենալ, չպետք է դավաճանի այն գծին, որն ինքն ընտրել է: Չպետք է կաշառվի, պետք է ունենա մարտական ոգի, չհիասթափվի, քանի որ երբ ժողովրդի մեջ հիասթափության ալիք է բարձրանում, ինքը՝ ակտիվիստը, պետք է ավելի լավ գործի, քանի որ հիասթափությունները միշտ լինում են վերելքների ժամանակ»:

ՔԿ, արական, ստորին օղակ

Համեմատելով կանանց և տղամարդկանց տրված բնութագրերը՝ կարելի է գտնել որոշակի նմանություններ հիմնականում սկզբունքային բնութագրիչների տեսանկյունից: Չնայած դրան՝ այն հարցին՝ արդյոք կին և տղամարդ քաղաքականապես ակտիվ մարդկանց բնութագրերը տարբերվում են, հարցվողները նշեցին, որ ժամանակակից պայմաններում տարբերությունը գնալով վերանում է: Եթե մի քանի տասնամյակ առաջ քաղաքականապես ակտիվ էին հիմնականում տղամարդիկ, իսկ կանայք, կարծրատիպերից ու հասարակական կարգերից դրդված, քաղաքականառավել պասիվ վարքագիծ էին դրսևորում, ու կին քաղաքական ակտիվիստ հազվադեպ էր երևան գալիս ասպարեզ, ապա այսօր հասարակության կողմից որակական և քանակական որևէ տարբերություն չի դրվում քաղաքականապես ակտիվ կնոջ ու տղամարդու միջև:

Քաղաքականապես ակտիվ քաղաքացուն բնութագրելիս ևս մեկ ընդհանրական հատկանիշ նշվեց, որ անկախ սեռից՝ քաղաքականապես ակտիվ լինելը չի նշանակում լինել բուն քաղաքականության մեջ ու պաստառներով կամ դրոշներով հանրային միջոցառումների մասնակցել: Քաղաքականապես ակտիվ կարելի է լինել ցանկացած ոլորտում, օրինակ՝ արվեստում, գիտության, կրթության ոլորտներում և այլն: Այն արվեստագետները, որոնք քաղաքական ենթատեքստով արվեստ են ստեղծում, գիտնականները, որոնք քաղաքականության վերաբերյալ գիտական աշխատություններ են գրում կամ թարգմանում, և այն մանկավարժները, որոնք գրագետ, ճիշտ ու ուսուցանող մեթոդներով քաղաքականությանն են ծանոթացնում աշակերտներին, այս բոլոր մարդիկ ևս համարվում են քաղաքականապես ակտիվ: **Նաև նշվեց, որ քաղաքականապես ակտիվ լինելը ենթադրում է, որ մարդն ակտիվորեն մասնակցում է ընտրություններին, կարողանում է բարձրաձայնել իր և իր համայնքի խնդիրները համապատասխան առյուծակներում՝ փորձելով ազդեցություն ունենալ քաղաքական կուսակցությունների որոշումների վրա:**

«...Ես բացարձակապես չեմ կարծում, որ քաղաքականապես ակտիվ բոլոր մարդիկ պիտի պաստառ վերցնեն ու գնան

կառավարության շենքի մոտ կանգնեն: Քաղաքականապես ակտիվ մարդ եմ համարում, օրինակ, եթե մարդը բիզնես է անում, ինչ-որ անարդարության է բախվել, ինքը չի փորձում կաշառել կամ ինչ-որ ձևով էդ հարցը լուծել, այլ գնում է դատարան և պաշտպանում է իր շահը: Դա էլ է քաղաքական, ոնց որ արարքը, երբ ինքը փորձում աս պաշտպանել իր շահերը»:

ԶՆ, իգական, վերին օղակ

«...Քաղաքացիներին մտահոգող հարցերը բարձրաձայնող կառույց, երևի թիվ մեկը, պետք աս լինի անկեղծ, անկեղծ թե՛ ինքն իր հետ, թե՛ են մարդկանց հետ, որոնց շահերը ինքը ներկայացնում աս, իր աշխատելու ցանկությունը, որը զուգահեռ պետք է լինի, վճռականություն և յուրաքանչյուր գործում համբերատար լինելու ունակությունը, որովհետև, որպես կանոն, արագ ու չմտածված քայլերը հաճախ տանում են անկանխատեսելի հետևանքների»:

ԶԿ, արական, վերին օղակ

Յետաբերականն այն է, որ որևէ էական տարբերություն չնկատվեց ոչ սեռերի, ոչ քաղաքական կառույցների միջև: Այս կարծիքին համամիտ էին թե՛ ԶՆ, թե՛ ԶԿ կին և տղամարդ ներկայացուցիչները:

Ըստ հարցվողների (և՛ կանանց, և՛ տղամարդկանց)՝ քաղաքականապես ակտիվ լինելու հարցում գեղեցրային տարբերություններ կամ սահմանափակումներ դնելը ոչ միայն անթույլատրելի է, այլև անհեթեթ, քանի որ քաղաքականապես ակտիվ հասարակության անդամ լինելը թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց իրավունքն է, և այն այդպես էլ ընկալվում է:

բ) Քաղաքական գործչի՝ որպես քաղաքականապես ակտիվ մարդու նկարագիրը

Քաղաքական գործչին՝ որպես քաղաքականապես ակտիվ մարդու բնութագրելիս էական տարբերություններ չնկատվեցին կանանց

ու տղամարդկանց կարծիքներում: Սա կարող է պայմանավորված լինել նրանով, որ այսօր հայաստանյան քաղաքականության մեջ գերակշռող մասը տղամարդիկ են, և քաղաքական գործիչ ասելով՝ մարդիկ հիմնականում պատկերացնում են արական սեռի ներկայացուցիչ, հետևաբար վերջինիս բնութագիրը կառուցակցվում է հենց այդ կերպարի շուրջ:

Հիմնական ընդհանրական բնութագրիչը հետևյալն էր՝ քաղաքական գործիչը պետք է լինի **արդար, ազնիվ, անկոտրուն և ունենա խղճի խայթ**: **Պետք է չվճճանքով, ունենա քաղաքական հստակ նպատակ, դիրքորոշում, արժեհամակարգ և ազգային մտածողություն**: **Պետք է վճռական լինի ու կարողանա կառուցողական լուծումներ առաջարկել քաղաքացիներին մտահոգող խնդիրների համար**:

«...Ամենակարևոր բնութագրիչը ազգային մտածողություն ունենալն է, այսինքն, եթե մարդն ընտրում է քաղաքական գործունեությամբ զբաղվելը, պետք է քաջ գիտակցի, որ շատ զրկանքներ պետք է կրի, իր անձնական հետաքրքրությունները, շահերը պետք է մի կողմ թողնի և զբաղվի այլ մարդկանց բարօրությամբ»:

ԶՆ, իգական, վերին օղակ

«...Նախ քաղաքականությամբ զբաղվող մարդն առաջին հերթին պիտի լինի բարոյական նկարագրի տեր, որովհետև են, ինչ ասում աս քաղաքականությունը, չգիտեմ՝ ինչերն են զբաղվում, մեկ-մեկ էլ տենց չակերտավոր բաներ են ասում»:

ԶԿ, արական, միջին օղակ

«...Քաղաքականապես ակտիվ մարդը նախ պետք աս ունենա քաղաքական հայացքներ, ոչ թե սպասի՝ իրան ինչ-որ մեկը հուշի, քաղաքական հայացքների բխող, բնական աս, որոշակի գործունեություն պետք է ծավալի, գտնի համախոհներին»:

ԶԿ, արական, վերին օղակ

«...Դե քաղաքականապես ակտիվ մարդն առաջին հերթին պետք ա լինի ռեալիստ, առաջին հերթին պետք ա իրեն ամբողջովին մտցնի քաղաքականության մեջ, որպեսզի իր ակտիվությունը զգացվի»:

ԶԿ, իգական, ստորին օղակ

Չնչեց նաև այնպիսի մտահոգություն, որ այսօր հայաստանյան իրականությունում քաղաքական գործչի, հատկապես կին քաղաքական գործչի կերպարի ձևավորման ու ճիշտ ընկալման վրա բացասական ազդեցություն են ունենում հետևյալ գործոնները՝

1) իրենց քաղաքական վերլուծաբան և քաղաքականությամբ զբաղվող անձ համարող մարդկանց բազմազանությունը,

2) մերօրյա ոչ կոռեկտ քաղաքական լրագրությունը:

Այս ամենը հասարակությունում ձևավորում է քաղաքական գործչին բնորոշ կարծրատիպային հատկանիշներ ու բնութագրիչներ, ինչն էլ իր հերթին ևս խոչընդոտ է ստեղծում քաղաքական ոլորտում կանանց ավելի մեծ տոկոսային ներգրավվածությունն ապահովելու համար»: Նշված հանգամանքը հաստատվում է նաև նրանով, որ հենց հարցվողները նշեցին (մեծ մասամբ տղամարդիկ), որ քաղաքական ոլորտում կանանց ցածր ներգրավվածության արդյունքում կանայք դառնում են առավել պասիվ քաղաքական գործիչներ՝ չկարողանալով օգտագործել իրենց ողջ ներուժը քաղաքական ոլորտի զարգացման և բարելավման գործում:

Քաղաքական կարիերա սկսելու և քաղաքական միավորին միանալու շարժառիթներ

Չարմանալի չէ այն, որ քաղաքական նախաձեռնությունների թե՛ արական և թե՛ իգական սեռի ներկայացուցիչները նշում էին, որ քաղաքական կարիերա սկսելու իրենց պատմությունները ոչ մի հավակնոտ հիմքեր կամ դրդապատճառներ չունեին: Այսինքն՝ քաղա-

քականությամբ զբաղվելու որևէ կոնկրետ ցանկություն կամ նպատակադրված որոշում չէն ունեցել: Իրենց հիմնականում համախմբել են քաղաքական հարցերն ու երկրի բարեկեցությանը վերաբերող խնդիրները, որոնց շնորհիվ էլ տեղի է ունեցել տվյալ ակտիվ խմբերի հետ նույնականացում: Եվ կոնկրետ միավորմանը միանալու դրդապատճառը տվյալ նախաձեռնության տեսլականը, ծրագրերն ու համախոհների բանակն է եղել:

«...Քաղաքական կարիերա ասելը երևի մի քիչ բարձր կինչի, ես ընդամենը ինձ համարում եմ շարքային հայ մարդ, հայ քաղաքացի, որն անելիք ունի, և որը չի կարող տանը նստել, հետևել, թե ինչ է ամեն օր տեղի ունենում մեր երկրում, երբ ինձ նման մարդիկ պայքարում են ինչ-որ բան փոխելու համար»:

ԶՆ, արական, ստորին օղակ

Իհարկե, նախաձեռնություններում ներգրավված տարիքով մեծ և առավել հարուստ փորձ ունեցող անդամների պարագայում քաղաքական ակտիվությունն ու կարիերան կապվում էին նաև ուսանողական տարիներին, հորհրդային Միության ժամանակաշրջանում տիրող ընդվզումներին և գործողություններին մասնակից լինելու հանգամանքին:

«...Քաղաքականություն մտնելու գործընթացը շատ բնականոն եղավ: Ինչո՞ւ եմ ասում բնականոն, որովհետև իմ պատկերացումներով մարդը չի կարող ինքնաբոխ կերպով քաղաքական գործիչ լինել: Դեռևս ուսանողական տարիներին հասարակական գործունեությամբ զբաղվում էի, բայց ոչ քաղաքական»:

ԶՆ, իգական, վերին օղակ

Ավելի երիտասարդ ներկայացուցիչները (և՛ տղաները, և՛ աղջիկները) նշում էին, որ իրենց հիմնական ակտիվությունը դրսևորվել է

հենց 2007-2008 թվականների նախագահական ընտրությունների և դրանց հաջորդող դեպքերի ժամանակ և շարունակվում է առ այսօր:

Ինչ վերաբերում է քաղաքական կուսացություններին միացած անդամների քաղաքական կարերային, ապա այստեղ կա հետաքրքիր տարբերություն: Որոշ կուսակցությունների շարքերում (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ) ներգրավված կին ներկայացուցիչները նշում էին, որ իրենց՝ տվյալ կուսակցությանը միանալու և ընդհանրապես քաղաքական կարիերա սկսելու դրդապատճառներն են եղել որևէ լավ գործ անելու ցանկությունը կամ տվյալ կուսակցության հիմնական գաղափարախոսական մոտեցումներին համամիտ լինելը:

«... Դե շատ եմ լսել, որ կուսակցությունը շատերին օգնում ա, գնում են մանկապարտեզներ, մանկատներ, նվերներ են բաժանում, ուրախացնում են երեխեքին: Ես սիրում եմ տեսնել բաներով զբաղվել: Հիմնականում դրա համար գնացի կուսակցություն: Ոչ մի քաղաքական նկատառում չի եղել»:

ԸԿ, իգական, ստորին օղակ

«... Ես չեմ սիրում մակերեսային ուսումնասիրությունը, ես մի քանի կուսակցությունների, բնականաբար ունենք ավելի շատ, բայց էն հիմնական կուսակցությունների ուղղվածությունները նայեցի ու վերջին աշխատանքները, ու քանի որ միջազգային ոլորտով էի խորացած, տեսա, որ միջազգային գործունեություն ծավալում են [կուսակցությունների անուններ]: Ու քանի որ [կուսակցության անուն] ամենաառաջինն էր ու ստատիստիկայով մոտ էր էդ քաղաքական ընտանիքին, հետևաբար, տեսնելով էդ գիծը, որը նա վարում է ու հոգեհարազատ է ինձ, ընտրեցի էդ կուսակցությունը»:

ԸԿ, իգական, միջին օղակ

Տղամարդկանց՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ կուսակցությունների շարքերը համալրելու հիմնական դրդապատճառները նույնպես պայմանավոր-

ված էին տվյալ կուսակցության հետ գաղափարական հոգեհարազատություն ունենալու հանգամանքով, սակայն կար նաև այլ շարժառիթ՝ որևէ փոփոխություն անել և ներդրում ունենալ երկրի քաղաքական կյանքում, ինչը տեսնում էին հենց տվյալ կուսակցության շարքերը անդամագրվելու միջոցով:

Ինչ վերաբերում է ոչ կուսակցային քաղաքական կուսակցություններին (հատկապես ՀԱԿ կուսակցությանը), ապա այստեղ կանանց ու տղամարդկանց քաղաքական մասնակցության դրդապատճառների միջև եական տարբերություն չնկատվեց: Այս կուսակցություններին անդամագրվել և քաղաքական գործունեություն են սկսել իշխող քաղաքական ուժերի գաղափարական մոտեցումների ու գործողությունների հետ չհամաձայնելու և տվյալ ընդդիմադիր կուսակցության գաղափարախոսությանը հարելու պատճառով: Հիմնական նպատակներն էին՝ փոխել գործող համակարգը, նվազագույնի հասցնել կոռուպցիոն ռիսկերն ու կաշառակերության դեպքերը, ավելի բարեկեցիկ կենսապայմաններ ստեղծել բնակչության համար, ազատ խոսքի և գործողությունների հնարավորություններ ապահովել և այլն: Այս ամենին հասնելու համար, ըստ հարցվածների, լավագույն տարբերակն էր տվյալ քաղաքական կուսակցությանը միանալը, նրա գաղափարախոսությունը տարածելն ու դրանով տվյալ կուսակցության հաղթանակը ապահովելը: Այս ամենի արդյունքում ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչ կանայք և տղամարդիկ տեսնում էին իրենց նպատակների իրագործումը և բոլորի համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Հետաքրքրական էր, որ ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչ և՛ կանայք, և՛ տղամարդիկ առանձնացրին կուսակցությանը միանալու այնպիսի շարժառիթներ, ինչպիսիք են կուսակցության հարուրամյա փորձը, ազգային-ազատագրական պայքարում ունեցած նշանակալի դերը և միայն իրենց բնորոշ գաղափարական առանձնահատկությունները:

«... Ազգային գաղափարական լուրջ կազմակերպություն է մեր ժողովրդի կյանքում վերջին առնվազն 125 տարիներին: Այն

ազգային արժեքների պաշտպանության, իր գործունեության, իր կատարած աշխատանքներով հսկայական նպաստ է բերել շատ աննպաստ պայմաններում՝ արտաքին, ներքին և այլն»:

ԸԿ, արական, վերին օղակ

Չարկ է նշել, որ «Չայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության շարքերում թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ անդամագրվում են հիմնականում սերնդեսերունդ, և այս փաստը մեծապես ազդում է ավելի երիտասարդ սերնդի՝ կուսակցությանը միանալու որոշման վրա:

«...Ճտողներս մինչև հիմա այս կուսակցության անդամ եմ, և նշեմ, որ դաշնակցության միջոցով եմ իրար հանդիպել, և արդեն նշեցի, որ փոքր ժամանակվանից տեսել եմ, թե ինչպես են գնացել ժողովների, եկել, գաղափարների մասին եմ լսել»:

ԸԿ, իգական, ստորին օղակ

Այն հարցին, թե ինչու են ընտրել քաղաքական կուսակցությունը ոչ թե այլ կառույց՝ նպատակներին հասնելու համար, բոլոր կուսակցությունների դեպքում պատասխանը նույնական էր, և տարբերություն չնկատվեց նաև կանանց ու տղամարդկանց հնչեցրած կարծիքների միջև: Քաղաքական կուսակցություններում քաղաքական ակտիվություն դրսևորելու հիմնական պատճառն այն էր, որ միայն այդ դեպքում է հնարավոր որևէ եական, շոշափելի ու նպատակային արդյունքի հասնել: Որպես քաղաքական կուսակցության ներսում դրսևորվող ակտիվության այլընտրանքներ՝ նշվեցին *քաղաքացիական շարժումները և հասարակական ոլորտում ունեցած ակտիվությունը:*

Քաղաքացիական շարժումներն բնութագրվեցին որպես կարճաժամկետ արդյունք տվող միջոցառումներ, որոնք իրականում իրենց հասցեականությամբ ու եռությամբ որոշ դեպքերում դառնում են քաղաքական շարժումներ, քանի որ ուղղված են լինում քաղաքական իշխող համակարգի բարելավմանն ու դառնում են ստեղծված անարդար իրավիճակի դեմ պայքարելու միջոց:

Հասարակական ոլորտում ակտիվությունն էլ գնահատվեց որպես փորձագիտական մակարդակում ներկայացվածություն ու կարծիքների փոխանակում, որը եական փոփոխություն չի կարող ունենալ, պարզապես անուղղակիորեն կարող է ազդել որոշումներ ընդունողների կարծիքների վրա՝ այդուհանդերձ չերաշխավորելով վերջնական և վճռորոշ դեր ու նշանակություն:

Առաջխաղացումը քաղաքական կառույցներում

Չետագոտության խնդիրներից էր նաև պարզել, թե ինչ բնույթ է կրում քաղաքական կառույցի ներքին շարժունակությունը գեներային տեսանկյունից: Ընդհանուր առմամբ ֆորմալ առաջխաղացման սխեմայի տեսանկյունից մեծ դեր ունի անհատի աշխատասիրությունն, պատրաստակամությունը ու նվիրվածությունը կուսակցության/նախաձեռնության գաղափարախոսությանը: Այնուամենայնիվ, երբ հերթը հասնում է հենց առաջխաղացմանը, հատկապես կուսակցությունների ներսում տարբերություններ են նկատվում կանանց և տղամարդկանց ընձեռնված հնարավորությունների տեսանկյունից: Այսպես՝ կուսակցություններում կանանց պարագայում պաշտոնի առաջադրումը եղել է հենց կուսակցությունների և նախաձեռնությունների ղեկավար մարմինների կողմից, այսինքն՝ հիմնականում չի նկատվել ինքնաառաջադրում:

«...Չէ, ասեմ՝ ինչու սահուն ներկայացրի, որովհետև առաջարկը եղել ա իրանց [կուսակցության ղեկավարության] կողմից, ես ոչ մի անգամ չեմ ասել, որ ինձ ներկայացնեն քաղաքական խորհրդի անդամ»:

ԸԿ, իգական, միջին օղակ,

Նշված իրավիճակը լիովին տարբեր է տղամարդկանց պարագայում, քանի որ նրանց մեծ մասը հենց ինքնաառաջադրվել է: Կանայք նշում էին, որ իրենց առաջխաղացման գործում մեծ դեր են ունեցել ընկերներն ու շրջապատը, որոնք ոգեշնչել և վստահություն են հաղորդել նրանց:

«...հնձ ճանաչող մարդիկ են երաշխավորել, որ ես կուսակցություն մտնեմ: Ես եմ գնացել, խնդրել: Անունը չեմ տա՝ ում եմ դիմել, բավական հանրահայտ դեմք էր: Ասաց՝ գործ չունես»:

ՔԿ, իգական, միջին օղակ

«...հնձ շատ օգնեցին իմ ընկերները, որոնք կուսակցության անդամ չեն, որովհետև իրենց օժանդակությունը ինձ համար շատ կարևոր է, որովհետև երբեմն դու հուսահատվում ես, մտածում ես, որ չես կարողանա անել ու նստած սուրճ ես խմում քո ընկերների հետ, ու իրենք քեզ մոտիվացնում են, ասում են՝ հիշում ես, թե դու որտեղից սկսեցիր»:

ՔԿ, իգական, միջին օղակ

Այսինքն՝ կանանց մոտ նկատվում է **ինքնավստահության և մոտիվացիայի ցածր մակարդակ**, ինչի արդյունքում ինքնաառաջադրվելու որոշում կամ ցանկություն չի առաջանում: Ավելին՝ նույնիսկ դեկավարության կողմից առաջադրվելուց հետո կանանց անհրաժեշտ է լինում շրջապատի և ընկերների հոգեպես աջակցությունը:

«...Բարոյական օգնություն են ցույց տվել իմ ընկերները, որոնք մինչև վերջ հավատացել են ինձ, հավատացել են իմ գաղափարներին, իմ նպատակներին, իմ ուժերին, որ ես կարող եմ դա անել, որովհետև իրականում շատ դժվար է լինել մենակ»:

ՔԿ, իգական, միջին օղակ

Չնայած տղամարդիկ նույնպես հաճախ առաջադրվում են հենց դեկավարության կողմից, սակայն, ի տարբերություն կանանց, տղամարդ ինքնաառաջադրվողների թիվն ավելի բարձր է: Տղամարդիկ իրենց սոցիալական կապերը օգտագործում են ինքնաառաջադրվելու արդյունքում հաղթանակի հասնելու հավանականությունը մեծացնելու համար:

«...Դիրքին հասնելուն օգնել ա փոխադարձ ճիշտ ընկալումը, գնահատելը, երբ որ ընկերներդ տեսնում են՝ Ես մի բանում ես մարդը առավել գիտակ ա կամ գործնական առումով ավելի արդյունավետ կարող ա էդ գործը առաջ տանել, բնական ա՝ վստահում են»:

ՔԿ, արական, միջին օղակ

Կարևոր է նշել այն, որ ստորին օղակից միջին օղակ առաջխաղացման հիմնական «օգնականը» թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համար հանդիսացել է կուսակցականի քրտնաջան աշխատանքը, ակտիվությունը, նախաձեռնողականությունն ու ինքնազարգացումը: Այսինքն՝ ստորին օղակում ակտիվ լինելով և սեփական հմտություններն ու կարողությունները դրսևորելով՝ ստորին օղակի անդամները միջին օղակ տեղափոխվելու հնարավորությունն են ստացել: Ինչ վերաբերում է միջին օղակից վերին օղակ տեղափոխվելու առանձնահատկություններին, այստեղ տարբերությունն այն է, որ հիմնականում համագումարների ժամանակ անդամների ինքնաառաջադրման կամ դեկավարության կողմից առաջադրման և քվերակության միջոցով է տեղի ունեցել:

Հարկ է նկատել, որ կուսակցությունում առաջխաղացում և բարձր դիրք գրավելու արդյունքում ձեռքբերումների և զոհաբերումների մասին խոսելիս նույնպես ի հայտ եկան գենդերային տարբերություններ: **Եթե տղամարդկանց պարագայում հիմնականում ձեռքբերումներն են՝ նոր ընկերներ, նոր փորձառություն և գիտելիքներ, իսկ կորուստները՝ հիմնականում ժամանակ և էներգիա, ապա կանանց դեպքում նույն ձեռքբերումներին և կորուստներին զուգահեռ նկատվում է նաև մի այլ հիմնախնդիր: Ամուսնացած կանանց համար մեծ խնդիր է ընտանեկան պարտականություններին զուգահեռ կատարել նաև կուսակցական դիրքից բխող պարտականությունները, ինչը հաճախ առաջացնում է կոնֆլիկտային և խնդրահարույց իրավիճակներ:** Այսինքն՝ հայաստանյան իրականությունում լայն տարածում ստացած այն կարծրատիպը, որ քաղաքական գործիչ, աշխատող կինը չի կարող լավ ընտանիքի մայր լինել, իր բացասական ազդեցությունն է ունեցել և

ունենում քաղաքականության մեջ ներգրավված կանանց ընտանեկան կյանքի վրա:

«...Մեր հայ իրականության մեջ տատը համարվում է պաշտամունք, մայրը՝ սրբություն, կինը՝ դասակարգային թշնամի, աղջիկը՝ պապայի աչքի լույսը: Հայերի մեջ էսպես է բանաձևը կանանց: Տղամարդկանց բանաձև չգիտեմ»:

ԶԿ, իգական, վերին օղակ

«... Հա, սրվել են, առաջին պահին շատ սուր ընկալվեց, չէին ընդունում, չէին ուզում, սովորել էին, որ ես տանը պիտի լինեմ: Անուսինս մինչև հիմա էլ է դժգոհ, որ ես զբաղվում եմ քաղաքականությամբ: Ինքը ասում է՝ տանը քիչ գործ ունես, արի՛ նստի տանը, քո գործերը արա: Հայ տղամարդիկ էսպես են վերաբերվում ԻՐԵՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ, հա: Ուրիշի կանանց, դե, հիմա... Բայց երբ որ իրենց կանայք են, իրենք շատ սեփականատեր են»:

ԶԿ, իգական, վերին օղակ

Իհարկե, քաղաքականությունում իրենց հաստատուն տեղը գրաված կանանց պարագայում կոնֆլիկտներն ու դժվարությունները դարձել են հաղթահարելի և անցել են հետին պլան՝ փաստելով ընտանիքի արական սեռի ներկայացուցիչների կողմից իգական սեռի քաղաքական ակտիվության ընդունումն ու որոշ դեպքերում քաջալերումը:

«... Ասեմ՝ իմ ընտանիքը Էնթան վաղուց ա սովոր իմ ես իրավիճակներին, այսպես ասած: Գիտեք՝ չեն էլ զարմանում արդեն, իրենց համար դա շատ սովորական ա: Իհարկե, ուրախանում են իմ հաջողություններով, բնական բան ա, ոգևորվում են: Հիմա եթե գնամ տուն, հոգնած չլինեմ, կսկսեմ պատմել՝ ինչ եմ խոսել, ինչ եմ արել, ոնց եմ արել: Դե, լսում են, բնականաբար:

Շատ անգամ կարծիք են հայտնում»:

ԶԿ, իգական, վերին օղակ

Հարցված կանայք նշում էին, որ այսօր չունեն ընտանեկան խնդիրներ՝ կապված իրենց քաղաքական ակտիվության և գործունեության հետ, ընդհակառակը, ավելի ինքնավստահ են դարձել ընտանիքում որոշումների կայացման մակարդակում: Սակայն շատերը նշում էին, որ ընտանիքի անդամների՝ կանանց քաղաքական ակտիվությանը դեմ լինելը մեծ խնդիր է հայաստանյան հասարակության համար և հաճախ իրական խոչընդոտ է դառնում խելացի կանանց քաղաքական ներգրավման և հաջողությունների հարցում:

«...Ընդհանուր հայաստանյան իրականությունից ա գալիս: Մեզ մոտ կանանց ընկալումը հասարակության կողմից եղբան էլ բան չէ էլի քաղաքականության մեջ»:

ԶԿ, արական, միջին օղակ

«...Ցավոք, հայաստանյան իրականությունում շատ են ընտանիքները, որտեղ ընտանիքի անդամները դեմ են լինում կանանց քաղաքական ակտիվությանը: Մեր ընտանիքում, փառք աստծո, այդպես չէ, բայց, իրոք, շատ են նման ընտանիքները, որտեղ կանայք զրկվում են քաղաքական մասնակցությունից»:

ԶԿ, իգական, միջին օղակ

5.5. Սոցիալական կապերը քաղաքական կառույցների ներսում

Կուսակցությունների և քաղաքական նախաձեռնությունների ներսում ընկերական կապեր ստեղծելու և սոցիալական կապիտալը զարգացնելու հարցում որևէ առանձնահատկություն և տարբերություն չնկատվեց: Հիմնական միտքն այն էր, որ միավորումների ներսում

գործընկերների հետ փոխհարաբերությունները շատ ընկերական էին ու բարիդրացիական: Ոմանք ժամանակի սղության պատճառով ԶԿ/ԸՆ գործունեությունից դուրս շփվելու և հաղորդակցվելու հնարավորություն չունեին, իսկ Նրանք, ովքեր նման ժամանակային սղություն չունեին, ներկուսակցական/ներնախածեռնական հարաբերությունները շարունակում էին նաև առօրյա կյանքում: Հաճախ զուտ ընկերական փոխհարաբերությունները վերածում են ավելի մտերմիկ փոխհարաբերությունների. շփումը տեղափոխվում է ավելի բարձր մակարդակ միջընտանեկան ընկերության:

«... Բնականաբար, կան կուսակից ընկերներ, որոնք միայն աշխատանքի շրջանակում էլ մտում են: Բայց կան նաև Էնպիսի ընկերներ, որոնք դառնում են քո առօրյայի մի մասնիկը, դու արդեն սկսում ես նրանց հետ շփվել, ընտանիքներով մտերմություն անել: Ծիչտն ասած, իմ բախտը դրանով էլ է բերել, որովհետև եղ հազարավորների միջից գտնել 10-15 իսկական ընկեր, դա, իմ կարծիքով, շատ կարևոր ձեռքբերում է»:

ԶԿ, իգական, միջին օղակ

Կան նաև ներկուսակցական ամուսնությունների և ընտանիքների կազմման դեպքեր: Այս դեպքերի համար յուրահատուկ է այն, որ կնոջ կուսակցական ակտիվությունը ընկալվում է որպես բնական երևույթ և ամուսնությունը չի խոչընդոտում հետագա ակտիվությանն ու առաջխաղացմանը:

«... Ընտանիքս ձևավորվել է զուգահեռ, դրա համար փոփոխության մասին չեմ կարող խոսել»:

ԶԿ, իգական, վերին օղակ

Հարցազրույցները բացահայտեցին ոչ միայն ընկերական և ընտանեկան կապեր, այլ կուսակից ընկերներին որպես երեխաների կնքահայր-կնքամայր ընտրելու դեպքեր: Այսինքն՝ ներկուսակցական միջըն-

տանեկան և միջընկերական փոխհարաբերությունները էլ ավելի սերտացվել են քավոր-սանիկ փոխհարաբերություններով:

«... Կնոջս հետ մենք ընտրությունների ժամանակ ծանոթացանք, ես երբևէ չեմ մտածել, որ պետք ա [նշում է իր կուսակցությունը] ինչ-որ աղջկա հետ ամուսնանամ: Նաև մեր քավորը, որը որ մենք նշանակել էինք, ինքն էլ իր կնոջ հետ ծանոթացել էր նույն տեղում [խմբագրական՝ չորսն էլ նույն կուսակցությունից են]: Այսինքն՝ մենք ոչ թե մտածել էինք, որ չէ, եթե [կուսակցության անունը] չլինես, դու իմ քավորը չես կարա լինես»:

ԶԿ, արական, վերին օղակ

ԶԿ/ԸՆ այլ անդամների հետ կոնֆլիկտների մասին խոսելիս նշվեց, որ դրանք հիմնականում լինում էին աշխատանքային բնույթի, ընդ որում՝ նշված կոնֆլիկտները առողջ բանակցությունների արդյունքում հարթվում էին ու լուծում ստանում:

«... Չէ, որ ասեմ տենց լուրջ բաներ, չէ: Բնականաբար, կարող ա՝ ինչ-որ հարցերի քննարկման ժամանակ տարբեր կարծիքներ լինեն, բայց որ գա հասնի ինչ-որ կոնֆլիկտային իրավիճակի, չեմ կարծում...»:

ԶԿ, արական, վերին օղակ

Ըստ հետազոտությանը մասնակցած ԶԿ/ԸՆ ներկայացուցիչների՝ միջանձային կոնֆլիկտներն առավել հազվադեպ հանդիպող երևույթներ են, որոնք հիմնականում որևէ ազդեցություն կամ բացասական հետևանք չեն ունենում ԶԿ/ԸՆ աշխատանքի ու գործունեության վրա:

Միջանձային կոնֆլիկտները հիմնականում լուծվում են ԶԿ/ԸՆ-ից դուրս, իսկ երբ դրանք հնարավոր չի լինում լուծել, կոնֆլիկտի կրողները պարզապես նվազեցնում են շփումը ԸՆ/ԶԿ ներսում, որպեսզի որևէ կերպ չփաստեն ԶԿ/ԸՆ առողջ գործունեությանը:

«... Իհարկե, կոնֆլիկտներ լինում են: Հարթվում են ժա-

մեր տևող վեճերով կամ տևում են 3 րոպե... Լինում է՝ նեղանում են իրարից, բնականաբար, բայց դա ոչ մի կապ չունի մեր աշխատանքային գործի հետ, ինչ-որ անձնական խնդիրներ են պարզապես: Լինում են գաղափարական վեճեր, լինում ա առողջ կոնկուրենցիա»:

ԶԿ, արական, միջին օղակ

Չետաքրքրական էր այն, որ կանայք չնշեցին որևէ եական ու լուրջ կոնֆլիկտ: Լինում են բանավեճեր, անհամաձայնություններ և աշխատանքային բնույթի այլ անհամատեղելիություններ, որոնք, սակայն, չեն ազդում միջանձնային հարաբերությունների վրա: Բանավեճային նման խնդիրներ լինում են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց հետ, սակայն դրանք երբեք չեն վերաճում երկարատև չլուծված հիմնախնդիրների: Այսինքն՝ կանայք միջանձնային փոխհարաբերություններում առավել հանդուրժող են և ոչ կոնֆլիկտային: Կին քաղաքական գործիչների և իրենց գործընկեր կանանց ու տղամարդկանց միջև ծագող հիմնական տարաձայնություններն իրենց բնույթով գաղափարական բնույթի են և հաճախ բխում են քաղաքական կարծիքների անհամապատասխանությունից:

Տարբերություն չնշվեց նաև կին կամ տղամարդ գործընկերների հետ փոխհարաբերությունների տեսանկյունից: Թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ նշում էին, որ հավասարապես շփվում են իրենց կին և տղամարդ գործընկերների հետ, ու բազմաթիվ ընկերական փոխհարաբերություններ ունեն:

Փոխհարաբերությունները ԶԿ և ԶՆ ղեկավարների հետ նույնպես շատ ընկերական և լավ բնույթ ունեին: Ստորին օղակի ներկայացուցիչները նշում էին, որ վերին օղակի անդամներն ու ղեկավարները շատ հարգալից են վերաբերվում իրենց՝ անկախ սեռից, քննարկումների և հանդիպումների ժամանակ հաշվի են առնում նաև իրենց կարծիքներն ու մոտեցումները:

«...Ղեկավար մարմինների հետ փոխհարաբերություն-

ներում ոչ մի տարբերություն իրականում չկա: Իրականում մեզ մոտ հենց էդ ա լավը, որ մեր ղեկավար մարմինը շատ լավ գիտակցում ա, որ հանկարծ եթե մեզ համար ինչ-որ ոչ պոպուլյար որոշում կայացնի, էդ որոշումը մենք ի վիճակի ենք հետ կանչել»:

ԶՆ, արական, միջին օղակ

«Քաղաքացիական պայմանագիր» քաղաքական նախաձեռնության ներկայացուցիչները նշեցին, որ իրենց մոտ հիմնական մոտեցումը մեկ առաջնորդ չունենալն է և բոլորին առաջնորդության հնարավորություններ ու արտոնություններ տալը, այդ իսկ պատճառով դժվարացան նկարագրել որևէ առանձնահատկություն և տարբերություն ղեկավար-գործընկեր և գործընկեր-գործընկեր փոխհարաբերություններում:

«...Մեր ղեկավարությունը գիտակցաբար աշխատում է այն ուղղությամբ, որ բոլոր մարդիկ, որոնք ցանկանում են կարծիք հայտնել, հնարավորություն ունենան դրա մասին խոսելու, բաց լինեն, այսինքն՝ չկաշկանդվեն որևէ բանով, որովհետև ինքը հասկանում է, որ մարդկանց միայն հնարավորությունների դաշտ տալով՝ կարելի է ներգրավել և մասնակից դարձնել»:

ԶՆ, իգական, վերին օղակ

Փոխհարաբերություններում փոփոխություններ մտցնելու հարցում հիմնականում կարծիքները նույնպես նույնական էին: Ըստ մասնակիցների մեծամասնության՝ իրենց ձևավորված փոխհարաբերություններում, հատկապես աշխատանքային շփումներում, որևէ փոփոխության կարիք չկա: Չարաբերությունները շատ դրական են և եական փոփոխության ենթակա չեն թե՛ այն խմբի մարդկանց հետ, որոնց հետ շփումը զուտ գործնական է, թե՛ այն մարդկանց, որոնց հետ ավելի մտերմիկ փոխհարաբերություններ ու շփում է ձևավորվել: Այսինքն՝ միջանձնային որևէ փոփոխություն չնշվեց, քանի որ մարդկանց հետ հարաբերություններ կառուցելիս հաշվի են նստում նրանց ինքնության հետ ու ընդունում կամ չեն ընդունում նրանց այնպիսին, ինչպիսին կան:

«...ինձ թվում ա՛ չպետք է ոչ մի բան փոխել փոխհարաբերություններում, քանի որ, ինչպես ասացի, տարբեր բնավորությունների մարդիկ են՝ յուրաքանչյուր հարցի լուծման, կարգավորման դեպքում տարբեր աշխարհայացքներով ու սեփական տեսլականներով: Ու փոխելու բան, որպես եղպիսին, չկա: Չուտ աշխատանքի, փոխըմբռնման, հարգանքի, մեկը մյուսի ձայնը լսելի դարձնելու և հարգանքով ընդունելու մասին է խոսքը»:

ԲԿ, արական, միջին օղակ

Ղեկավարության հետ կոնֆլիկտների մասին խոսելիս բոլոր մասնակիցները նշեցին, որ կոնֆլիկտներ ղեկավար մարմինների հետ հիմնականում չեն լինում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ կոնֆլիկտները կարող են ծագել այն դեպքում, երբ չկա միասնական քվե (կոնսենսուս) ու ընդհանուր նպատակ և համաձայնություն: Սակայն եթե մարդիկ միավորվում են որևէ քաղաքական միավորի շուրջ, ապա ենթադրվում է, որ բոլորը նույն նպատակն ու ձգտումներն ունեն, հետևաբար ղեկավարների հետ գաղափարական բնույթի կոնֆլիկտներ լինել չեն կարող:

Քաղաքական կառույցների ներսում անհավասար վերաբերմունքի մասին խոսելիս նշվեց, որ ոչ մի անհավասարություն՝ լինի դա սեռով պայմանավորված, տարիքային, կրթության կամ այլ պատճառներով, չի նկատվել: Ընդհակառակը, կին ներկայացուցիչները նշեցին, որ դրական անհավասարություն են նկատում, այսինքն, երբ նրանք կարծիք են արտահայտում կամ մոտեցումներ ներկայացնում, նրանց բոլորը լսում են և ուշադրություն դարձնում: Իհարկե, սա դեռ չի նշանակում, որ իրենք շատ մեծ դեր ունեն որոշումների կայացման հարցում և ղեկավարման լուրջ դերակատարում ունեն, սակայն գենդերային խտրականությունն ունյալն է նկատել:

Անհավասար վերաբերմունքի մասին չխոսելու կին քաղաքական գործիչների միտումը կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ երբ կինը ստանում է քվադի-հավասար մասնակցություն քաղաքական ոլորտում (քվադի, քանի որ իրականում կանանց մասնակցությունը

ապահովվում է ավելի հաճախ հասարակական և քվոտային արդի պահանջների բավարարման նպատակով), ապա խուսափելով այդ մասնակցությունից զրկվելու վտանգից՝ նա ձգտում է չբարձրաձայնել խտրական այն վերաբերմունքը և այլ խնդիրները, որոնք իրականում գոյություն ունեն տիրող քաղաքական համակարգում:

Անհավասար վերաբերմունքի մասին խոսելիս ԴՅԴ կուսակցության երկու կին ներկայացուցիչներ նշեցին, որ Եական նպատակադրված գենդերային անհավասարություն ու խտրականություն իրենց կուսակցության ներսում չեն նկատել: Սակայն միևնույն ժամանակ նրանք գտնում էին, որ անհավասար վերաբերմունքը հասարակության ընդհանրական խնդիր է, որն ակամա տարածվում է փոխհարաբերությունների բոլոր մակարդակների վրա:

«...Որևէ առանձնահատուկ անհավասար վերաբերմունք չկա, հայկական հասարակության և իրականության անհավասար վերաբերմունք է՝ իր բոլոր հետևանքներով: Եթե շատ ֆեմինին են, քեզ լրիվ ուրիշ ձևով են ընկալում: Եթե շատ ֆեմինիզացված են, ավելի երկար են պայքարում, որ քեզ հավասար ընկալեն: Եթե շատ ավելի մասկուլին կոնստրուկտներով են պատասխանում, մի քիչ ավելի կարճանում ա ճանապարհի հավասարության»:

ԲԿ, իգական, միջին օղակ

Չնայած նմանատիպ վերաբերմունքի կրողները չեն ընդունում ու գիտակցում փաստի իրողությունը, այնուամենայնիվ տղամարդիկ ու կանայք տարբեր կերպ են հաղթահարում նույն խնդիրներն ու դժվարության տարբեր մակարդակների են բախվում առաջխաղացում ունենալու համար:

«...Հայաստանում ընդհանրապես ամենուր, մենակ Հայաստանում չէ, ոչ միայն տղամարդկանց շովինիզմը կա, այլև կանանց համախոհության պակասը: Կանայք, չգիտեմ,

կնիկականությունը կա՝ չարություն, նախանձ, չուզել, չհավատալ, ստերեոտիպեր: Մենք խմբագրելու շատ բաներ ունենք»:

ԶԿ, իգական, վերին օղակ

Նշված կարծիքից կարելի է հետևություն անել, որ իրականում կանայք թեպետև չեն բարձրաձայնում քաղաքական կառույցների ներսում գենդերային անհավասարության մասին, երբեմն ստիպված են լինում պայքարելու նաև քաղաքական կառույցում այլ կանանց կողմից դրսևորվող խտրականության դեմ: Այս հանգամանքը ևս մի խոչընդոտ է, քանի որ հայրիշխանական հասարակությունում առկա ակնհայտ և թաքնված քննադատությունն ու ընդդիմությունը կնոջ քաղաքական ակտիվության նկատմամբ այս պարագայում զուգակցվում են նաև կանանց կողմից բացահայտ քննադատությամբ:

Ընդհանրացնելով, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ քաղաքական կառույցներում սոցիալական կապերի և փոխհարաբերությունների ընդհանրական պատկերը դրական ու կառուցողական է ինչպես հորիզոնական (անդամ-անդամ), այնպես էլ ստորակարգային մակարդակներում (անդամ-դեկավար): Որոշ դեպքերում փոխհարաբերությունները սահմանափակվում են ներկուսակցական և ներնախաձեռնական գործունեության մակարդակով, այլ դեպքերում կուսակցության և նախաձեռնության ներսում ձևավորված փոխհարաբերությունները տարածվում ու ծավալվում են նաև առօրյա կյանքում:

5. 6. Քաղաքական մասնակցության և որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց հանդիպող մարտահրավերներն ու խոչընդոտները

Որոշումների կայացման գործընթացում կանանց ներգրավվածությունը նրանց քաղաքական մասնակցության կարևորագույն ցուցիչներից մեկն է: Ըստ Վ. Սափրոյի՝ կանանց ներկայությունը քաղաքական դաշտում նպաստում է իշխանության հավասար բաշխմանը, մասնակ-

ցությանն ու որոշումների կայացմանը: Կանանց ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում ոչ միայն ինքնանպատակ չէ, այլև նպաստում է իշխանության հավասարակշռմանը և հավասարապես բաշխմանը, հետևապես նաև բազմակարծության ապահովմանը:

Արդեն իսկ անդրադարձել ենք այն հիմնական գործոններին, որոնք խոչընդոտում են որոշումների կայացման գործընթացում կանանց ակտիվ ներգրավվածությանը: Դրանք հիմնականում արտաքին գործոններ են, որոնք սոցիալ-տնտեսական, մշակութային դրդապատճառներ ունեն: Այնուամենայնիվ, թեմայի շուրջ ծավալված քննարկումներն ու ուսումնասիրությունները ավելի քիչ անդրադարձ են կատարել ԶԸ/ԶԿ-ների ներկառույցային միջավայրի ազդեցությանը՝ որպես կանանց քաղաքական մասնակցությունը կանխորոշող գործոն:

Յետագոտությունը անդրադարձել է նաև քաղաքական կառույցի ներքին դինամիկային՝ բացահայտելով կանանց դերը ներկառույցային որոշումների կայացման գործընթացում:

Նշենք, որ հետագոտության մասնակիցների կողմից որոշումների կայացումը երկու մակարդակներում է դիտարկվել՝ քաղաքական կառույցի ներսում և ավելի լայն՝ երկրում:

Յետագոտության մասնակիցների մեծամասնության կողմից երկրում որոշումների կայացման գործընթացին մասնակցությունը անհասանելի է թվում՝ հաշվի առնելով, որ նրանք գործող իշխանության ներկայացուցիչներ չեն: Այս պարագայում երկրում որոշումների կայացումը, որը ընկալվում է որպես իշխանության կրողների մենաշնորհ, հնարավոր է դառնում միայն իշխանափոխության միջոցով, իսկ որոշումների կայացմանը մասնակցելու ցանկացած փորձ համահավասար է իշխանության գլուխ կանգնած կուսակցության հետ երկխոսության ծավալմանը, որը հետագոտության մասնակից ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից անհանդուրժելի է: Իշխանափոխության դիտարկումը՝ որպես գերխնդիր, քաղաքական օրակարգից դուրս է մղում «երկրորդական» համարվող այլ հարցերը, որոնց թվում են, օրինակ, գենդերային խնդիրները:

Յետագոտության շրջանակներում ուսումնասիրված քաղաքա-

կան կառույցներում որոշումների կայացման գործընթացը, ի տարբերություն երկրում որոշումների կայացման գործընթացի շուրջ ընկալումների, խմբային բնույթ է կրում՝ կաղապարված կառավարման տարբեր համակարգերի շրջանակներում: Կառավարման ցանկացած համակարգի դեպքում որոշումները ընդունվում են բազմակարծության միջավայրում մեծամասնության քվեի միջոցով: Մասնակիցները բացառում են քաղաքական կառույցում միանձնյա որոշումների կայացումը: Հետազոտության մասնակիցներից ոչ մեկը չի բարձրաձայնում որևէ անարդարության կամ անհամաձայնության մասին քաղաքական կառույցում որոշումների կայացման հարցում: Ավելին՝ որևէ մեկը չի բարձրաձայնում նաև ներկառույցային որևէ խոչընդոտի, առավել ևս՝ գենդերային հիմքով որևէ խտրականության կամ տարանջատման մասին: Հետազոտության մասնակիցները միաձայն բացառում են իրենց ԶԿ-ում կամ ԶՆ-ում գենդերային հիմքով որևէ խտրականություն՝ վկայելով կանանց և տղամարդկանց՝ որոշումների կայացմանը հավասար մասնակցության մասին: Այնուամենայնիվ, միաժամանակ նրանք ընդունում են նաև այն փաստը, որ կանայք սակավաթիվ են որոշումների կայացման բարձրագույն մարմիններում՝ խորհուրդներում կամ վարչություններում, առավել ևս՝ նախագահության շրջանակներում: Հիշեցնենք, որ ուսումնասիրված քաղաքական կառույցներից միայն մեկն է նախագահվում կնոջ կողմից:

Գրքում ավելի վաղ քննարկված «դննապահների» խոչընդոտող դերը կանանց քաղաքական մասնակցության խթանման գործում հետազոտության մասնակիցների կողմից չի հաստատվել: Ավելին՝ նրանք բացառում են քաղաքական կառույցի ղեկավարի միանձնյա որոշումների կայացման հնարավորությունները՝ վկայակոչելով մեծամասնության կողմից որոշումների կայացման մեխանիզմի արդյունավետ գործարկումը:

«...Որոշումները միանձնյա չեն կայացվում, միաշնչանակորեն եղ ասեմ, չնայած արդեն ասել եմ: Ուրեմն որոշումների կայացման մի քանի մեխանիզմ կա՝ կախված նաև հարցից

բնույթից: Քաղաքական խորհրդին ներկայացվում է տվյալ հարցը, քննարկում ենք անում, քվեարկություն և այլն: Դրանից հետո, եթե կան որոշակիորեն այլ կարծիքներ, որոշում է կայացվում առանձին քննարկումներ կազմակերպել նաև տարածքային կառույցներում»:

ԶԿ, արական, վերին օղակ

«...Գիտե՞ք՝ շատ բաց էր և շատ հստակ մշակված ժողովրդավարական սկզբունքների վրա, այսինքն՝ բոլորն ունեին հնարավորություն կարծիք արտահայտելու, և այդ առումով ինձ թվում էր՝ դա նախախորհրդարանի ամենաուժեղ կողմերից էր: Այն մարդիկ, որոնք ընդունվում էին որպես առաջնորդ, օրինակ՝ Ժիրայր Սեֆիյանը, Գարեգին Չուգասյանը չէին տարանջատում թե՛ տարիքային, թե՛ գենդերային գործոնը: Բոլորը հավասար էին, և դա շատ լավ միջավայր էր ստեղծում. ներգրավում էր և՛ կանանց, և՛ երիտասարդությանը՝ մասնակցելու»:

ԶՆ, իգական, ստորին օղակ

Որոշ մասնակիցների կողմից քաղաքական կառույցում որոշումների կայացման գործընթացում կանանց ներգրավվածությունը գնահատվում է բավարար՝ հղում կատարելով պաշտոնապես հաստատված գենդերային քվոտային՝ 20 % ներգրավվածություն, որն իրենց քաղաքական կառույցը ապահովում է:

Անգամ խնդրի գիտակցման պարագայում քաղաքական կառույցներից շատ քչերն են քայլեր ձեռնարկել իրենց կառույցում կանանց քաղաքական ներգրավվածությունը խթանելու համար: Սակայն հարկ է նաև նշել, որ քաղաքական գրեթե բոլոր կառույցներն ունեն կանանց խորհուրդներ, որոնց գոյության մասին հետազոտության մասնակիցները բարձրաձայնում են, սակայն դժվարանում են մանրամասնել նրանց գործունեության մասին: Ենթադրվում է, որ կանանց խորհուրդները ակտիվ դերակատարություն չունեն քաղաքական կառույցների շրջանակներում, քանի որ նույն քաղաքական կառույցների ներկայացուցիչների շրջանում չի տպավորվել նրանց գործունեությունը:

«...Կանանց խորհուրդ ունենք, բայց ավելին չգիտեմ, որովհետև ինձ հրավիրում են, ես այնտեղ հրավիրված անդամ եմ: Իրենք ունեն իրենց վարչությունը, իրենց խորհուրդը, ես զբաղված եմ իմ աշխատանքներով»:

ԶԿ, իգական, վերին օղակ

Կանանց քաղաքական ներգրավվածությունը խթանող ներկուսակցական քաղաքականության ձևավորմանն ուղղված սակավաթիվ միջոցառումները երկու հիմնական ուղղությամբ են զարգանում:

- **Կանանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն.** Խնդրի կարևորության գիտակցմանն ու լուծմանն ուղղված ուղիների ձևավորման գործընթացում քաղաքական կառույցին աջակցություն է տրամադրվել ՀԿ-ների կողմից խորհրդատվություն ձևով՝ այդպես նպաստելով կանանց ներգրավվածությունը խթանող քաղաքականության մշակման գործին: Գնահատելի է նաև եվրոպական կազմակերպությունների նմանօրինակ աջակցությունը՝ ուղղված գիտելիքի ձևավորմանն ու կուսակցական կանանց ներուժի զարգացմանը: Այնուամենայնիվ, քաղաքական որևէ կառույցի կողմից կանանց՝ քաղաքական կառույցներ ներգրավմանն ուղղված որևէ նպատակադրված միջոցառում չի ձեռնարկվել:

- **Կին առաջնորդի դերը.** կանանց ներկուսակցական քաղաքական մասնակցության խթանման հստակ ծրագիրը ներկայացվել է այն ԶԿ-ում, որի առաջնորդը կին է, որը, կարևորելով կին քաղաքական գործիչների դերը, նպաստում է երիտասարդ կադրերի ներուժի զարգացմանը տեղական ու արտասահմանյան ուսուսման և փոխանակման ծրագրերի մասնակցության քաջալերմամբ և կուսակցության ներսում նմանատիպ հնարավորությունների ստեղծմամբ:

- **«Հաջողակ կանայք»՝ որպես նախատիպեր**

Գենդերային տարբեր հետազոտություններ բազմիցս բարձրաձայնել են քաղաքական դաշտում պայքարող կանանց մասին հանրային ընկալումների կարծրատիպացված լինելը: Քաղաքականության մեջ հիմնականում բացասական կարծրատիպերի վրա կառուցված

կնոջ կերպարը կարող է խոչընդոտ հանդիսանալ քաղաքականության ձգտող կանանց առաջխաղացման համար, հետևաբար նաև պատճառ դառնալ կանանց քաղաքական սակավաթիվ ներգրավվածության համար:

Ի տարբերություն հասարակական ընկալումների՝ ներքաղաքական կյանքում կին քաղաքական գործիչների կերպարը նախատիպային է ԶԿ-ի կամ ԶԿ-ի անդամ այլ կանանց և աղջիկների համար, մասնավորապես այն պարագայում, երբ նրանք այդ դաշտում սկսնակ են: Գենդերային զգայունության բացակայության պայմաններում հաջողակ կանանց ներգրավվածությունը դրական տեղաշարժ է կանխորոշում քաղաքական կառույցներում կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու համար՝ որոշակիորեն լրացնելով այն բացը, որը ստեղծվում է գենդերային զգայունության բացակայության արդյունքում:

«Հաջողակ» կին գործընկերները համարվում են քաղաքական առաջնորդ կանանց նախատիպեր, որոնց կարելի է նմանվել՝ ձգտելով նման կերպարի հետ նույնացմանը: Հաջողակ կին քաղաքական գործիչների խոսույթը արդիական է քաղաքական այն կառույցներում, որոնց աստիճանակարգային վերին մակարդակներում կանայք հաջողությամբ են հանդես գալիս, նաև հասել են քաղաքական ինչ-որ դիրքի, օրինակ՝ պատգամավորական մանդատ են ձեռք բերել: Այս կանայք ներկուսակցական քաղաքական կյանքում ծավալած գործունեության արդյունքում վարքային կարևոր նախատիպեր են ներկայացնում:

Քաղաքական սուբյեկտների գենդերային զգայունության հիմնախնդիրը

Քաղաքական կառույցների և անձամբ կանանց գենդերային զգայունությունը նրանց քաղաքական ներգրավվածության կարևորագույն երաշխավոր է: Այն, թե որքանով է քաղաքական կառույցը կամ անհատը գիտակցում և կարևորում գենդերային հարցերը, պայմանավորում է քաղաքական կյանքում ու որոշումների կայացման մակարդակում

կանանց ներգրավվածությունը: Չնայած այն հանգամանքին, որ որևէ քաղաքական կառույցի ներկայացուցիչ գենդերային անհավասարության չի առնչվել ներքաղաքական կյանքում, այնուամենայնիվ ակնհայտ է, որ քաղաքական կառույցներում գենդերային հավասարակշռության խնդիր կա: Եթե նույնիսկ քաղաքական կառույցում կանանց թիվը ընդհանուր առմամբ փոքր չէ, ապա աստիճանակարգի բարձր մակարդակներում նրանց թիվը գնալով նվազում է՝ հասնելով անգամ զրոյի: Այդ մասին է վկայում նաև մեր հետազոտության թիրախ քաղաքական կառույցների ղեկավարների տղամարդ լինելը՝ բացառությամբ մեկ կուսակցության: Այս պարագայում հնարավոր է՝ խնդիրը գենդերային զգայունության բացակայության մեջ է, օրինակ՝ քաղաքական սուբյեկտների կողմից խնդրի գենդերային նախահիմքը չգիտակցելը կամ ժխտելը:

Յետազոտության մասնակիցները քաղաքական կառույցում գենդերային հիմնախնդիրների առկայության բացառումը հիմնավորվում են մի շարք պնդումներով:

Գենդերային հիմնահարցերը՝ որպես մտացածին խնդիրներ

Յետազոտության մասնակիցների շրջանում գերակշռում է գենդերային անհավասարության՝ որպես հիմնախնդիր չգիտարկելու միտումը: Այն արտահայտվում է 1) խնդրի մերժման միջոցով. «նման խնդիր գոյություն չունի», և 2) «արհեստականորեն» իրավիճակը խնդիր դարձնելու համոզմունքի առկայությամբ:

Քաղաքական կառույցներում գենդերային խնդիրների բացառումը ինքնին խնդրային է՝ հաշվի առնելով կանանց՝ վերին օղակներում ներգրավվածության սակավաթիվությունը: Գենդերային խնդիրների մասին չբարձրաձայնելու պատճառ կարող է դառնալ դրանց համատեքստի ոչ ամբողջական ընկալումը: Մասնավորապես հարցազրույցների ժամանակ հաճախ գենդերային հավասարությունը դիտարկվում է կանանց՝ քաղաքական կառույցում որոշակի ներկայացվածության

և խոչընդոտների բացառման շրջանակներում: Գենդերային հավասարության նման սահմանափակումը կաղապարում է խնդրի ամբողջական ընկալումը, հետևաբար նաև խոչընդոտում է դրա լուծմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:

«...Կներե՞ք, բայց ոչ մի ձևով չեմ կարող Ձեր հարցին պատասխանել, որովհետև չեմ տեսել էդ խնդիրը: Միգուցե կփորձեմ խորացնել էն քաղաքականությունը, որը տարվում է, այսինքն՝ երբեք չեշտել կանանց մասին, որովհետև երբ դու շեշտում ես, նշանակում է՝ ինչ-որ բան էն չի, որ դու շեշտում ես»:

ԸԿ, իգական, միջին օղակ

Մյուս կողմից, **գենդերային անհավասարության բացառումը դիտարկվում է մարդու իրավունքների համատեքստում**՝ ի սկզբանե կնոջն ու տղամարդուն ընդունելով որպես մարդ՝ անտեսելով նրանց գենդերային տարբերությունները, հետևաբար նաև բացառելով որևէ սեռի ներկայացուցչի նկատմամբ առանձնահատուկ դիրքորոշումը:

«...Մեզ մոտ յուրաքանչյուր հարցում «մարդ» գործոնն է առկա: Մարդու իրավունքների պաշտպանության արդյունքում ստացվում է, որ բոլոր սեռերի իրավունքները պաշտպանված են: Հատուկ ուշադրություն կանանց վրա ինչպես տղամարդկանց, չի դրվել»:

ԸՆ, իգական, վերին օղակ

Ավելին՝ փորձ է արվում գենդերային անհավասարությունը չեզոքացնել դրական խտրականության երևույթը անհավասարության դրսևորում դիտարկելու միջոցով.

«...Նայե՞ք, գենդերային անհավասարությունը ինքը... (հիմա ուղղակի շեղվում ենք թեմայից), եթե դու ասում ես՝ էսքան աղջիկ պիտի լինի գոնե վարչության մեջ, կամ կանանց համար

սա, էտ էլ ա անհավասարություն: Էտ էլ ա անհավասարություն: Ով ա ստում, որ անհավասարությունը էն ա, որ իրանց մասին չի խոսվում, կամ արտոնություն...: Եթե դու կանանց արտոնություն ես տալիս, դա վիրավորական ա: Ինչի՞ պիտի տենց չլիներ որ: Եթե դու հատուկ շեշտում ես կնոջ առավելությունը ինչ-որ բանի մեջ, կամ պիտի իրանց համար սենց լինի, էտ էլ ա գենդերային անհավասարություն: Ո՞վ ասաց, որ պետք ա ոտնահարվի իրանց իրավունքը, նոր համարվի գենդերային անհավասարություն»:

ԶԼ, արական, ստորին օղակ

Եթե գենդերային հավասարության հիմնախնդիրը նույնիսկ բարձրաձայնվում է, ապա այն վերացարկվում է ամբողջ հասարակության վրա՝ բացառելով սեփական ԶԼ-ում կամ ԶԿ-ում նման խնդրի առկայությունը: Հաճախ գենդերային անհավասարությունը դիտարկվում է խնդիրների ընդհանուր համատեքստում՝ առանց կարևորելու կանանց հիմնախնդիրների առանձնացումը՝ որպես խնդիրների առանձին խումբ: Մյուս կողմից, գենդերային անհավասարությունը բնական երեվույթ է դիտարկվում, և ընդգծվում են դրա թուլատրության սահմանները.

«...Նախ կանանց սոցիալական դերը. այդպես մարդկությունն է հենց կառուցված: Կինը շատ ավելի մեծ դերակատարում ունի ընտանիքում, քան տղամարդը, ուղղակի մարդկության պատմությունն է: Կնոջն են տալիս արձակուրդ երեխա ունենալու ժամանակ, տղամարդկանց չեն տալիս...: Ինքը բնությունն է նրան այդպես ստեղծել: Ընտանեկան հոգսերով ծանրաբեռնվածությունը, բնականաբար, նշանակություն ունի այն հարցում, որ կինը ավելի քիչ ներգրավվածություն ունի մնացած հասարակական աշխատանքներում: Բայց մնացած հարցերում շատ հանգիստ ներգրավվում է: Տղամարդը համարվում է ավելի կոշտ աշխատանքների համար ստեղծված էակ, իսկ կինը՝ ավելի նուրբ

էակ, դրանով է դա բացատրվում»:

ԶԿ, արական, վերին օղակ

Հարցվածներից մի քանիսն են միայն կարևորում գենդերային խնդիրների ոչ միայն բարձրաձայնման փաստը, այլև քաղաքական օրակարգի, ինչպես նաև հանրային քաղաքականության համատեքստում դրանց քննարկման անհրաժեշտությունը:

Որոշումների կայացման համատեքստում գենդերային առանձնահատկություններն ի հայտ են գալիս նաև այն պարագայում, երբ հարցվողը գենդերային խնդիրներին ավելի խորությամբ է անդրադարձել իր աշխատանքի շրջանակներում, հետևաբար ավելի զգայուն է գենդերային հիմքով անհավասարության ընկալման և արձանագրման գործում: Մասնավորապես քաղաքական կառույցի կից կանանց խորհրդի ներկայացուցիչը, որն անմիջականորեն աշխատում է կանանց հիմնախնդիրները կառույցի քաղաքականության համատեքստում դիտարկելու և քաղաքական օրակարգի մեջ ներդրելու ուղղությամբ, արձանագրում է.

«...Դա նաև տոկոսային հարաբերությունն էր, ասենք՝ պատվիրակների: Օրինակ՝ մենք մտածեցինք, որ սա մի կարելիոր բան է, բայց երբ որ նայում ես, մեր կուսակցության մեջ շատ մեծ տոկոս կազմում են կանայք: Բայց համագումարի ժամանակ պատվիրակները այդքան շատ կին չեն լինում, մեծ մասը լինում է տղամարդ: Դրա վրա ոչ մեկը ուշադրություն չի դարձրել, բայց փաստը մտում էր փաստ: Մենք դրա վրա ուշադրություն դարձրինք, որ պատվիրակները գոնե հավասար լինեն: Հետո մենք որոշեցինք ստեղծել աջակցող խմբեր կանանցից, որոնք շրջաններում, մարզերում ՏԻՄ ընտրությունների համար կանանց նախապատրաստեն»:

ԶԿ, իգական, վերին օղակ

Չնայած խորին հարցազրույցների արդյունքում մասնակիցների կողմից ամբողջովին ժխտվում է իրենց քաղաքական կառույցներում

գենդերային անհավասարության առկայությունը, ավելին՝ գենդերային անհավասարությունը չի դիտարկվում հայաստանյան հասարակության մեջ առկա հիմնախնդիր, այնուամենայնիվ մանրամասն վերլուծելու դեպքում մասնակիցների խոսքի համատեքստում գենդերային խնդիրներ են ի հայտ գալիս: Ամփոփական պատասխանների և լեզվական խոսույթի նման հակասությունը կարող է մի շարք բացատրություններ ունենալ:

1) Ինչպես ավելի վաղ քննարկվեց, հնարավոր է, որ գենդերային զգայունությունը թույլ է, և խնդիրը չի ընկալվում որպես այդպիսին, հետևաբար նաև գենդերային խտրականությունը չի ընկալվում:

2) Քաղաքական կառույցի ներքին համերաշխությունը (սոլիդարությունը) թույլ չի տալիս նրա ներկայացուցիչներին բարձրաձայնել հնարավոր խնդիրների մասին:

Խոսքի համատեքստի վերլուծության արդյունքում ի հայտ եկած գենդերային խնդիրների մասին ավելի առարկայական պատկերացում կազմելու համար քննարկենք դրանք՝ կոնկրետ երևույթը նկատի ունենալով:

Տղամարդ առաջնորդի ազդեցիկ խոսքը

Մասնակիցները հարցազրույցների ժամանակ բազմիցս բարձրաձայնել են այն մասին, որ քաղաքական կառույցներում որոշումների կայացումը իրականացվում է խմբային քննարկումների և քվեարկության միջոցով՝ տալով կառույցի յուրաքանչյուր անդամի հնարավորություն՝ բարձրաձայնելու հուզող հարցերն ու քննարկման դնելու սեփական առաջարկները: Մասնակիցներից որևէ մեկը խոչընդոտների չի հանդիպել իր ԶԿ-ում կամ ԶՆ-ում անտեսված լինելու կամ սեփական կարծիքը արտահայտելու պարագայում: Չնայած համատեղ որոշումների կայացմանը՝ հարցվողների կողմից հաճախ էր շեշտադրվում տղամարդ առաջնորդների «վերջին» խոսքի կարևորությունը:

«...Դե նիստը վարում էր մեր սիրելի պրն. Նախագահը, հետո մեկ էլ ասում է. «[հարցազրույցի մասնակցի անունը],

շարունակությունը դու ես վարելու, վեր կաց արի», ես էլ դահլիճում նստած եմ, ասում եմ. «Լավ էլի պարոն Նախագահ...»: Ինքը եկավ դահլիճում նստեց, ես վարեցի: Այսինքն՝ այստեղ կին-տղամարդ խնդիր չկա. մեզ մոտ այդ խնդիրները լուծված են»:

ԶԿ, իգական, վերին օղակ

Մեկ այլ օրինակում տղամարդ մասնակիցը, ջանալով շեշտել իրենց քաղաքական կառույցում գենդերային անհավասարության անհնարինությունը, վերարտադրում է լայնորեն տարածված գենդերային կարծրատիպ.

«...Ես իմ քարտուղարի պաշտոնում աղջիկ եմ նշանակելու, որ էլ ես հարցը չտաք: Ընդհանրապես կապ չունի կին, տղամարդ, երեխա, հաշմանդամ, ծեր: Կապ չունի»:

ԶԿ, արական, միջին օղակ

Խոսքում նման դրսևորումները ընդգծում են գենդերային խնդիրների առկայությունը՝ հիմնավորելով այն ելքադրությունը, որ գենդերային զգայունության բացակայությունը սահմանափակում է առկա խնդիրների մասին բարձրաձայնումը և խոչընդոտում համապատասխանաբար միջոցառումների ստանձնումը՝ կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու համար:

Շարունակելով քաղաքական համատեքստում կանանց ներգրավվածության շուրջ հետազոտության մասնակիցների ընկալումների ներկայացումը՝ հարկ ենք համարում կանանց՝ որպես քաղաքականության գործող սուբյեկտի և օբյեկտի դիտարկման տեսանկյունից առանձնացնել քաղաքականության համատեքստում կանանց հիմնախնդիրների քննարկման նշված երկու կողմերը:

Գիտակցելով կանանց քաղաքական մասնակցության կարևորությունը, սակայն նվազ ներգրավվածությունը՝ մասնակիցները նշում են, որ ԶԿ/ԶՆ-ի քաղաքական օրակարգում կանանց քաղաքական ներգրավվածության խթանման հարցը անհրաժեշտ է քննարկել: Չարցվողներից մեկը առանձնակի կարևորություն է տալիս կանանց ակտի-

վության խթանման ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը՝ ի հակադրություն ընտրությունների նախաշեմին հապճեպ գործողությունների իրագործմանը, որոնք արդյունավետ չեն: Գիտակցելով ինդրի արդիականությունը՝ բարձրաձայնողը դեռևս քայլեր չի ձեռնարկել իր գաղափարը իրականություն դարձնելու համար:

Մյուս կողմից, կինը դիտարկվում է որպես քաղաքականության օբյեկտ: Այս պարագայում նա ընկալվում է որպես որոշակի հիմնահարցի կրող: Մասնավորապես հետազոտության մասնակիցները առանձնակի շեշտել են կանանց մայրության դերը և պաշտպանության անհրաժեշտությունը՝ որպես քաղաքական ուշադրության արժանի հիմնախնդիր: Կանանց քաղաքական մասնակցության խթանումը առանձնացված հիմնախնդիրների շարքում է:

Ամփոփելով որոշումների կայացման գործընթացում կանանց ներգրավվածության մասին հետազոտության մասնակիցների ընկալումների և դիրքորոշումների շուրջ քննարկումը՝ ևս մեկ անգամ հարկ ենք համարում բարձրաձայնել այն հիմնախնդիրը, որը հիմք է հանդիսացել այս հետազոտության ծավալման համար: Ինչհետև կանայք սակավաթիվ են ներկայացված ներկառույցային որոշումների կայացման փուլում, ինչպես նաև կուսակցության վերնախավում և ներկայացուցչական ցուցակներում, եթե ընդհանուր առմամբ քաղաքական կառույցի անդամների շրջանում նրանց թիվը չի զիջում տղամարդկանց թվին, իսկ հետազոտության մասնակիցները ժխտում են իրենց քաղաքական կառույցում որևէ տեսակի խտրականություն: Ենթադրում ենք, որ կամ գենդերային զգայունության բացակայությունն է խոչընդոտում քաղաքական դերակատարներին շոշափելու ներկառույցային գենդերային անհավասարությունը, կամ ներքին համերաշխությունից դրդված՝ հետազոտության մասնակիցները իրենց պատասխաններում լիարժեք անկեղծ չեն գտնվել՝ խուսափելով բարձրաձայնել այն իրական պատճառները, որոնք սահմանափակում են կանանց ակտիվ ներգրավվածությունը քաղաքական վերնախավում և որոշումների կայացման գործընթացում:

5.7. Քաղաքական նպատակների գենդերային առանձնահատկությունները

Քաղաքական մասնակցության զարգացման քննարկման ամբողջականության մեջ կարևոր է անդրադառնալ քաղաքական կուսակցությունների և նախաձեռնությունների ներկայացուցիչների քաղաքական ապագայի մասին պատկերացումներին:

Հետազոտությունը անդրադարձել է ԶԼ-ների և ԶԿ-ների ներկայացուցիչների նպատակներին, առանձնացրել քաղաքական նպատակները՝ մանրամասնելով դրանց իրագործման խոչընդոտները և ԶԼ-ի կամ ԶԿ-ի դերը նպատակների իրագործման մեջ՝ այդպես նպատակ ունենալով բացահայտել քաղաքական նպատակների ձևավորման ու իրագործման հնարավորությունների գենդերային առանձնահատկությունները:

Հետազոտության մասնակիցների նպատակները ոչ միշտ են քաղաքական բնույթ կրում, ավելին՝ որոշ մասնակիցներ բացառում են ապագայում քաղաքականության մաս կազմելը՝ կարևորելով այլ ոլորտներում անձնային աճը և ներուժի ներդրման անհրաժեշտությունը:

Մասնակիցների քաղաքական նպատակների մասին ընկալումները միանշանակ չեն և հաճախ կրում են անդամակցած քաղաքական կառույցի գաղափարախոսական ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ հարցազրույցների մասնակիցների քաղաքական նպատակները վերացարկված են. նկատվում է որոշակիության և հստակության պակաս: Մասնակիցները սեփական նպատակները հիմնականում համընկնում են անդամակցած կառույցի նպատակներին: Այս դեպքում ևս որոշակի չեն այդ նպատակները: Հիմնականում նշվում են «Ինչ-որ բան փոխել դեպի լավը», «Փոփոխություն բերել Հայաստանում» և նմանատիպ այլ պատասխաններ, ինչպես նաև՝ կաշառակերության վերացում, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում և վերացարկված այլ նպատակներ, որոնց սահմանները շոշափելի չեն:

Հարկ է նշել, որ ներկառույցային խոսույթը նույնատիպ է. քաղա-

բական կառույց ներկայացնող բոլոր մասնակիցներն արտահայտել են նմանատիպ մտքեր. բոլոր դեպքերում կուսակցական նպատակներից և քաղաքականությանից բխող պատասխաններ են հնչել:

Քաղաքական նպատակներում որոշակի հստակությունն նկատվում է հիմնականում վերին և երբեմն նաև միջին օղակի ներկայացուցիչների մոտ: Մասնավորապես 2017 թվականի խորհրդարանական ընտրություններում հանդես գալն ու հաղթելը հիմնական նպատակներից են:

«... Ցանկացած կուսակցության լիդերի նպատակը առաջիկա ընտրություններում (իսկ առաջիկա մեր թիվ մեկ ընտրությունը խորհրդարանական ընտրությունն է) այն է, որ [կուսակցության անունը] կազմի մեծամասնություն»:

ՔԿ, վերին օղակ, իզական

Ոչ իշխանական քաղաքական կառույցների ներկայացուցիչները քաղաքական նպատակադրումը պայմանավորում են իշխանափոխությամբ: Հաճախ իշխանափոխությունը մասնակիցների կողմից դիտարկվում է որպես գերխնդիր սեփական անձի, քաղաքական կառույցի և երկրի համար: Ոչ իշխանական թեև ներկայացնող մասնակիցները մերժում են քաղաքական այլ նպատակների ծավալումը նման հրատապ խնդիրը չլուծված տեսելու պարագայում:

Նկատենք, որ քաղաքական նպատակների հարցում հետագոտության մասնակիցների պատասխանները տարբերակվում էին հիմնականում քաղաքական գաղափարախոսության հիման վրա, իսկ քաղաքական կառույցի բնույթը կամ գենդերային պատկանելիությունը որևէ կերպ որպես տարբերակիչ հատկանիշ հանդես չի գալիս:

Երկրում փոփոխությունների հասնելը որպես քաղաքական նպատակ դիտարկելու պարագայում քաղաքական կառույցը ընկալվում է որպես գործիք, որը ընդլայնում է անձի հնարավորությունները մեծամասշտաբ փոփոխությունների իրագործման ճանապարհին:

Քաղաքական նպատակների ու պլանավորման հարցում մեծա-

պես կարևորվում է արտաքին ներգործությամբ նպատակների իրագործումը: Մասնավորապես իրենց խոսքում մասնակիցները հաճախ անդրադառնում են սեփական նպատակների իրագործման հնարավորություններին այլ անձանց կամ կառույցների ներգործության շնորհիվ: Քաղաքական դաշտում միայն սեփական ջանքերով առաջխաղացումը ոչ իրատեսական է դիտարկվում: Ներկուսակցական կյանքում ներքին ուժերի, իսկ ընդհանուր քաղաքականության մեջ քաղաքական կառույցի կամ հզոր անձի «թիկունքը» կարևոր նախապայման է քաղաքական աստիճանով վեր մագլցելու համար:

«...Ընդհանրապես մեր կուսակցությունում կա քաղաքականություն, կա եղպիսի ներքին համոզմունք, որ երիտասարդներին պետք ա հնարավորինս ընդգրկել վարչության կազմի մեջ, և վերջին վարչության կազմի մեջ երիտասարդները շատ մեծ տոկոս են կազմել: Երևի մոտ կեսը երիտասարդ է եղել՝ մոտ 30 անց տարիքի և իմ տարիքի: Այսինքն՝ եր համոզմունքը կա, որ շատ հնարավոր ա, որ ես էլ գնամ, առաջադրվեմ վարչության անդամի թեկնածու, որովհետև ճիշտ ա՝ դա շատ բան չի փոխում, բայց ամեն դեպքում ինչ-որ ստատուս ա կամ, չգիտեմ, ինչ-որ դիրք է»:

ՔԿ, արական, միջին օղակ

Կուսակցության դերը և նպատակները կարևորվում են, անձնականացվում, արդյունքում կուսակցության և նրա ներկայացուցչի նպատակների նույնականացում է նկատվում: «Ինչ քաղաքական նպատակներ ունեք» հարցին հարցազրույցի մասնակիցները պատասխանում են՝ վերացարկվելով սեփական նպատակներից և կուսակցության նպատակները ներկայացնելով որպես իրենց սեփական քաղաքական նպատակներ: Սա մի կողմից խոսում է կուսակցության հետ սերտ կապերի և նույնականացման, մյուս կողմից՝ մասնակիցների՝ անդամակցած քաղաքական կառույցից դուրս քաղաքական նպատակներ չտեսնելու մասին:

Կուսակցության և անձի քաղաքական նպատակների նույնացման պարագայում պատահական չէ, որ քաղաքական կառույցի գաղափարախոսական նրբերանգներն արտահայտվում են ներկայացուցչի քաղաքական նպատակների ձևակերպումներում: Քաղաքական ընդդիմության ներկայացուցիչների խոսքում գերիշխում են իշխանափոխության և հեղափոխության մասին մտքերը, մինչդեռ ազգային գաղափարախոսությամբ առաջնորդվող կառույցի ներկայացուցիչները իրենց նպատակների ձևակերպումներում ազգային խնդիրներին են անդրադառնում: Օրինակ՝ ազգային գաղափարախոսությամբ առաջնորդվող ԸԿ-ի ներկայացուցիչը նման նպատակ ունի:

«...Մի քանի տարուց ինձ ուսման մեջ եմ պատկերացնում արտասահմանում: Արդեն նախընտրած ուղղություն էլ ունեմ, որը ոչ միայն իմ անձի համար է, այլև հայրենիքին է օգտակար լինելու: Մտածել եմ ցեղասպանագիտության մասին»:

ԸԿ, իգական, ստորին օղակ

Յետաքրքրական է, որ վերին օղակը ներկայացնող կին մասնակիցներից մի քանիսը որպես քաղաքական նպատակ տեսնում են պատգամավորական մանդատի պահպանումը կամ ստացումը՝ դիտարկելով դա որպես քաղաքական կարիերայի գազաթնակետ: Նման նպատակի մասին հայտնել են քաղաքական կուսակցություն ներկայացնող կանայք: Կանանցից մեկը նշում է.

«...Դե, օրինակ, եթե երկրի նախագահ դառնամ, վատ չի լինի: Եղ կատակ եմ անում, իհարկե: Չեմ ձգտում որևէ տեղ, անկեղծ ասած, ինձ պատգամավորի գործն էլ շատ դուր է գալիս»:

ԸԿ, վերին օղակ, իգական

Միաժամանակ երկրի ղեկավարի պաշտոնում սեփական անձի կամ այլ կնոջ ներգրավվածությունը չի քննարկվում: Ավելին՝ տղամարդ

առաջնորդի կերպարով ղեկավարի պատկերում առկա է, և բազմիցս անդրադարձ է կատարվում նրան:

Պատգամավորի պաշտոնի ստանձնումը քաղաքական դաշտում գտնվող կանանց դեպքում կարևորագույն նպատակ է, որն ունի նախատիպային գործող մոդել՝ սեփական անձի կամ քաղաքական կառույցի այլ կին անդամի տեսքով: Վերջինիս կանայք բազմիցս անդրադառնում են սեփական նպատակները բարձրաձայնելիս:

Յետագոտության որոշ մասնակիցներից ոմանք դժվարանում են սեփական քաղաքական նպատակների մասին բարձրաձայնել, քանի որ իրենց քաղաքական ներգրավվածությունը դիտարկում են որպես ավելի շուտ պարտադրված քայլ, քան ցանկություն:

Մասնավորապես մասնակիցների կողմից նշվել է քաղաքականության մեջ «պարտադրված» ներգրավվածությունը՝ որպես այլընտրանքի բացակայություն: Սա բացատրվում է երկրի օրհասական վիճակով, որը մարդկանց դրդում է մասնակցել քաղաքականությանը՝ սեփական ապագան երկրում կերտելու համար: Չնայած նման վարքագիծը ընկալվում է որպես հարկադրված քաղաքական ներգրավվածություն, այնուամենայնիվ այն դասական իմաստով մասնակցային կառավարման մի ձև է, երբ քաղաքացին, անտարբեր չլինելով սեփական երկրի ապագայի համար, ակտիվորեն մասնակցում է որոշումների կայացման գործընթացին:

Քաղաքական նպատակը քաղաքական կարիերա ստեղծելն է, թե՛ երկրում բարեփոխումներ իրականացնելը

Ըստ հետազոտության որոշ մասնակիցների՝ քաղաքական նպատակը քաղաքական դաշտում պաշտոնական առաջնադասում է, որը հնարավոր է միմիայն իշխանություն վայելող կուսակցությանը անդամագրվելու միջոցով: Այս պարագայում ներկայիս իշխող կուսակցության՝ ՀՀԿ-ի կուսակցության շարքերը անցնելը «անցաթուղթ» է

դիտարկվում: Միաժամանակ նմանատիպ նպատակադրումը հակադարձվում է հայրենիքին իրապես ծառայելու նպատակին, քանի որ հայրենիքին ծառայելը դիտարկվում է՝ «հակապետական մարմինների», այն է՝ այժմյան իշխանությունների տապալման համատեքստում: Նման դիրքորոշում հայտնել են ընդդիմադիր կուսակցության բազմաթիվ ներկայացուցիչներ:

«...Անկեղծ ասած, եթե ես քաղաքական նպատակներ ունենայի, ես այսօր կլինեի «Հանրապետական կուսակցության» անդամ, և շատ հնարավոր է, որ լինեի նաև Ազգային ժողովում»:

ՔԿ, արական, ստորին օղակ

Մի այլ դիրքորոշման համաձայն՝ քաղաքական նպատակների դիտարկումը գործունեության համատեքստում դիտարկվում է սովետական ժառանգություն՝ կրկին հակադարձելով երկրին ծառայելու գաղափարին՝ որպես քաղաքական կառույցի գործառույթ և նպատակ: Նման մոտեցումը ընդդիմադիր նրբերանգ ունի՝ քաղաքական նպատակները դիտարկելով իշխանափոխության համատեքստում: Եվ այս պարագայում ևս կուսակցական նպատակները դառնում են առանձին անդամների քաղաքական նպատակներ:

Ամփոփելով՝ նշենք, որ հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել մասնակիցների քաղաքական նպատակների վերացարկված և անդեմ բնույթին: Նպատակներում որոշակիության բացակայությունը կանխատեսում է նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների և մարտավարությունների ձևակերպման խրթնություն, հետևաբար նաև իրագործելիության հնարավորության սահմանափակում: Այս պարագայում մասնակիցների քաղաքական ապագան մշուշի մեջ է:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ. «ՇԱՄԻՐԱՄ» ԿԱՆԱՆՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(դեպքի ուսումնասիրություն)

*«1995 թվականի Ազգային ժողովի ընտրություններում,
«Շամիրամ» կուսակցությունից բացի, որևէ արտառոց սյուրպրիզի
չի եղել մեր հանրապետությունում. խոսքը գնում է Ազգային ժո-
ղովի ընտրությունների մասին»:*

Միքայել Մելքումյան, ԲՀԿ, 2016

Չեփոքի հրապարակումը նոր մարտահրավերների հորձա-
նուտում և լայն հնարավորությունների ասպարեզում ավելի մեծ տեղ
եր հատկացնում գենդերային հարցերի քննարկմանը կանանց շարժման
ձևավորման և քաղաքական մասնակցության ընդլայնման համար: Նոր
իրավիճակը թելադրում էր նաև կանանց՝ որպես հիմնական դերա-
կատարի և քաղաքական սուբյեկտի քաղաքացիական ակտիվության
կարևորությունը: Այնուամենայնիվ, որքանով էր գիտակցված կանանց
կուսակցության ստեղծման կարևորությունը, որքանով էր հասարա-
կությունը պատրաստ քաղաքական դաշտում ընդունել կանանց հավա-
քական կերպար՝ ի դեմս կուսակցության՝ հաշվի առնելով հասարակա-
կան ընկալումների կարծրատիպացված լինելը և կնոջ դերի գերկարե-
վորումը ընտանիքում ու տնային տնտեսության ներսում: Որքանով էր
այն «նուրբ էակը», որը պատրաստ էր «գայլերի ոհմակում» հայտնվել,
ավելին՝ գործունեություն ծավալել: Նշված հարցերին պատասխանելու
նպատակով գրքի այս հատվածը գենդերային պրիզմայի միջով դիտար-
կում է «Շամիրամ» կանանց քաղաքական կուսակցությունը՝ որպես ան-
կախ Հայաստանի պատմության մեջ գործած, կանանց կողմից ստեղծ-
ված և մեծապես կանանց հարցերին անդրադարձած կուսակցություն:
Վերջինս թեև կարճ կյանք է ունեցել, հասցրել է իր հետքը թողնել նո-
րանկախ Հայաստանի քաղաքական կյանքում:

«Շամիրամ» քաղաքական կուսակցությունը իսկապես անա-
կընկալ էր և՛ իր բնույթով (որպես կանանց կուսակցություն), և՛ ձևավոր-
վելու արագությամբ, և՛ ընտրություններում առավելագույն ձայներով
երկրորդ տեղը զբաղեցնելու առումով: Սակայն ինչքանով էր կանանց
կուսակցությունը կնակետորոն, գենդերայնորեն զգայուն և, ի վերջո,

արդյոք ֆեմինիստական օրակարգ ձևավորելու հիմնահարց էր դրել իր առջև:

Լշված հետազոտության շրջանակներում «Շամիրամ» քաղաքական կուսակցությունը դիտարկվել է որպես Հայաստանում գործունեություն ծավալած կանանց միակ կուսակցությունը, որն իր հետքն է թողել և՛ քաղաքական կյանքում, և՛ կանանց քաղաքական մասնակցության գործում: Չնայած կարճատև կյանքին՝ «Շամիրամը» կանանց քաղաքական ակտիվության հետաքրքիր նախադեպ է, որն արտացոլում է և՛ հասարակական ընկալումները, և՛ քաղաքական կյանքի գեներացիային հավասարությանը անպատրաստ լինելը, և՛ կարևոր նախադեպ է հետագայում նմանատիպ նախաձեռնությունների համար:

«Շամիրամ» կուսակցության վերաբերյալ դեպքի ուսումնասիրությունն է իրականացվել՝ հիմնվելով օնլայն լրատվամիջոցներում նրա մասին հրապարակումների վերլուծության և կուսակցության վերնախավի հետ հարցազրույցների հիման վրա:

Ուսումնասիրության բարդությունը պայմանավորված է նրանով, որ կուսակցության մասին հիշատակումներ հազվադեպ են հանդիպում գիտական գրականության մեջ և լրատվամիջոցների հրապարակումներում: Հաճախ առկա հրապարակումները մի տողով ուղղակի հիշատակում են կուսակցությունը՝ որպես այդ շրջանում գոյություն ունեցած կուսակցություն, որը Ազգային ժողովի ընտրություններում կարողացել է հաղթական շեմ անցնել՝ հայտնվելով խորհրդարանում:

«Շամիրամ» կուսակցությունը գրանցվել է 1995 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին՝ իր շուրջ հավաքելով տարբեր ոլորտներում ներգրավված կանանց: Կուսակցությունը հաջողությամբ մասնակցել է 1995 թվականի խորհրդարանական ընտրություններին և 20 % ձայների շնորհիվ 8 պատգամավորից բաղկացած խմբակցություն կազմել խորհրդարանում: Ներկայումս կուսակցությունը դադարեցրել է գործունեությունը:

«Շամիրամ» կուսակցության հապճեպ ստեղծումը անակնկալ էր քաղաքական դաշտում և ուղեկցվել է մի շարք առասպելների շրջանառմամբ: Մամուլում հաճախ է շրջանառվել այն միտքը, որ այն ստեղծվել է

Վանո Սիրադեղյանի կողմից «Հանրապետություն» միավորմանը («Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ) կուսակցության գլխավորությամբ) սատարելու և Ազգային ժողովում պատգամավորական մանդատների բացարձակ մեծամասնություն ունենալու նպատակով:

«Հայաստանի քաղաքական շրջանակներում ընդունված է ասել, որ այդ ընտրությունները կեղծվել են: ԵԱԿԿ դիտորդներն այդ ընտրությունները որակել են ազատ, բայց ոչ արդար: Այդ ընտրությունների հիմնական դերակատարներից էր ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը, որի ստեղծած «Շամիրամ» կանանց միություն-կուսակցությունը համամասնական ընտրակարգով երկրորդ տեղը զբաղեցրեց իշխանական «Հանրապետություն» միավորումից հետո»: Կուսակցության ներկայացուցիչները համաձայն չեն այս մտքին: Նրանք ընդունում են Վանո Սիրադեղյանի անմիջական մասնակցությունը կուսակցության ստեղծման, այնուհետև գործունեության արդյունավետ ծավալման գործում, սակայն ընդդիմանում են այն մտքին, որ ՀՀՇ-ի խամաճիկն են եղել: Նրանք վկայակոչում են իրենց անկախ օրակարգը և Ազգային ժողովում հաճախ ընդդիմադիր հայացքների արտահայտումը:

«Մենք ՀՀՇ-ից չենք եղել երբեք, մենք ոչ մի տեղից չենք եղել, դրա համար շատ անկախ էինք, ոչ նրանց հեղինակություններն էինք ընկալում, ոչ հասկանում, ոչ էլ մեզ հետաքրքրում էր: Մենք անկախ էինք գործում, քվեարկում էինք հաճախ նաև ՀՀՇ-ի կարծիքին դեմ»:

«Շամիրամ» կուսակցության անդամ

Այնուամենայնիվ, չի ժխտվում այն փաստը, որ կուսակցությունը ստեղծվել է 1995 թվականի ընտրությունների նախաշեմին՝ նպատակ ունենալով մասնակցել ընտրություններին և առաջին գումարման Ազգային ժողովում ունենալ ներկայացվածություն: Վկայակոչվում է նաև Վանո Սիրադեղյանի՝ Ազգային ժողովում թարմություն և նոր ներուժ ներգրավելու նպատակը:

1. **Հակոբյան Թ.**, 20 տարի առաջ այս օրը՝ 1995 թ.-ի հուլիսի 5-ին, կայացան անկախ Հայաստանի խորհրդարանական առաջին ընտրությունները, հուլիսի 5, 2015:

«Շամիրամին» հանդիպած խոչընդոտների գեղեցիկությունը ուղղվածությունը

«Շամիրամը» իր գործունեության ամբողջ ընթացքում բախվել է բազմազան խոչընդոտների հիմնականում այն պատճառով, որ կանանց կողմից ստեղծված կուսակցություն է եղել: Գեղեցիկություն հիմքով կարծրատիպերն ու խտրականությունը նրանք իրենց մաշկի վրա են զգացել: Կուսակցության անդամները պարզ հիշում են իրենց հասցեին հնչող բազմաթիվ հեղուկանքները, քննադատություններն ու տհաճ խոսքերը: Նման խոսակցությունները ծավալվում էին կուսակցության ցանկացած քայլի վերաբերյալ: Կուսակցությունը հասարակության կողմից քննադատվել է և՛ անվան, և՛ ԱԺ-ում հայտնվելու պատճառով, և՛ ծավալած գործունեության համար:

«... Ասացին՝ Էս սրանք ով են, որ եկել են, մեր տեղերը գրավել են»:

«Շամիրամ» կուսակցության անդամ

Կուսակցության «օտարամուլ» անվանումը: «Շամիրամ» կուսակցությունը բազմիցս քննադատվել է անվանման ընտրության պատճառով: Քննադատությունների հիմնական պատճառը կուսակցության անվանման օտարածին լինելն էր, ավելին՝ այն դիտարկվում էր որպես թշնամական անվանում՝ հիշատակելով Պարսկաստանի Շամիրամ թագուհուն, որը սպանել է հայոց թագավոր Արային, հետևաբար կուսակցությունը քննադատվում էր թշնամու անունը որպես կուսակցության անվանում կիրառելու համար:

Կուսակցության անվանակոչման նախահիմքում, սակայն, ուժեղ կնոջ և քաղաքական առաջնորդի կերպար էր դիտարկվել:

«Շամիրամ որոշեցինք, քաղաքական գործիչ լինի, ոչ թե Անահիտ՝ մայրության աստվածուհի, կամ Նահատակված կանայք: Ուզում էինք ուժեղ կնոջ կերպար լինի»:

«Շամիրամ» կուսակցության անդամ

«Վիուկների որսը»: Կուսակցության անվանման հետ կապված քննադատություններով չեն սահմանափակվում «Շամիրամի» դեմ հասարակական ճնշման դրսևորումները: Հասարակական կարծրատիպացված դիրքորոշումները քաղաքականության մեջ ներգրավված կանանց վերաբերյալ գլուխ են բարձրացնում: Գեղեցիկություն ամրագրված դերերը, որոնք չեն հանդուրժում քաղաքականության մեջ ներգրավված կանանց, դիտարկելով նրանց որպես իրենց գեղեցիկություն դերին հակադրվող անհատներ՝ այս ժամանակահատվածում իրենց դրսևորում են ստանում կուսակցության անդամ կանանց հասցեին հնչած մի շարք բնորոշումների տեսքով: Նրանց պիտակավորում էին՝ անվանելով «ագրեսիվ լրբերի հավաքածու»՝ նրանց հակադարձելով հնազանդ և խոհեմ էակների ավանդապես ամրագրված գեղեցիկություն դերը, որը հեռու էր քաղաքականություն կոչվող «կեղտոտ» խաղից, քանի որ այն տղամարդկային ոլորտ է:

Քաղաքականության մեջ կնոջ կերպարը դժվար ըմբռնելի է հասարակական ընկալումներում կնոջ՝ սեփական ուժերով և մտքի զորությամբ քաղաքականության մեջ ներգրավված լինելը գրեթե անհնար է համարվում, ինչին հետևում է քաղաքականության մեջ ներգրավված կանանց մասին առասպելների բազմազանությունը: Նրանց փառքերը վերագրվում են աջակից տղամարդկանց՝ կանանց դիտարկելով որպես սիրուհիներ: Շամիրամի անդամները զերծ չեն մտացել նմանօրինակ առասպելներից: Կուսակցության անդամները վերհիշում են իրենց մասին լրատվամիջոցներով հնչող առասպելներն առ այն, որ նրանք այս կամ այն քաղաքական գործչի կամ մեծահարուստի սիրուհիներն են կամ հովանավորյալները: Իսկ կուսակցության մասին կար մի ընդհանուր պիտակավորում՝ «Վանոյի հարեմը»՝ որպես Վանո Սիրադեղյանի քմահաճույքներն ու ցանկություններն ի կատար ածող կանանց ամբողջություն:

«Թերթերն իմ մասին ինչ ասես գրում էին, անգամ «անբարոյական» էին անվանում: Թերթերից մեկը երկու անգամ «նվիրեց» ինձ «Նաիրի» կինոթատրոնը: Առաջին անգամ գրել էին, որ Վանո Սիրադեղ-

յանն այն ինձ նվիրել է Մարտի 8-ի կապակցությամբ, մի քանի ամիս անց՝ հոկտեմբերին, նույն թերթը գրեց, որ նա «նվիրել է» ինձ «Նաիրին» արդեն ծննդյան օրվա կապակցությամբ²»:

«Շամիրամ» կուսակցության անդամ

Հատկանշական է, որ կուսակցությունը ոչ միայն հասարակության ճնշմանն է ենթարկվել, այլև իր վրա է զգացել կանանց հասարակական կազմակերպությունների և խորհրդարանականների քննադատությունը:

Կուսակցության անդամները կանանց կազմակերպությունների գայրույթը բացատրում են այն փաստարկով, որ Վանո Սիրադեղյանը նախապատվությունը տվել է կուսակցության անդամ հանդիսացող կանանց և ոչ թե իրենց:

«Կանանց հասարակական կազմակերպություններ կային, որոնք կատաղել էին, որ, ասենք, մենք էսքան տարի գոյություն ենք ունեցել, ինչո՞ւ Վանոն նրանց տարավ էստեղ «խցկեց», մեզ չտարավ»:

«Շամիրամ» կուսակցության անդամ

Ազգային ժողովում անցած ուղին ևս հարթ չի անցել: Կուսակցության անդամներին սվիններով են դիմավորել այնտեղ: Նրանց կարծիքով՝ նման վերաբերմունքի պատճառները բազմազան են: Պատգամավորները չէին հանդուրժում իշխանության կիսումը Նորաթուխ կուսակցության անդամների, այն էլ՝ կանանց հետ, որոնք մասնագիտական մեծ ներուժ ունեին, սակայն խորհրդարանական աշխատանքի մեջ թերաճում էին: Կուսակցության անդամները, սակայն, վկայակոչում էին, որ վերաբերմունքը տարիների ընթացքում փոխվել է իրենց աշխատասիրության և պատասխանատվության բարձր մակարդակի շնորհիվ, նրանք անգամ քաղաքական մշակույթ են փոխել խորհրդարանում

2. Արարատյան Ա., «Աժ ընտրություններ՝ v1.0-v4.0»՝1995 թվականի ընտրությունները», Mediamax.am, ապրիլի 5, 2012:

միաժամանակ դառնալով զսպող օղակ տղամարդ պատգամավորների վեճերի ուժգնացման դեպքերում: Նշված հանգամանքը ակամայից կանանց ամրագրում է նոր՝ զսպող օղակի դեր: Չսպող օղակի դերը կարծես թե բոլոր ժամանակներում վերագրվում է խորհրդարանական կանանց: Այս մասին են վկայում նաև թեմային առնչվող այլ հետազոտություններ:

Կուսակցության անդամները վստահեցնում են, որ կանանց կուսակցությունների և կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ դիրքորոշումները անփոփոխ են մնացել: Նրանք համոզված են, որ եթե հիմա էլ ստեղծվի կանանց կուսակցություն, ապա այն նույն ճնշմանը կենթարկվի, ինչ իրենց կուսակցությունը: Նրանց համոզմամբ հասարակության մեջ դեռևս չի ձևավորվել քաղաքացիական գիտակցություն, հարգանք անհատի նկատմամբ՝ անկախ նրա սեռից: Կին քաղաքական գործիչների գործունեության նկատմամբ ավելի խիստ վերահսկումը և սխալականության չընդունումը, նրանց փոքր վրիպումների շուրջ ավելի քննադատական մոտեցումը վերահաստատվում են նաև կուսակցության անդամների կողմից: Նրանց կարծիքով՝ կանանց սխալների նկատմամբ անհանդուրժողականությունը անփոփոխ ձևով մտնում է խիստ: Եթե կինը սխալվեց, «շան լափը թափում են գլխին», տղամարդու նույն սխալի համար քննադատությունը թեթև է կամ ընդհանրապես բացակայում է: Նրանց համոզմամբ բոլոր ժամանակներում կանանց կուսակցության կայացման համար անհրաժեշտ է իշխանական ուժերը «թիկունք», այլապես հայրիշխանական հասարակական ճնշման և տղամարդ գործընկերների բացասական տրամադրվածության պատճառով կինը հետ է մղվում հասարակական նորմերով իր համար նախատեսված տեղը:

«Հիմա որ էլի ստեղծվի, էլի կլինի [ընդդիմություն], որովհետև էս հասարակությունը, ինչքան էլ ուզում է լինի, հանդուրժելու, լսելու կուլտուրա չունի, մենք քաղաքացիական չենք, չենք հասկանում, որ նորմալ մարդը՝ կին լինի, թե տղամարդ, լավ ա, որ ինքը կա, եթե ինքը կայացած ա, ուրեմն խնդիր չունի նրա միջոցով կայանալու, հակառակը, կարա՞ օգուտ տա»:

«Շամիրամ» կուսակցության անդամ

Կուսակցության քաղաքական օրակարգը. որքանով էր այն ֆեմինիստական

5000 անդամ ունեցող «Շամիրամ» կուսակցությունը տարբեր կրթություն, մասնագիտություն ու աշխատանքային փորձ ունեցող կանանց շարժում էր, որն իր առաջ խորհրդարանում ներկայացուցչականություն ունենալու կարևորագույն նպատակ էր դրել: Սակայն կուսակցության նպատակադրումը և գործունեությունը միայն ընտրություններին մասնակցելով չէին սահմանափակվում: Կուսակցությունն իր առաքելությունն էր համարում աշխատել երկրի բարօրություն համար, օրինակ՝ բարձրաձայնել փոքր բիզնեսի զարգացման, բանակի և սոցիալական խնդիրների լուծման հարցեր, կուսակցությունը նաև բարեգործական գործունեություն է ծավալել: Խնդիրների բազմազանությունը մեծապես պայմանավորված էր նրանով, որ կուսակցության հովանու ներքո հավաքվել էին բազում հետաքրքրությունների և մասնագիտությունների տեր կանայք, որոնք բարձրաձայնում էին իրենց ոլորտի խնդիրները, և դրանք մտցնում էին կուսակցության օրակարգ: Չնայած նրան, որ կուսակցությունը զբաղվում էր ցանկացած քաղաքացու խնդրով, կանանց հարցերը առաջնային տեղում էին դիտարկվում: Այնուամենայնիվ, «Շամիրամի» քաղաքական օրակարգը չի կարելի անվանել ֆեմինիստական: Ավելին՝ կուսակցության անդամ, երգչուհի Նադեժդա Սարգսյանն իր հարցազրույցներից մեկում նշել է. *«Շատերը մեզ «ֆեմինիստուհիներ» էին անվանում, սակայն մենք միշտ քարոզում էինք ուժեղ տղամարդու կերպարը»*³:

Քաղաքական նպատակների առումով ևս կուսակցությունը գերծ էր մտում կուսակցական և իշխանական շահերից՝ իր նպատակը համարելով «պետական շահին ծառայելը»: Կուսակցության անդամներն իրենց հաջողության գրավականը տեսնում են հենց նրանում, որ քաղաքական առաջնադասման նպատակներ չէին հետապնդում, հետևաբար նաև ազատ էին արտահայտելու իրենց կարծիքները նույնիսկ այն դեպ-

3. Արարատյան Ա., «Աժ ընտրություններ՝ v1.0-v4.0»՝1995 թվականի ընտրությունները», Mediamax.am, ապրիլի 5, 2012:

քում, երբ դրանք ընդդիմադիր էին քաղաքական հոսանքին:

Կուսակցության լուծարման պատճառը հավանաբար քաղաքական գործունեության պակասն էր, ինչի արդյունքում կուսակցության անդամները շարունակեցին զբաղվել այն գործով, որով զբաղվում էին կուսակցության գործունեությունից առաջ:

Այսպիսով, «Շամիրամ» քաղաքական կուսակցության կարճաժամկետ գործունեության ուսումնասիրությունը Հայաստանում գենդերային անհավասարության ամբողջական դրսևորման վառ օրինակ է: Մեկ կուսակցության օրինակի վրա ցույց են տրվում այն բոլոր խոչընդոտները, որոնց բախվում է կինը քաղաքականության ոլորտում: Չնայած կուսակցությունը գոյություն է ունեցել 1990-ական թվականներին, դեպքի քննարկումը ժամանակավրեպ չէ, ավելին՝ հնարավորություն է տալիս պատմական անդրադարձ կատարելու անկախ Հայաստանի պատմության մեջ կանանց քաղաքական ներգրավվածության և մասնակցության հեռանկարներին և մարտահրավերներին: «Շամիրամի» դեպքը ևս մեկ անգամ ահազանգում է հասարակության մեջ ամրագրված գենդերային կարծրատիպերի խոչընդոտող ուժի մասին՝ շեշտադրելով գենդերային հավասարությանն ուղղված քաղաքականության կիրարկման, քաղաքական կամքի դրսևորման կարևորության, ինչպես նաև կանանց շարժման ձևավորման արդիականության մասին:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չետագոտությունն ուղղված է պարզելու Չայաստանի քաղաքական կուսակցություններում և քաղաքական նախաձեռնություններում կանանց առաջխաղացմանը նպաստող հնարավորություններն ու դրանց վրա ազդող գործոնները: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է հանգել մի շարք եզրակացությունների:

Քաղաքական միավորումների, հատկապես կուսակցությունների ներսում գենդերային բալանսավորումը հիմնականում համարվում է կեղծ կատեգորիա, որը ձևավորվում է պետական պարտադիր քվոտավորման արդյունքում: Կանանց ներգրավվածության համեմատաբար բարձր տոկոս նկատելի է հիմնականում այն ոլորտներում ու բաժիններում, որտեղ գերակշռում են թղթաբանական և ներկայացուցչական պարտականությունները: Քաղաքական միավորումներում չի նկատվում նաև գենդերային հատուկ քաղաքականություն, և, որ ավելի կարևոր է, չի դիտարկվում անգամ դրա անհրաժեշտությունը: Կանանց նվիրված օրերին և տոներին կանանց հանդեպ հատուկ ուշադրությունը ընկալվում է որպես «գենդերային կեղծ քաղաքականություն»:

Գենդերային հավասարության և քաղաքական ոլորտում գենդերային բալանսավորման մասին պատկերացումները հիմնականում արտացոլում են ընդհանուր հասարակական տրամադրություններն ու մոտեցումները: Այսինքն՝ տեսական մակարդակով խոսվում է գենդերային հավասարության ու դրա անհրաժեշտության մասին, սակայն գործնական հարթակում գենդերային հավասարությունը հիմնականում սահմանափակվում է կառույցի ստորին մակարդակում ներգրավվածությամբ: Ղեկավարման և որոշումների կայացման մակարդակում կանանց ներգրավվածությունը հազվադեպ արձանագրվող օրինաչափություն է:

Գենդերային հավասարության մասին նման մոտեցումները հավասարապես վերաբերում են թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց: Կանայք հիմնականում կրկնօրինակում են այն դիրքորոշումներն ու վարքային մոդելները, որոնք մեծ տարածում ունեն թե՛ հասարակությունում, թե՛ հենց իրենց անմիջական շրջապատում: Բացառություններ, բնականաբար, հանդիպում են, սակայն պետք է նշել, որ ընդհանուր պատկերի համատեքստում դրանք որևէ էական ազդեցություն չեն ունենում:

Հատկանշական է այն, որ քաղաքական ոլորտում ներգրավվելու, մասնավորապես քաղաքական կուսակցություններին անդամակցելու գործընթացներում կանանց մոտ նկատվել է ինքնազնահատակա-նի ակնհայտ բարձրացում, իսկ տղամարդկանց շրջանում ինքնազնահատականի հատկանշական փոփոխություն չի արձանագրվել, ինչն էլ մատնանշում է նրանց արդեն իսկ բարձր ինքնազնահատական ունենալու մասին:

Գենդերային հետաքրքիր տարբերություններ են նկատվել նաև առաջնորդության մասին պատկերացումների ու սեփական առաջնորդության կերպարի ընկալման դեպքերում: Ուշագրավ է, որ կանանց շրջանում իրենց՝ որպես ակնհայտ առաջնորդ դիտարկող կանանց թիվն ավելի մեծ է, քան տղամարդկանց շրջանում: Վերջիններիս մեծամասնությունը ավելի հակված է հիմնվելու հանրային կողմից իրենց՝ որպես առաջնորդ դիտարկվելու փաստի վրա՝ անտեսելով սեփական անձի մասին ընկալումները:

Քաղաքականապես ակտիվ մարդուն բնութագրելիս առանձնացվել են երկու հիմնական խմբեր՝

ա) պարզապես քաղաքացիներ, որոնք դրսևորում են քաղաքական ակտիվություն,

բ) քաղաքական գործիչներ:

Երկու խմբերին էլ տրվել են որոշակի բնութագրիչներ, որոնք կրում են գենդերային տարբերություններ, այսինքն՝ կանանց և տղամարդկանց առաջադրած բնորոշումներում նկատվել են որոշակի տարբերություններ, սակայն սկզբունքային բնութագրիչների տեսնակյունից առկա են նաև առանցքային նմանություններ:

Հատկանշական է այն, որ քաղաքական գործիչներին բնութագրելիս էական տարբերություններ և գենդերային զգայունություն չեն նկատվել, ինչպես նաև արձանագրվեց հասարակական կարծրատիպային մոտեցումների և բնութագրիչների գերակշռում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում:

Քաղաքական կարիերա սկսելու շարժառիթները նկարագրելիս տարբերությունները հիմնականում կուսակցություն-նախաձեռնություն համեմատության տիրույթում են և զերծ են գենդերային կրթական գն-րից: Կուսակցություններին անդամակցումը քաղաքական ոլորտում հիմնականում որևէ դերակատարում և ակտիվություն ցուցաբերելու շարժառիթով է պայմանավորված, մինչդեռ քաղաքական նախաձեռնություններին անդամակցելը քաղաքական ոլորտում լուրջ, էական ու անհրաժեշտ փոփոխություններ կատարելու ձգտում ու նպատակ է հետապնդում:

Քաղաքական միավորումներում առաջխաղացման առումով գենդերային որոշակի տարբերություններ նույնպես նկատվեցին հատկապես միջին օղակից բարձր առաջխաղացման տեսանկյունից: Եթե ստորին օղակից միջին օղակ «տեղափոխությունը» հիմնականում կախված չէ անհատի սեռից, աշխատասիրությունից ու ձգտումներից, ապա միջինից վերին օղակ «տեղափոխությունը» մեծապես կախված է «երրորդ» կողմից, այն է՝ հանրագումարների ժամանակ վերջնական որոշում կայացնողներից:

Քաղաքական կուսակցությունների և նախաձեռնությունների ներսում անդամների սոցիալական կապերի ձևավորումը ևս հետաքրքիր բնույթ է կրում: Ինչպես ներկուսակցական, այնպես էլ միջկուսակցական ընկերական հարաբերությունների ձևավորումից բացի՝ հաճախ այդ փոխհարաբերությունները վերաճում են ընտանեկան, խնամիական և կնքահայր սանիկ հարաբերությունների: Այս պնդումը ճիշտ է թե՛ ավագ, թե՛ երիտասարդ սերնդի համար: Ինչ վերաբերում է ուղղահայաց և հորիզոնական սոցիալական կապերի և փոխհարաբերությունների ընդհանրական պատկերին, ապա այն կարելի է համարել դրական և կառուցողական, քանի որ ոչ կառուցողական լուրջ կոնֆլիկտներ հիմ-

Նականում չեն արձանագրվում, իսկ աշխատանքային կոնֆլիկտները, արդյունավետ աշխատանքի ձևավորումից զատ, որևէ էական բացասական ազդեցություն չեն ունենում:

Քաղաքական որոշումների կայացումը դիտարկվում է երկու մակարդակներում՝ ա) քաղաքական կառույցի ներսում և բ) երկրում: Երկրում որոշումների կայացման գործընթացին մասնակցությունը ընդդիմադիր կառույցների համար անհասանելի է թվում՝ հաշվի առնելով, նրանց օտարումը իշխանությունից: Արդյունքում գենդերային հիմնախնդիրներն ու հավասարությունը անցնում են երկրորդային պլան՝ իրենց տեղը զիջելով անհետաձգելի համարվող մեկ նպատակի՝ իշխանավորության: Այս պայթարը գենդերային որևէ ուղղվածություն չունի:

Կուսակցության կամ նախաձեռնության ներսում կառավարման ցանկացած համակարգի դեպքում որոշումները ընդունվում են բազմակարծության միջավայրում մեծամասնական քվեի միջոցով՝ այդպիսով բացառելով քաղաքական կառույցի ղեկավարի միանձնյա որոշումների կայացման հնարավորությունները՝ վկայակոչելով մեծամասնության կողմից որոշումների կայացման մեխանիզմի արդյունավետ գործարկումը: Եվ չնայած կանանց թիվը քաղաքական կառույցի ստորին և միջին օղակներում համեմատաբար մեծ է, այնուամենայնիվ նշանակալի որոշումների կայացման գործընթացում նրանց ներգրավվածությունը կտրուկ նվազում է: Միաժամանակ ներկառույցային գենդերային անհավասարության մասին հետազոտության մասնակիցների կողմից որևէ հիշատակում չկա:

Ինչ վերաբերում է քաղաքական նպատակներին, ապա վերջիններս հիմնականում վերացարկված են. նկատվում է որոշակիության և հստակության պակաս: Հաճախ արձանագրվում է սեփական նպատակների համընկնում անդամակցած կառույցի նպատակների հետ: Քաղաքական նպատակներում որոշակի հստակություն արձանագրվում է հիմնականում վերին և երբեմն նաև միջին օղակի ներկայացուցիչների մոտ: Քաղաքական նպատակների գենդերային առանձնահատկություններ նույնպես չեն նկատվել:

Այսպիսով՝ քաղաքական նպատակներում որոշակիության բա-

ցակայությունը կանխատեսում է նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների և մարտավարությունների ձևակերպման խրթինություն, հետևաբար նաև իրագործելիության հնարավորության սահմանափակում:

Այսպիսով՝ հետազոտությունը ցույց տվեց, որ կանանց ներգրավվածությունը քաղաքական ոլորտում իրականում ցածր է, և առկա տոկոսն էլ կառուցակցված քվտայի կիրարկման արդյունք է: Գենդերային քաղաքականության բացակայությունն ու վերին օղակում որոշումների կայացման գործընթացում կանանց ցածր ներգրավվածությունը բացառում է քաղաքական ոլորտում գենդերային հավասարության խոսույթի (դիսկուրսի) սրընթաց տարածումը: Նվազ շոշափելի է նաև քաղաքական դաշտում գենդերային զգայունությունը, ինչի արդյունքում ստեղծվում են կեղծ կատեգորիաներ և կանանց ոչ նպատակային ներգրավվածություն քաղաքական ոլորտի ոչ ազդեցիկ և որոշիչ օղակներում: Արդյունքում ՀՀ քաղաքական ոլորտը շարունակում է մտալ հայրիշխանական բնույթի՝ մերթընդմերթ քողարկվելով գենդերային հավասարության արհեստական դրսևորումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- **Արարարատյան Արամ**, «ԱԺ ընտրություններ՝ v1.0-v4.0»՝ 1995 թվականի ընտրությունները, 05.04.2012:
- **Գենդերային հետազոտություններ**, խմբ. Ջ. Հասրայան, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, (N2), Երևան, 2001:
- **Ճատուրյան Ռուզաննա**, **Գենդերային դերերը Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի դասագրքերում**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 2012:
- **Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին**, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», **Գենդերային հետազոտությունների կենտրոն**, Երևան, 2012:
- «Հայաստանի գենդերային բարոմետր», **Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոն**, Երևան, 2015
- **ՀՀ ազգային վիճակագրության ծառայություն**, 2015:
- **Ղազարյան Գայանե**, **Կանանց կողմից քաղաքական իրավունքների իրացման հիմնախնդիրը ՀՀ-ում** (սոցիոլոգիական հետազոտություն), Երևան, 2013:
- **Միքայելյան Հրանտ**, 2011, **Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ**, Կովկասի ինստիտուտի առցանց հրապարակում, N 6, Երևան:
- **Նիկողոսյան Արթուր**, **Գենդերային հետազոտություններ**, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա», Երևան, 2005:
- **Aslanyan Svetlana**, **Women's Rights in Armenia**. *Social Watch*.

- **Bryson Valerie** (2003), *Feminist Political Theory: An Introduction*. Palgrave Macmillan Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (1979).
- **Conway Margaret** (2001), *Women and Political Participation*. *Political Science and Politics*, Vol./Issue 02.
- **Duban Elizabeth** (2010), *Gender Assessment: USAID/Armenia*.
- *Gender Studies in Armenia 2003* (ed. Hasratyan, Jemma). Association of Women with University Education (N2), Yerevan.
- **Hasratyan Jemma, Zakaryan Lilit, Hovnatanyan Tamara, Armaghanova Gayane**, *Women's Political Participation in Parliamentary Elections in 2012*. Association of Women with University Education, Yerevan.
- **Hawkesworth Mary** (2010), *From Constitutive Outside to the Political of Extinction: Critical Race Theory, Feminist Theory, and Political Theory*. *Political Research Quarterly*, 63 (3).
- **Hirschmann Nancy J.** (1989), *Freedom, Recognition, and Obligation: A Feminist Approach to Political Theory*. *American Political Science Review*, Vol. 83, Issue 04.
- **Hovhannisyan Hovhannes, Zakaryan Lilit, Osipov Vladimir** (2011), *Gender Dimensions of Socio-Political Participation in Armenia*. UNFPA, OSCE, Yerevan.
- **Inglehart Ronald, Norris Pippa** (2000), *The developmental theory of the gender gap: women's and men's voting behavior in global perspective*. *International Political Science Review*, Vol. 21, N 4.
- **Ishiyama John T.** (2003), *Women's Parties in Post-Communist Politics*. *East European Politics and Societies and Cultures*. Vol. 17, N 2.
- **Ishkanian Armenuhi** (2003), *Gendered Transitions: The Impact of the Post-Soviet Transition on Women in Central Asia and the Caucasus*. *Perspectives on Global Development and Technology*, Vol. 3, Issue 3.
- **Iwanaga Kazuki** (ed.) (2008), *Women's Political Participation and*

Representation in Asia: Obstacles and Challenges. Nordic Institute of Asian Studies.

- **Kirakosyan Sevak, Margaryan Nvard**, *Moral Mistresses of The Kitchen: Eyewink Into the Past*. As You E-magazine.
- **Kitschelt Herbert**, 1995.
- **Ko'sa'-Kova'cs Magdolna** (2004), *The Situation of Women in the Countries of Post-Communism Transition*. Report, Council of Europe, Parliamentary Assembly.
- **Mark Jones P.** (1998), Gender Quotas, Electoral Laws, and the Election of Women: Lessons from the Argentine Provinces. *Comparative Political Studies*, 31 (1).
- **Matland Richard E, Montgomery Kathleen** (2003), Women's Access to Political Power in Post-Communist Europe. Oxford Scholarship Online.
- **Matosian Maro, Kazhoyan Perchuhi, Harutyunyan Gayane** (2013), Sociological Survey on Gender Attitudes and Stereotypes in Armenia. Women's Support Center, Yerevan.
- **Mkhitarian Armine, Zakaryan Lilit** (2006), *Gender Indicators of Armenian Local Government Institutions*. Eurasia Foundation, Yerevan.
- **Nikoli-Ristanovi Vesna** (2004), *Post-Communism: Women's Lives in Transition* (special issue of Feminist Review, N 76).
- **Niven David** (2000), *The Missing Majority: The Recruitment of Women as State Legislative Candidates*. Praeger Publishers.
- **Pande Rohni, Ford Deanna** (2011), Gender Quotas and Female Leadership: A Review. *Harvard University*.
- Participation of women in public and political life in the Republic of Armenia 2013. *Yerevan School of Political Studies of the Council of Europe, "Press Club Ararat"*.
- **Pateman Carol** (1989), *The Disorder of Women*. Stanford University Press.
- **Paxton Pamela, Kunovich Sheri, Hughes Melanie** (2007),

Gender in Politics. *The Annual Review of Sociology*. Fall (8).

- **Phillips Anne** (1998), *Feminism and Politics*. Oxford University Press.
- **Pittman Alexandra** (2013), *Exploring Women's Rights and Feminist Movement Building in Armenia: Learning from the Past and Strategizing for the Future*. Open Society Foundations- Armenia.
- **Ritter Gretchen, Mellow Nicole** (2000), *The State of Gender Studies in Political Science. The ANNALS of the American Academy of Political and Social Science*, Vol. 571, N 1.
- **Sinopoly Richard, C. Hirschmann Nancy J.** (1991), Feminism and Liberal Theory. *American Political Science Review*, vol. 85. Issue 01.
- **Sloat Amanda** (2005), Fixing an Old Divide: *The Political Participation of Women in an Enlarged Europe*.
- **Judith** (2000), *Gender in Political Theory*. Polity Press.
- **Tolleson-Rinehart Sue, Carrol Susan J.** (2006), Far from Ideal. The Gender Politics of Political Science. *American Political Science Review*, Vol. 100, N 4.
- **Tucker Ericka** (2014), Feminist Political Theory. *The Encyclopedia of Political Thought* (published online on 15 SEP 2014).
- United Nations Children's Fund, The State of the World's Children 2004.
- Women in Parliament: Beyond Numbers (2005); The International Institute for Democracy and Electoral Assistance (International IDEA), Sweden, pp. 142-144.
- *Women's Political Participation and Representation in Asia Obstacles and Challenges* Edited by Iwanaga, K. Nordic Institute of Asian Studies 2008.
- World Value Survey Armenia (2010-2014).

